

ԹԵՐԵՉԸ ՅԻՍՈՒՍ ՄԱՆԿԱՆ

# ԵՐԴԵԼ ՏԻՐՈՉ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

(Ի ն ք ն ա կ ե ն ս ա գ ռ ա կ ա ն ձ ե ռ ա գ ռ ե ռ ը)

ՄԱՍՆ Զ.



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

**[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)**

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Մաշտոց Ասիտ Ղազարեան*

## ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՁԵՌԱԳԻՐԸ

*ուղղուած Մայր Մարիամ Գոնձակային*

## 1. ՎԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՅՈՒՇԵՐԸ (1897)

Զօն – Մայր Մարիամ Գոնձակայից ստացած խստակրօն դաստիարակությունը – Աստուածային վերելակը – Առաքելությունը նորընծաների մօտ – Փեսայի գալստեան ատեուսը – Հաւատքի փորձությունը – Անտարբերությունը կարճ կամ երկար, սիրելի քոյրերից հեռու կամ նրանց մօտ անցկացուած կեանքի նկատմամբ – Ապահովություն եւ խաղաղություն հնազանդութեան մէջ – Թէ ինչում է կայանում իրական կատարեալ Սէրը

**Յ. Մ. Յ. Թ.**

**Յունիս 1897թ.**

266. Մայր իմ շատ սիրելի<sup>1</sup>, փափաքեցիք, որ ձեր հետ լրացնեմ Տիրոջ ողորմութեան գովերգը<sup>2</sup>: Այս թովիչ երգը սկսել էի թանկագին դասերդ՝ քոյր Ագնէսի հետ, որն Աստուծոյ կողմից նշանակուել էր ինձ մայր, առաջնորդելու համար ինձ մանկութեանս օրերում: Նրա հետ է, որ պէտք է երգէի Սուրբ Կոյսի կողմից այս փոքրիկ ծաղիկին տրուած շնորհները, երբ ծաղիկը դեռ իր կեանքի գարունն էր ապրում, բայց ձեր հետ է, որ երգելու եմ այդ փոքրիկ ծաղիկի երջանկութիւնն այժմ, երբ արշալոյսի երկչոտ շողերին յաջորդելու են եկել կէսօրուայ կիզիչ ճառագայթները: Այո՛, ձեր հետ, շատ սիրելի Մայր, եւ ձեր փափաքին պատասխանելու համար<sup>3</sup>, կը փորձեմ կրկին յայտնել հոգուս զգացումները, երախտագիտութիւնս Աստուծոյ հանդէպ, նաեւ ձեր հանդէպ, որ իմ համար Նրա ներկայացուցիչն էք տեսանելի կերպով: Մի՞թէ ձեր մայրական ձեռքերի մէջ չէր, որ ամբողջովին նուիրուեցի Տիրոջ ծառայութեանը: Յիշո՞ւմ էք, Մայր իմ, այդ օրը<sup>4</sup>: Զգում եմ, որ ձեր սիրտը չէր կարող մոռանալ այն: Իսկ ինչ վերաբերուում է ինձ, ստիպուած եմ սպասել գեղեցիկ Երկնքին, որովհետեւ այստեղ ներքեւում չեմ գտնում բառեր, կարող՝ արտայայտելու այն՝ ինչ տեղի ունեցաւ սրտումս այդ օրհնեալ օրուայ ընթացքում:

267. Մայր թանկագին, կայ մի ուրիշ օր եւս, որում հոգիս աւելի միացաւ ձերինին (եթէ, անշուշտ, այդ «աւելի»ն հնարաւոր է), եւ եղաւ այն օրը, որում Յիսուս կրկին ձեր ուսերին դրեց մեծաւորութեան բեռը: Այդ օրը սերմանեցիք արցունքների մէջ, բայց Երկնքում լիանալու էք ուրախութեամբ, տեսնելով ձեզ ցորենի թանկարժէք խուրցերով ճոխացած<sup>5</sup>: Ով Մայր իմ, ներող եղէք ինձ մանկական պարզութեանս համար. զգում եմ, որ թոյլատրում էք ինձ խօսել առանց փնտռելու այն՝ ինչ երիտասարդ միանձնուհուն թոյլատրուած է ասել իր Մեծաւոր Սօրը: Թերեւս գրութեանս մէջ երբեմն դուրս կը գամ ենթակաների համար գծուած սահմաններից, բայց համարձակում եմ ասել ... որ ձեր յանցանքն է: Զեր նկատմամբ վարում եմ ինչպէս մի մանուկ, որովհետեւ դուք ինքներդ իմ նկատմամբ չէք վարում որպէս Մեծաւորուհի, այլ՝ որպէս Մայր:

<sup>1</sup> Մայր Մարիամ Գոնձական, որը Մեծաւորուհի էր վերընտրուել 1896ի Մարտի 21ին, Սրբուհու քրոջ՝ մայր Ագնէս Յիսուսի եռամեայ կառավարումից յետոյ:

<sup>2</sup> Սղմ 88, 1

<sup>3</sup> Թերեզային հրամայուեց շարունակել իր յուշերի գրառումը 1897ի Յունիսի 3ին:

<sup>4</sup> Սրբուհին ի նկատի ունի իր վանական ուխտագրութեան օրը՝ 1890ի Սեպտ. 8ը:

<sup>5</sup> Հմմտ. Սղմ 125, 5-6: Թերեզան մեծ նրբութեամբ ակնարկում է մայր Մարիամ Գոնձակայի բաւական դժուար վերընտրութեանը:

268. Ա՛հ, լաւ եմ գգում, Մայր սիրելի, Տէրն Ինքն է, որ խօսում է ինձ ձեր միջոցով: Քոյրերից ոմանք կարծում են՝ թէ չփացրել էք ինձ, թէ այն օրից ի վեր՝ ինչ մտել եմ օրհնեալ տապան, ձեզնից փաղաքշանք ու գովասանքներ եմ միայն ստացել: Բայց այդպէս չէ: Կը տեսնէք, Մայր իմ, այն տետրում, որն իրենում բովանդակում է մանկութեանս յուշերը, թէ ես ինքս ինչ կարծիքի եմ այն անաչառ ու մայրական դաստիարակութեան վերաբերեալ, որ ստացայ ձեզնից: Սրտիս ամենահեռաւոր խորքերից երախտագիտութիւնս եմ յայտնում ձեզ, ինձ երբեք չինայելու համար: Յիսուս լաւ գիտէր, որ Իր խեղճ ծաղիկին անհրաժեշտ էին նուաստացման կենագործիչ ջրերը, որովհետեւ այն շատ տկար էր՝ առանց այդ օգնութեան արմատներն հողում ամրացնելու համար: Եւ ձեր միջոցով էր, Մայր իմ, որ ինձ շնորհուէց այդ բարիքը:

269. Մէկուկէս տարուց ի վեր, Յիսուս կամեցաւ փոխել Իր ծաղիկն աճեցնելու կերպը: Անկասկած նրան բաւական ոռոգուած գտաւ, որովհետեւ այժմ արեւն է, որ ուռճացնում է նրան: Յիսուս նրան Իր ժպիտն է միայն պարգեւում, եւ դա նոյնպէս ձեր միջոցով, Մայր սիրելի:

Մաղիկը, նուազելու փոխարէն, այս քաղցր արեւի տակ ուժեր է ստանում սքանչելի կերպով, իր թերթիկներից կազմուած բաժակի խորքում նա պահում է ստացած մեծարժէք ցօղի կաթիլները, եւ այդ կաթիլները նրան միշտ յիշեցնում են, որ փոքր է ու տկար: Բոլոր արարածները կարող են մեծ յաջողութեամբ դէպի նա խոնարհեցնել իրենց հայեացքները, զմայլուել նրանով, ընկճել նրան գովասանքներով: Չգիտեմ ինչու, բայց այս բոլորը չէր կարողանայ աւելացնել եւ ոչ իսկ մի կաթիլ կեղծ ուրախութիւն այն ճշմարիտ իրական բերկրանքին, որը նա վայելում է իր հոգու խորքում, տեսնելով իրեն այնպիսին՝ ինչպիսին է ըստ աստուածային գնահատման. խեղճուկրակ փոքրիկ ոչնչութիւն, եւ ոչինչ աւելի: Ասում եմ՝ թէ չեմ հասկանում ինչու, բայց պատճառը թերեւս այն չէ՞, որ նրան չտրուեց գովասանքների ջուրն այն ամբողջ ժամանակուայ ընթացքում, երբ իր փոքրիկ բաժակը դեռ բաւականին լի էր խոնարհութեան ցօղով: Այժմ վտանգներ այլեւս չկան, ընդհակառակն՝ փոքրիկ ծաղիկն այնքան քաղցրահամ է գտնում ցօղը, որով լի է, որ մեծ աչալընթեամբ գգուչանում է գովասանքների անհամ ջրերի հետ փոխանակելուց:

270. Չեմ ուզում խօսել, Մայր սիրելի, այն սիրոյ ու վստահութեան մասին, որ դուք ցուցաբերում էք իմ նկատմամբ: Մի՛ կարծէք՝ թէ ձեր դստեր սիրտն անզգայ է, ո՛չ, այլ պարզապէս զգում եմ թէ այժմ կարող եմ չվախենալ ոչնչից, ընդհակառակն՝ կարող եմ վայելել դրանք, Տիրոջը վերագրելով այն բարին, որ Նա Ինքը կամեցաւ ստեղծել ինձնում: Եթէ Նրան հաճելի է ինձ աւելի լաւ թուացնել՝ քան եմ իրականում (սա ինձ չի վերաբերում), ազատ է վարուելու այնպէս՝ ինչպէս կամենում է: Ա՛հ, Մայր իմ, որքան տարբեր են ճանապարհները, որոնցով Աստուած առաջնորդում է հոգիներին: Սրբերի կենսագրութիւններում տեսնում ենք, որ կան նրանց մէջ շատերը, որ չեն ցանկացել իրենց մահից յետոյ թողնել ոչինչ, ոչ մի փոքրիկ յիշատակ, ոչ մի փոքրիկ գրութիւն: Բայց նաեւ ընդհակառակն, կան ուրիշներ, որոնք, ինչպէս մեր Մայր Սրբուհի Թերեզան<sup>1</sup>, հարստացրին Եկեղեցին իրենց վսեմ յայտնութիւններով, չվախենալով հռչակել Թագաւորի գաղտնիքները<sup>2</sup>, որպէսզի Նա աւելի լաւ ճանաչուի ու աւելի սիրուի հոգիների կողմից: Սրբերի այս

<sup>1</sup> Տե՛ս՝ Ձեռագիր Ա, 2րդ գլխի թիւ 16 ծանօթագրութիւնը:

<sup>2</sup> Տբթ 12, 7

երկու տարբեր խմբերից ո՞րն է աւելի հաճելի Տիրոջը: Ինձ թւում է, Մայր սիրելի, թէ երկուսն էլ հաւասարապէս հաճելի են Նրան, որովհետեւ բոլորն էլ հետեւել են Սուրբ Հոգու ներշնչումներին, իսկ Տէրն Ինքն ասել է. «Ասացէք արդարին՝ թէ ամէն բան բարի է»<sup>1</sup>: Այո՛, ամէն բան լաւ է ու բարի, երբ Յիսուսի կամքն ենք միայն փնտռում: Այս է պատճառը, որից մղուելով ես՝ խեղճ փոքրիկ ծաղիկս, հնազանդւում եմ Յիսուսին, փորձելով հաճոյք պատճառել իմ սիրելի Մօրը:

271. Գիտէ՞ք, Մայր իմ, որ միշտ փափաքել եմ սրբուհի լինել, բայց աւա՛ղ, միշտ էլ նկատել եմ, երբ ինձ համեմատել եմ Սրբերի հետ, որ իմ ու նրանց միջեւ գոյուլթիւն ունի այն նոյն տարբերութիւնը, որ գոյուլթիւն ունի գագաթն ամպերում կորած լեռան ու անցորդների ոտքերի տակ կոխկոտուող աւազի նուաստ հատիկի միջեւ: Բայց վհատուելու փոխարէն, ասել եմ ինքս ինձ. «Մարդասէրն Աստուած չի ներշնչում անիրականանալի բաղձանքներ», հետեւաբար կարող եմ, փոքրկուլթեանս հակառակ, տենչալ սրբութեանը: Աւելի մեծանալ ինձ անհնարին է, պարտաւոր եմ համբերել ինձ այնպէս՝ ինչպիսին որ եմ, բոլոր թերութիւններովս հանդերձ: Բայց նաեւ ուզում եմ գտնել Երկինք գնալու մի միջոց, որ լինի ուղիղ, շատ կարճ, մի փոքրիկ ուղի՝ ամբողջովին նոր: Ապրում ենք գիւտարարների դարում, այլեւս չարժէ աստիճաններով բարձրանալ, հարուստների տներում վերելակները շահաւէտ կերպով փոխարինում են աստիճաններին: Ես նոյնպէս կ'ուզէի մի վերելակ գտնել, որն ի զօրու լինէր բարձրացնելու ինձ մինչեւ Յիսուս, քանի որ շատ փոքր եմ, կատարելութեան դժուարամատչելի աստիճաններով վեր բարձրանալու համար: Այնժամ սկսեցի Աստուածաշնչում տեղեկութիւններ փնտռել այն վերելակի շուրջ, որն առարկան էր իմ բաղձանքների, եւ յաւերժական Իմաստութեան կողմից արտասանուած ահա այս խօսքերը կարդացի. «Եթէ մէկը փոքրագոյն է, թող գայ իմ մօտ»<sup>2</sup>: Եկայ, յուսալով գտած լինել այն՝ ինչ փնտռում էի, եւ իմանալու համար, Աստուած իմ, թէ ի՞նչ ես անելու այդ փոքրագոյնների հետ, որոնք պատասխանում են կոչիդ: Շարունակեցի փնտռուածքս եւ ահա այն՝ ինչ գտայ. «Ինչպէս մայրն է գգւում իր մանկանը, այնպէս էլ ես եմ ձեզ մխիթարելու, կրելու եմ ձեզ իմ գրկում ու փայփայելու եմ ձեզ ծնկներիս վրայ»<sup>3</sup>: Ա՛հ, սրանցից աւելի գողտրիկ, աւելի քաղցրահնչիւն խօսքեր երբեք չէին եկել հոգուս հրճուանք պարգեւելու: Վերելակը, որ բարձրացնելու է ինձ մինչեւ Երկինք, Քո իսկ բազուկներն են, Յիսուս: Այո՛, այս իսկ պատճառով կարիք չունեմ մեծանալու. ընդհակառակն, հարկ է՝ որ մնամ փոքր, որ դառնամ միշտ աւելի ու աւելի փոքր:

272. Ո՛վ Աստուած իմ, Դու գերազանցեցիր իմ բոլոր յոյսերը եւ ես ուզում եմ գովբերել Քո ողորմութիւնը: «Դու կրթում ես ինձ մանկութիւնիցս ի վեր եւ մինչեւ այսօր պատմում եմ Քո հրաշքները: Ծերութեանս ու ալեւորութեանս մէջ մի՛ լքիր ինձ, Աստուած, որպէսզի գալիք սերունդներին պատմեմ փառքդ»<sup>4</sup>: Ո՞րն է իմ համար այդ ալեւորութեան տարիքը: Թւում է ինձ՝ թէ այն կարող է լինել ներկաս, որ ապրում եմ, որովհետեւ երկուհազար տարիները Տիրոջ համար աւելի չեն՝ քան քսան տարիները կամ նոյնիսկ միայն մի օրը<sup>5</sup>: Մի՛ կարծէք, Մայր սիրելի, թէ ձեր դուստրը կամենում է լքել ձեզ ... մի՛ կարծէք՝ թէ նա աւելի մեծ շնորհ է համարում

<sup>1</sup> Ես 3, 10

<sup>2</sup> Առկ 9, 4

<sup>3</sup> Հմմտ. Ես 66, 13-12: Տես նաեւ՝ հատ. 242:

<sup>4</sup> Սղմ 70, 17-18

<sup>5</sup> Հմմտ. Սղմ 89, 4

մահանալն արշալոյսին՝ քան մայրամուտին: Այն՝ որ արժէքաւոր է իր համար, եւ որ իր միակ փափաքն է, Յիսուսին հաճոյք պատճառելն է: Այժմ, երբ Նա թւում է՝ թէ մօտենում է, ինձ դէպի Իր փառքն առաջնորդելու համար, ես ուրախանում եմ: Երկար ժամանակից ի վեր հասկացել եմ, որ մարդասէրն Աստուած ոչ ոքի (եւ յատկապէս իմ) կարիքը չունի երկրի վրայ բարեգործելու համար: Մայր իմ, ներող եղէք, եթէ տրամուխիւն եմ պատճառում ձեզ: Այնքա՛ն կ'ուզէի ուրախացնել ձեզ, բայց մի՞թէ կարծում էք, որ եթէ ձեր խնդրանքները գոհացում չեն գտնում երկրի վրայ, եթէ Յիսուս կամենում է մի քանի օրով անջատել դատերը մօրից, մի՞թէ կարծում էք՝ թէ այդ աղօթքները չեն ընդունուելու Երկնքում:

273. Ձեր փափաքն այն է, գիտեմ, որ ես ձեր կողքին կատարեմ մի շատ քաղցր ու դիւրին առաքելութիւն<sup>1</sup>: Բայց այդ առաքելութիւնը մի՞թէ չեմ կարող կատարել երկնային բարձունքներից: Ինչպէս Յիսուս մի օր Պետրոս Առաքեալին, այնպէս էլ դուք ասացիք ձեր դատերը. «Արածեցրու իմ գառներին»<sup>2</sup>: Ես զարմացայ, ասացի ձեզ. «Շատ փոքր եմ» ... աղաչեցի, որ դուք ինքներդ արածեցնէք ձեր գառներին եւ պահպանէք, աղաչեցի ինձ նոյնպէս արածեցնել նրանց հետ միասին: Եւ դուք, Մայր սիրելի, մի քիչ տեղի տալով իմ արդար պահանջին, հովուեցիք գառներին ոչխարների հետ<sup>3</sup>, բայց նաեւ պատուիրեցիք ինձ յաճախ դուրս բերել նրանց, արածեցնել զով տեղերում, մատնանշել սննդարար լաւագոյն խոտերը, յստակ կերպով ցոյց տալ այն շողշողուն ծաղիկները, որոնց կարող են հպուել միայն մի նպատակով. ճմլելու համար դրանք իրենց ոտքերի ներքոյ: Դուք չվախեցաք, Մայր թանկագին, այն հանգամանքից, որ ես կարող էի մոլորեցնել ձեր գառներին. իմ անփորձութիւնը, երիտասարդութիւնը չմտահոգեցին ձեզ, թերեւս որովհետեւ յիշեցիք, որ յաճախ Աստուած կամենում է իմաստութիւն շնորհել փոքրերին, եւ որ մի օր, լի ուրախութեամբ, Նա օրհնեց Իր Հօրը, որովհետեւ Իր գաղտնիքները թաքցրել է իմաստուններից եւ յայտնել է ամենափոքրերին<sup>4</sup>: Մայր իմ, դուք գիտէք՝ թէ որքան սակաւաթիւ են այն հոգիները, որոնք աստուածային կարողութիւնը չեն չափում ըստ իրենց կարճիկ մտքերի: Նրանք ուզում են, որ ամէնուր երկրի վրայ պատահեն բացառութիւններ, միայն թէ Աստուած իրաւունք չունի կատարելու բացառութիւններ: Վաղուց ի վեր է, գիտեմ, որ մարդիկ չափում են փորձառութիւնը՝ հասարակութեան մէջ գործելու տարիներից կախման մէջ, որովհետեւ իր պատանեկութեան տարիներում սուրբ թագաւոր Դաւիթն այսպէս էր երգում Տիրոջը. «Երիտասարդ եմ ու անարգուած»<sup>5</sup>: Միեւնոյն 119րդ սաղմոսում, սակայն, չի վարանում աւելացնել. «Աւելի խոհեմ եղայ՝ քան ծերերը, որովհետեւ փնտուցի Քո կամքը: Խօսքդ ճրագ է ոտքերիս համար եւ լուսաւորում է ճանապարհներս: Պատրաստ եմ ի կատար ածելու հրամաններդ եւ չեմ խռովում ոչնչից»<sup>6</sup>:

274. Մայր իմ, չվարանեցիք ասել ինձ մի օր, որ բարին Աստուած լուսաւորում էր հոգիս, որ տալիս էր ինձ տարիների փորձառութիւն: Ա՛հ, Մայր իմ, չափազանց փոքր եմ, սնափառութեան տրուել կարողանալու համար, ինչպէս նաեւ չափազանց

<sup>1</sup> Նորընծաների փոխմեծաւորուհու պաշտօնը:

<sup>2</sup> Յվհ 21, 15

<sup>3</sup> Ընտրուելով Մեծաւորուհի, մայր Մարիամ Գոնձական պահպանեց նորընծաների վերակացուի տիտղոսն ու պաշտօնը: Թերեզան նորընծաներին համեմատում է «գառներին», իսկ ուխտեալ միանձնուհիներին՝ «ոչխարների» հետ:

<sup>4</sup> Հմմտ. Մտթ 11, 25

<sup>5</sup> Սղմ 118, 141

<sup>6</sup> Սղմ 118, 100.105.60

փոքր եմ գեղեցիկ տողեր հիւսելու եւ դրանցով ձեզ հաւաստիացնելու համար՝ թէ շատ խոնարհ եմ: Նախընտրում եմ պարզապէս համոզուել՝ թէ Ամենակարողը մեծամեծ գործեր կատարեց հոգու մէջ նրա, որ դուստրն է իր աստուածային Մօր<sup>1</sup>, եւ այդ գործերից ամենամեծը եղաւ այն, որ նրան ցոյց տուեց իր փոքրկութիւնը, իր անկարողութիւնը: Մայր թանկագին, դուք լաւ գիտէք, որ Աստուած կամեցաւ անցկացնել հոգիս տարբեր փորձերի միջով: շատ եմ տառապել այն օրից ի վեր՝ ինչ երկրի վրայ եմ, բայց եթէ մանկութեանս օրերում տառապում էի տրտմութեամբ, այժմ տառապում եմ ուրախութեամբ ու խաղաղութեամբ, եւ յիրաւի երջանիկ եմ տառապելուս համար: Հարկ է, որ ճանաչէք հոգուս բոլոր գաղտնիքները, այս տողերը կարգալիս չժպտալու համար, որովհետեւ եթէ դատենք ըստ արտաքինի, կարո՞ղ ենք արդեօք գտնել մի հոգի, որն աւելի քիչ փորձերի ենթարկուած լինի՝ քան ես: Ա՛հ, եթէ այն փորձը, որի պատճառով տառապում եմ մի տարուց ի վեր<sup>2</sup>, յայտնուէր մարդկանց տեսադաշտում, ինչպիսի՛ ապշանքով կը լցնէր նրանց:

Մայր սիրելի, դուք տեղեակ էք այդ փորձութեանը, եւ սակայն ուզում եմ կրկին խօսել նրա մասին, որովհետեւ այն մեծ շնորհ եմ համարում, որ ստացայ ձեր օրհնեալ մեծաւորութեան շրջանում:

275. Անցեալ տարի, Աստուած շնորհեց ինձ քառասնորդաց պահքն իր ամբողջ խստութեամբ պահելու միսիթարութիւնը: Երբեք ինձ այդքան ուժեղ չէի զգացել, եւ այդ ուժս տեւեց մինչեւ Զատիկ: Եւ սակայն, Աւագ Ուրբաթ օրը, Յիսուս կամեցաւ շուտով Երկինք մեկնելու եւ իրեն այնտեղ տեսնելու յոյսը տալ ինձ: Որքա՛ն քաղցր է այդ յիշատակը: Մինչեւ կէսգիշեր եկեղեցում, Յիսուսի գերեզմանի մօտ մնալուց յետոյ, մտայ խուցս, բայց հագիւ էի գլուխս բարձին դրել, երբ զգացի, որ կոկորդովս ինչ որ մի բան էր բարձրանում, բարձրանում էր գրեթէ եռալով, մինչեւ շրթունքներս: Զգիտէի՝ թէ ինչ էր, բայց մտածեցի, որ գուցէ մեռնելու վրայ եմ, եւ հոգիս ուրախութեամբ ողողուեց:

Լապտերն հանգած էր. ինքս ինձ ասացի, որ պարտաւոր էի սպասել առաւօտեան, երջանկութեանս համոզուելու համար, որովհետեւ ինձ թւում էր՝ թէ թքածս արիւն էր: Առաւօտը շատ սպասել չտուեց: Արթնանալով իսկոյն մտածեցի, որ ուրախ լուր էի ստանալու: Մօտեցայ պատուհանին, տեսայ՝ որ չէի սխալուել: Հոգիս մեծագոյն սփոփանքով լցուեց, խորապէս համոզուած էի, որ Յիսուս իր մահուան յիշարժան օրը կամեցաւ ինձ լսել տալ առաջին կանչը: Նման էր հեռաւոր քաղցրիկ սօսափրինի, որ աւետում էր Փեսայի գալուստը<sup>3</sup>: Վիթխարի ջերմեռանդութեամբ մասնակցեցի Առաւօտեան աղօթքին ու ներման արարողութեանը<sup>4</sup>: Անհամբերութեամբ էի սպասում իմ հերթին, որպէսզի կարողանայի յայտնել ձեզ, ներում ինդրելով, Մայր իմ սիրելի, յոյսս ու երջանկութիւնս: Բայց նաեւ աւելացրի, որ չէի տառապում (եւ իրօք), եւ պաղատեցի ձեզ չշնորհել ինձ իւրայատուկ ոչինչ: Իսկապէս, միսիթարութիւնն ունեցայ անցկացնելու Աւագ Ուրբաթ օրն այնպէս՝ ինչպէս կամենում էի: Երբեք Կարմեղոսի խստակրօնութիւնը չէր թուացել ինձ այդքան քաղցր: Երկինք մեկնելու յոյսը ստիպում էր ինձ ցնձալ բերկրանքից: Երբ հասաւ այդ երջանիկ օրուայ երեկոն, հանգստանալու կարիք զգացի, բայց ինչպէս նախորդ գիշեր,

<sup>1</sup> Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել այն հանգամանքին, որ «աստուածային»ը վերաբերում է Յիսուսին (Իր), ո՛չ թէ Մարիամին:

<sup>2</sup> Հաւատքի փորձութիւնը, որ սկսուեց 1896ի գաղկական տօների ընթացքում:

<sup>3</sup> Հմմտ. Մտթ 25, 6

<sup>4</sup> Աւագ Ուրբաթ օրը Մեծաւորուհի Մայրը խօսում էր սիրոյ մասին, որի աւարտին միանձնուհիները փոխադարձաբար ներում էին հայցում միմեանցից ու ողջագուրում էին:

ողորմածն Յիսուս տուեց ինձ նոյն նշանը, այն է՝ որ մուտքս յաւիտենական կեանք հեռու չէր:

276. Այնքան կենդանի, այնքան յստակ հաւատք էի վայելում, որ Երկնքի մասին մտածումն էր կազմում իմ ամբողջ երջանկութիւնը, չէի կարողանում հասկանալ՝ թէ անաստուածներն ինչպէս չէին հաւատում: Համարում էի՝ թէ իրենք իրենց մտածելակերպի դէմ էին արտայայտուում, երբ մերժում էին գոյութիւնը Երկնքի, այն սքանչելի Երկնքի՝ ուր Աստուած կամենում է ինքը լինել նրանց յաւիտենական վարձատրութիւնը: Զատկական այդ գուարթ օրերին Յիսուս հասկացրեց ինձ, որ իսկապէս գոյութիւն ունեն անհաւատ հոգիներ, որոնք իրենց տրուած շնորհը չարաչար գործածելու պատճառով կորցրել են այդ վիթխարի գանձը, ակունքը միակ մաքուր ու իրական բերկրանքի: Թոյլատրեց, որ հոգիս ընկղմուի թանձր խաւարի մէջ, եւ որ Երկնքի մասին խորհրդածութիւնը – ինձ այնքա՛ն քաղցր – դառնար պայքար միայն ու տառապանք: Այդ փորձութիւնը չէր տեւելու մի քանի օր, մի քանի շաբաթ. վերջանալու է ողորմած Աստուծոյ կողմից սահմանուած ժամին միայն, իսկ այդ ժամը ... դեռ չի հասել: Կ'ողգէի արտայայտել այն՝ ինչ մտածում եմ, բայց աւա՛ղ, կարծում եմ՝ թէ անհնարին է: Անհրաժեշտ է այդ միջին լեռնանցքով անցած լինել, հասկանալու համար նրանում տիրող խաւարը: Կ'աշխատեմ, սակայն, համեմատութեան միջոցով բացատրել:

277. Ենթադրենք՝ թէ ծնուել եմ թանձր մառախուղով պատուած մի երկրում եւ երբեք չեմ տեսել արեւի ճառագայթներով ողողուած ու կերպարանափոխուած ժպտուն բնութիւնը: Մանկութիւնիցս ի վեր այո՛՛ յաճախ եմ լսել այդ հրաշալիքների մասին, գիտեմ, որ երկիրն ուր ծնուել եմ, հայրենիքս չէ, գիտեմ, որ կայ մի ա՛յլ Հայրենիք, որին պարտաւոր եմ անդադար ձգտել: Տխուր երկրի բնակիչներից մէկի կողմից յօրինուած հէքեաթ չէ սա, այլ ապահով իրականութիւն, որովհետեւ լուսաշող Հայրենիքի Թագաւորը եկաւ ստուերածածկ երկրում երեսուներեք տարի ապրելու: Աւա՛ղ, ստուերները չհասկացան, որ այդ աստուածային Թագաւորը աշխարհի լոյսն էր<sup>1</sup>: Բայց, ո՛վ Տէր, դուստրդ հասկացաւ Քո աստուածային լոյսը, նա ներում է հայցում իր եղբայրների համար, համաձայն է սնուել, որքան ժամանակ կը կամենաս, վշտակրութեան հացով, եւ չի կամենում հեռանալ այս դառնութիւններով լի սեղանից, որից կերակրուում են խեղճ մեղաւորները, մինչեւ այն օրը, որ սահմանել ես իր համար: Բայց նա համարձակուում է նաեւ աղաղակել իր ու իր եղբայրների անունից. «Ողորմիր մեզ, Տէր, որովհետեւ մենք խեղճ մեղաւորներ ենք»<sup>2</sup>: Ո՛վ Տէր, ետ ուղարկիր մեզ արդարացած, թող բոլոր նրանք՝ ովքեր չեն լուսաւորուած հաւատքի ջինջ ու պայծառ ջահով, վերջապէս տեսնեն այն: Յիսուս, եթէ անհրաժեշտ է, որ նրանց պղծած սեղանը մաքրուի մի հոգու կողմից, որը սիրում է Քեզ, պատրաստ եմ ես մենակ ուտելու տառապանքի հացը, մինչեւ այն օրը, երբ կը կամենաս ընդունել ինձ լուսապայծառ Արքայութեանդ մէջ: Միակ շնորհը, որ խնդրում եմ, այն է՝ որ չվշտացնեմ Քեզ երբեք:

278. Մայր սիրելի, գրութիւնս շատ խառնիխուռն է. փոքրիկ պատմութիւնս, որ նմանում էր առասպելի, յանկարծ աղօթքի փոխուեց: Չգիտեմ՝ թէ ինչ հետաքրքրութիւն կը կարողանաք գտնել, կարդալով այսքան շփոթ եւ վատ արտայայտուած մտքերս: Բայց ես չեմ գրում գրական աշխատանք կատարելու համար,

<sup>1</sup> Հմմտ. Յվհ 1, 4-5. 9

<sup>2</sup> Հմմտ. Ղկս 18, 13

այլ՝ հնազանդութեան: Եթէ ձանձրացնում եմ ձեզ, գէթ կը տեսնէք, որ ձեր դուստրը տալիս է իր բարի կամքի ապացոյցը: Կը շարունակեմ, հետեւաբար, առանց վհատուելու, իմ փոքրիկ համեմատութիւնն այն կէտից՝ ուր թողել էի այն: Ասում էի, որ տխուր ու ստուերածածկ երկրից մի օր շա՛տ շա՛տ հեռու մեկնելու վստահութիւնը տրուել է ինձ մանկութիւնիցս ի վեր: Ոչ միայն հաւատում էի այն խօսքերին, որ լսում էի ինձնից աւելի գիտուն անձերից, այլ նաեւ սրտիս խորքում զգում էի մի տենչ՝ դէպի լաւագոյն, աւելի գեղեցիկ մի աշխարհ: Ինչպէս Քրիստոփոր Կոլումբոսի հանձարը նախագագցումն ունեցաւ՝ թէ գոյութիւն ունէր մի նոր աշխարհ, որի մասին մինչ այդ ոչ ոք չէր մտածում, այնպէս էլ ես զգում էի, որ մի ա՛յլ երկիր ծառայելու էր ինձ որպէս տեւական բնակավայր: Բայց մառախուղը, որ պատում էր ինձ, մի ակնթարթում դարձաւ է՛լ աւելի թանձրամած, ներթափանցեց մինչեւ հոգուս խորքերը եւ այն այնպէս քօղարկեց, որ նրանում չեմ կարողանում այլեւս վերագտնել Հայրենիքիս այնքա՛ն քաղցր պատկերը. ամէն ինչ անհետացաւ: Երբ սիրտս պատող այդ մթնշաղից յոգնած, կամենում եմ հանգստացնել այն, վերյիշելով բաղձանքիս առարկան հանդիսացող լուսապայծառ Արքայութիւնը, տառապանքս կրկնապատկուում է: Թւում է ինձ՝ թէ խաւարը, ներկայացնելով մեղաւորների ձայնը, ծաղրելով ասում է ինձ. «Երագում ես լոյս, ամենախորժելի բուրմունքների հայրենիք, երագում ես յաւիտենականութեան մէջ վայելել այս բոլոր սքանչելիքների Արարչին, կարծում ես՝ թէ մի օր դուրս ես գալու քեզ չըջապատող խաւարից: Յառա՛ջ ... յառա՛ջ ... : Ուրխացիր մահուամբդ, որ տալու է քեզ ո՛չ թէ այն՝ ինչ փափաքում ես, այլ մի գիշեր է՛լ աւելի խաւար, գիշերն անգոյութեան»:

Մայր իմ շատ սիրելի, հոգիս մթագնող ստուերների պատկերը, որ կամեցայ տալ, այնքան թերի է, որքան գծագրութիւնը շինութեան համեմատ: Բայց այլեւս չեմ կամենում շարունակել, վախենում եմ նախատել աստուածայինը ... վախենում եմ՝ թէ արդէն իսկ շատ ասացի ... :

279. Թող Յիսուս ների ինձ, եթէ տհաճութիւն պատճառեցի Իրեն, բայց Նա լաւ գիտէ, որ հաւատքի վայելքը չունենալով հանդերձ, ջանք եմ գործադրում կատարելու նրա գործերը: Կարծում եմ՝ թէ այս մի տարուայ ընթացքում հաւատքի աւելի շատ ներգործութիւններ կատարեցի՝ քան մնացած ամբողջ կեանքիս օրերում: Պայքարի իւրաքանչիւր նոր առիթի դէպքում, երբ թշնամին գրգռում է ինձ, օգտագործում եմ ամենաարժէքաւոր միջոցը. իմանալով, որ վատասրտութիւնը կայանում է ճիշտ մենամարտի նետուելու մէջ, թիկունք եմ դարձնում հակառակորդին, չարժանացնելով նրան հայեացքիս անգամ: Իսկոյն վազում եմ իմ Յիսուսի մօտ, ասում եմ Նրան, որ պատրաստ եմ արիւնս հեղելու մինչեւ վերջին կաթիլը, վկայելու համար, որ գոյութիւն ունի Երկինքը: Ասում եմ Նրան, որ երջանիկ եմ այստեղ երկրի վրայ այդ գեղեցիկ Երկինքը չվայելելու համար, որպէսզի բացուեն նրա դռները, յաւիտեան, խեղճ անհաւատների առաջ: Այսպիսով, չնայած այս փորձութեանը, որ խլում է ինձնից հանգիստս, կարող եմ ասել. «Տէր, Դու ինձ բերկրանքով ես լցնում, այն բոլոր գործերովդ, որ կատարում ես»<sup>1</sup>: Որովհետեւ արդեօք գոյութիւն ունի՞ աւելի մեծ ուրախութիւն՝ քան տառապելը Քո սիրոյ համար: Որքան տառապանքը ներքին է ու արարածների աչքերին անտեսանելի, այնքան աւելի հաճելի է Քեզ, Աստուած իմ: Բայց եթէ Դու նոյնպէս – անհնարին բան – տեղեակ չլինէիր իմ տառապանքին, դարձեալ երջանիկ կը լինէի այն կրելու համար, եթէ նրա միջոցով կարողանայի արգելել կամ քաւել հաւատքի դէմ գործուած նոյնիսկ մի յանցանք:

<sup>1</sup> Սղմ 91, 5

280. Մայր սիրելի, ձեզ թերեւս թուում է՝ թէ ուռճացնում եմ փորձութիւնս: Իրօք, եթէ դատէք ըստ այն զգացումների, որոնք արտայայտել եմ այս մի տարուայ ընթացքում գրածս բանաստեղծութիւններում, կը թուամ միսիթարութեամբ լիացած հոգի, որի համար հաւատքի քօղը գրեթէ պատուած է: Եւ սակայն ... : Իմ համար այն այլեւս քօղ չէ, պարիսպ է, որ բարձրանում է մինչեւ երկինք ու ծածկում աստղազարդ երկինքը: Երբ գովերգում եմ Երկնքի երանութիւնը, Աստուծոյ հետ յաւիտենական միութիւնը, չեմ գգում ոչ մի ուրախութիւն, որովհետեւ երգում եմ պարզապէս այն՝ ինչին ուզում եմ հաւատալ: Երբեմն, ճիշտ է, մի փոքրիկ ճառագայթ իջնում է լուսաւորելու հոգուս գիշերը, այդպիսի պահերին փորձութիւնը մի պահ ընդհատուում է ... բայց անմիջապէս յետոյ այդ ճառագայթի յիշատակն իսկ, ինձ ուրախացնելու փոխարէն, դե՛ռ աւելի խիտ է դարձնում խաւարը:

Մայր իմ, երբեք աւելի լաւ չեմ զգացել՝ քան այժմ, թէ Աստուած որքան բարեգութ է ու ողորմած: Այս փորձութիւնն ուղարկեց ինձ միայն այն ժամանակ, երբ այն կրելու ուժն ունէի արդէն: Այո՛, եթէ ենթարկուէի սրան աւելի շուտ, վհատութեան մէջ կը սուզուէի: Մինչ այժմ, այն անհետ վերացնում է բաւարարութեան բոլոր բնական զգացումները, որոնք կարողանում էին խցկուել Երկինք մեկնելու բաղձանքիս մէջ: Այժմ ինձ թուում է՝ թէ ոչինչ չի արգելում ինձ թռչել, որովհետեւ այլեւս չունեմ մեծամեծ փափաքներ, եթէ ոչ միայն այն, որ սիրեմ՝ սիրուց մեռնելու աստիճան:

281. Մայր իմ, կատարեալ ապշանքի մատնուեցի աչքի անցկացնելով երէկուայ գրածներս. ինչպիսի՛ խզբզոց: Զեռքս այնպէս էր դողում, որ անհնարին եղաւ շարունակելը, եւ այժմ գղջում եմ, որ փորձեցի գրել: Յուսով եմ այսօր աւելի ընթեռնելի դարձնել ձեռագիրս, որովհետեւ այլեւս անկողնում չեմ, այլ մի գեղեցիկ սպիտակ բազկաթոռի վրայ:

Անդրադառնում եմ, Մայր իմ, որ գրածներս դասաւորուած չեն ժամանակագրական յաջորդական կարգով, բայց նաեւ զգում եմ, անցեալի շուրջ խօսելուց առաջ, իմ ներկայ զգացումներն արտայայտելու կարիքը. աւելի ուշ թերեւս ի սպառ կը մոռանամ դրանք: Նախեւառաջ կամենում եմ ասել՝ թէ որքան զգացուած եմ ձեր բոլոր մայրական փափկանկատութիւններից: Ա՛հ, հաւատացէք, ձեր դստեր սիրտը լի է երախտագիտութեամբ, երբեք չեմ մոռանայ այն՝ ինչ պարտաւոր եմ ձեզ:

Մայր իմ, յուզմունք են պատճառում ինձ յատկապէս իննօրեան, որ աղօթում էք Յաղթանակների Տիրամօրը<sup>1</sup>, եւ Պատարագները, որ մատուցել էք տալիս առողջութիւնս ստանալու դիտաւորութեամբ: Զգում եմ, որ այս բոլոր հոգեւոր գանձերը մեծ բարիք են ազդում հոգուս: Իննօրեայի սկզբում ձեզ ասում էի, Մայր իմ, թէ Սուրբ Կոյսը կամ կը բժշկի ինձ կամ կը տանի Երկինք, որովհետեւ ձեր եւ քոյրերի համար տխուր իրականութիւն էի համարում մի հիւանդ երիտասարդ միանձնուհի որպէս բեռ ունենալը: Մինչդեռ այժմ ասում եմ, որ սիրով հիւանդ կը մնամ ամբողջ կեանքիս ընթացքում, եթէ դա հաճելի է բարի Աստուծոն, ինչպէս նաեւ համաձայն եմ, որ այդ կեանքս շատ երկար լինի: Միակ շնորհը, որ խնդրում եմ, է՝ որ այն բեկուր սիրուց:

282. Ո՛չ, չեմ վախենում երկար կեանքից, չեմ խուսափում պայքարից, որովհետեւ «Տէրն է այն վէմը, որի վրայ հաստատուած եմ, Նա է, որ վարժեցնում է ձեռքերս պատերազմի եւ մատներս ճակատամարտի: Իմ վահանն է, Նրա վրայ եմ դրել իմ

<sup>1</sup> Այս իննօրեան սկսուել էր 1897ի Յունիսի 5ին: Սրբուհին գրում է Յունիսի 10ին, իննօրեայի 6րդ օրը:

յոյսը»<sup>1</sup>: Բարի Աստծուց երբեք չեմ խնդրել մահանալ երիտասարդ հասակում, միշտ սակայն յուսալով թէ դա է իր կամքը: Յաճախ Աստուած գոհանում է իր փառքի համար աշխատելու պատրաստակամութեամբ միայն, իսկ դուք գիտէք, Մայր իմ, որ իմ փափաքներն անսահմանօրէն մեծ են: Ինչպէս նաեւ գիտէք, որ Յիսուս ներկայացրել է ինձ մէկից աւելի դառն բաժակներ, բայց դրանք չըթուենքներիցս հեռացրել է նախքան իմ ըմպելը, սակայն դառնութիւնները համտեսելուցս ո՛չ առաջ:

Մայր սիրելի, սուրբ թագաւոր Դաւիթը իրաւացի է, երբ երգում է. «Որքա՛ն բարի է, որքա՛ն քաղցր, երբ եղբայրները բնակում են միասին, կատարեալ միութեամբ»<sup>2</sup>: Ճիշտ է, յաճախ եմ լսել այս խօսքերը, բայց հարկաւոր է, որ այս միութիւնը կառուցուի գոհողութեան հիմքերի վրայ<sup>3</sup>: Իրօք, քոյրերիս հետ ապրելու համար չէ, որ եկայ Կարմեղոս, այլ Յիսուսի կանչին պատասխանելու համար միայն: Լաւ էի նախագգում, որ տեւական տառապանքի աղբիւր էր լինելու քոյրերիս մօտ գտնուելը, քանի որ ոչինչ չեմ կամենում շնորհել բնութեանս:

283. Ինչպէ՞ս կարելի է ասել՝ թէ աւելի կատարեալ է արիւնակից հարազատներից հեռանալը: Որեւէ մէկի մտքով երբեւէ կ'անցնի՞ յանդիմանել երկու եղբայրների, որովհետեւ կուռում են պատերազմի միեւնոյն դաշտում, որովհետեւ կամենում են միասին հասնել մարտիրոսութեան դափնեպսակին: Անկասկած, իրաւացիութեամբ է նկատում այն պարագան, որ նրանք պէտք է փոխադարձաբար քաջալերեն միմեանց, ինչպէս նաեւ՝ որ նրանցից իւրաքանչիւրի մարտիրոսութիւնը դառնում է նրանց երկուսի մարտիրոսութիւնը: Այսպէս է պատահում նաեւ վանական կեանքում, որն աստուածաբաններն անուանում են «մարտիրոսութեան մի տեսակ»: Նուիրուելով Աստծուն, սիրտը չի կորցնում իր բնական գորովը, ընդհակառակն՝ այդ խանդաղատանքն աճում է, դառնալով աւելի ջինջ ու աստուածային<sup>4</sup>:

Մայր թանկագին, այդ գորովով է, որ սիրում եմ ձեզ եւ միաբանակից բոլոր քոյրերիս: Երջանիկ եմ ընտանիքով պայքարելուս համար ի փառս Երկնքի Թագաւորի, բայց պատրաստ եմ նաեւ նետուելու պատերազմի մի ուրիշ դաշտ, եթէ աստուածային Զօրավարը յայտնի այդ փափաքը: Հրամանի կարիք չկայ, բաւական է մի հայեացք, մի պարզ ակնարկ<sup>5</sup>:

284. Այն օրից ի վեր, ինչ մտել եմ օրհնեալ տապան, միշտ մտածել եմ, որ եթէ Յիսուս շուտով չտանի ինձ Երկինք, կ'ունենամ Նոյի փոքրիկ աղաւնու ճակատագիրը. մի օր Տէրը կը բացի տապանի պատուհանը ու կը պատուիրի ինձ ճախրել հեռո՛ւ հեռո՛ւ, դէպի անհաւատ ամերը, տանելով իմ հետ ձիթենու ձիւղը<sup>6</sup>: Մայր իմ, այս

<sup>1</sup> Մղմ 143, 1-2

<sup>2</sup> Մղմ 132, 1

<sup>3</sup> Սրբուհու այս վերջին խօսքերից ու ամբողջ համատեքստից պարզ երեւում է, որ նա ի նկատի ունի արիւնակիցների այն միութիւնը, որ ստեղծւում է Տիրոջ շուրջ, որպէս ընդհանուր միակ գաղափարական ունենալով Աստծոյ ծառայութիւնը: Այդ ընդհանուր միակ գաղափարականը կարեւոր է, որովհետեւ թերեւս անհնարին կը լինէր «որքա՛ն քաղցր» որակաւորել համատեղ կեանքը – օրինակի համար – Սուրբ Յրանչիսկոսի ու իր եղբօր միջեւ, մինչ վերջինս շարունակ ծաղրում էր ու նուաստացնում Սրբին, որը թողել էր իր բաւական հարուստ հօր գանձերը (որոնց նաեւ ժառանգն էր ըստ առաջնեկութեան օրէնքի) եւ նուիրուել էր Տիրոջ ծառայութեանը աղքատութեան մէջ:

<sup>4</sup> Այս խոսովքը Թերեզայի հոգում առաջացել է թերեւս այն պատճառով, որ Լիզէոյի Կարմեղոսի որոշ միանձնուհիներ (ինչպէս քոյր Ամատա Յիսուսին) անպատշաճ էին համարում չորս քոյրերի համատեղ կրօնաւորութիւնը (տե՛ս՝ հատ. 233 եւ 234):

<sup>5</sup> Տե՛ս՝ Զեռագիր Ա, 8րդ գլխի թիւ 37 ծանօթագրութիւնը:

<sup>6</sup> Հմմտ. Ծնդ 8, 10-11

խորհրդածուծութիւնը բաւական հասունութիւն շնորհեց հոգուս, հնարաւորութիւնը տուեց սաւառնելու աւելի բարձր, գերիվեր՝ քան ստեղծուած իրողութիւնները: Հասկացայ, որ Կարմեղոսում նոյնպէս հնարաւոր են մեկնումներն ու բաժանումները, որ միայն Երկնքում է միութիւնը լինելու ամբողջական ու յաւերժական: Երբ սա հասկացայ, կամեցայ՝ որ հոգիս բնակուի Երկնքում եւ միայն հեռուից դիտի աշխարհի անցուղարձերը: Ընդունեցի ոչ միայն իմ մեկնումը անծանօթ ժողովուրդների մօտ աքսորուելու, այլ նաեւ, եւ սա շատ աւելի դառն էր իմ համար, ընդունեցի քոյրերիս աքսորը: Երբեք չեմ մոռանայ 1896ի Օգոստ. 2ը, առաքեալների մեկնման օրը<sup>1</sup>: Այդ օրը լրջօրէն խօսուեց մայր Ագնէս Յիսուսի մեկնումի մասին: Չէի կամենայ մի շարժում անգամ անել՝ նրա մեկնումը արգելելու համար: Չգում էի, սակայն, մի մեծ տրտմութիւն. գտնում էի, որ նրա այնքա՛ն զգայուն, այնքա՛ն նուրբ հոգին ստեղծուած չէր իրեն չհասկացող ժողովուրդների մէջ ապրելու համար: Հազար ու մի ա՛յլ խորհրդածումներ էին եռում հոգուս մէջ, իսկ Յիսուս լռում էր, չէր հրամայում փոթորիկին<sup>2</sup>: Իսկ ես ասում էի Իրեն. «Աստուած իմ, ի սէր Քո ընդունում եմ ամէն ինչ, եթէ կամենում ես՝ թող տառապեմ, մինչեւ վշտից մեռնեմ»: Յիսուս բաւարարուեց համակամութեամբս, բայց մի քանի ամիս անց խօսուեց քոյր ժընըվիելի եւ քոյր Մարիամի մեկնելու հնարաւորութեան մասին: Այնժամ կրեցի մի ուրիշ տեսակ տառապանք, ներքին, շատ խորը. պատկերացնում էի այն բոլոր տառապանքներն ու յուսախաբուծութիւնները, որոնց կարող էին ենթարկուել, եւ երկնակամարս ամպերով էր ծածկուում: Սրտիս խորքն էր միայն շարունակում մնալ խաղաղ, հանգիստ:

285. Մայր սիրելի, ձեր խոհեմութիւնը կարողացաւ բացայայտել Աստուծոյ կամքը եւ դուք արգելեցիք ձեր նորընծայուհիներին մտածել իրենց վանական մանկութեան օրրանից հեռանալու մասին: Բայց նրանց բաղձանքներին մօտենում էիք ըմբռնողութեամբ, որովհետեւ դուք նոյնպէս, Մայր իմ, ձեր երիտասարդութեան օրերին խնդրել էիք մեկնել Մայգոն: Այսպէս է, յաճախ են մայրական իղձերը արձագանք գտնում իրենց դուստրերի հոգիներում: Արդ, ձեր առաքելական եռանդը գտնում է իմ հոգում, գիտէք, արձագանք հաւատարիմ: Թոյլ տուէք յայտնել ձեզ՝ թէ ինչու էի կամենում (եւ դեռ շարունակում եմ փափաքել, եթէ Սուրբ Կոյսն ինձ բժշկի) օտար երկրներ մեկնելու համար թողնել այն բուրումնաւալի օազիսը, որում ապրում եմ այսքան երջանիկ, ձեր մայրական հայեացքի ներքոյ:

Օտար Կարմեղոսներում ապրելու համար հարկաւոր է, Մայր իմ (դուք էք ինձ ասել), ունենալ իւրայատուկ կոչում: Շատերն են կարծում կանչուած լինել, առանց, սակայն, լինելու: Ասել էք ինձ նաեւ, որ ես ունեմ այդ կոչումը, եւ որ առողջութիւնս է միայն խոչընդոտում: Բայց ես լաւ գիտեմ, որ այդ խոչընդոտը կը վերանար իսկոյն, եթէ Աստուած կանչէր ինձ հեռու. այս իսկ պատճառով, ապրում եմ առանց մտատանջուելու: Այո՛, եթէ մի օր պարտաւոր լինեմ թողնել իմ սիրելի Կարմեղոսը, դա տեղի չի ունենայ առանց սիրտս խոցելու. Յիսուս անզգայ սիրտ չի տուել ինձ, եւ ճիշտ որովհետեւ սիրտս ընդունակ է տառապելու, ուզում եմ, որ Յիսուսին տայ այն ամէնը, որ կարող է տալ նրան: Այստեղ, Մայր սիրելի, ապրում եմ առանց թշուառ երկրին տրուելիք խնամքների մասին մտահոգուելու. կատարելիք ուրիշ գործ չունեմ, եթէ ոչ միայն՝ այն քաղցր ու դիւրին առաքելութիւնը, որ դուք վստահեցիք ինձ: Այստեղ չըջապատուած եմ ձեր մայրական խնամքներով, չեմ զգում

<sup>1</sup> 1896ի Օգոստ. 2ին հայր Թուլանը, Սրբուհու հոգեւոր եղբայրը, ուրիշ բազմաթիւ առաքեալների հետ միասին նաւ էր բարձրանում Մարսէլում, Չինաստան մեկնելու համար:

<sup>2</sup> Հմմտ. Մտթ 8, 26

աղքատութիւնը, որովհետեւ ինձ երբեք ոչինչ չի պակասել<sup>1</sup>: Բայց յատկապէս որովհետեւ այստեղ սիրուած եմ ձեր եւ միաբանակից բոլոր քոյրերիս կողմից, եւ այս գործովը շատ քաղցր է իմ համար: Ահա թէ ինչու եմ երազում մի վանք, ուր ոչ ոք ինձ չճանաչի եւ ուր կարողանամ կրել աղքատութիւնը, գործովի բացակայութիւնը, մի խօսքով՝ սրտի աքսորը:

286. Ինձ հիւրընկալելու պատրաստ կարմեղոսին ծառայութիւններ մատուցելու նպատակով չէ, սակայն, որ կը թողնէի այն բոլորը, որ հոգեհարազատ է ինձ: Անշուշտ կ'անէի հնարաւոր ամէն բան, բայց լաւ եմ ճանաչում անկարողութիւնս, ինչպէս նաեւ գիտեմ, որ իմ լաւագոյնը կատարելով հանդերձ չէի կարողանայ բարեգործել, որովհետեւ չունեմ, ինչպէս ասում էի քիչ առաջ, երկրային անցուղարձերի շուրջ որեւէ տեղեկութիւն: Միակ նպատակս, հետեւաբար, Աստծոյ կամքի կատարումն է, նուիրուելով Իրեն այնպէս՝ ինչպէս հաճելի է Իրեն:

Քաջ գիտակցում եմ, որ չէի ունենայ ոչ մի յուսախաբուցութիւն, որովհետեւ երբ ուրիշ բան չենք ակնկալում, այլ միայն գոլտ ու անխառն տառապանք, ամենափոքր ուրախութիւնն անգամ վերածուում է անակնկալ բերկրանքի, եւ յետոյ դուք գիտէք, Մայր իմ, որ տառապանքն ինքնըստինքեան դառնում է հոգու ամենամեծ ուրախութիւնը, երբ այն փնտռում ենք որպէս ամենամեծին գանձ:

Ա՛հ ո՛չ, չէի մեկնի աշխատանքիս արդիւնքը վայելելու նպատակով. եթէ սա լինէր ձգտումներիս նշանակէտը, չէի ճաշակի այն քաղցր խաղաղութիւնը, որ լիացնում է հոգիս, այլ կը չարչարուէի, հեռաւոր առաքելութիւնների կոչումս իրագործել չկարողանալուս համար: Վաղուց ի վեր ինքս ինձ չեմ պատկանում այլեւս, այլ ամբողջովին Յիսուսին եմ յանձնել անձս. Նա, հետեւաբար, ազատ է օգտագործելու ինձ այնպէս՝ ինչպէս նախընտրում է ինքը: Նա հմայեց ինձ լիակատար աքսորի գեղեցկութեամբ, հասկացնելով ինձ այն բոլոր տառապանքները, որ կարող էի գտնել նրանում, հարցնելով ինձ՝ թէ արդեօք կը կամենայի՞ իմել այդ բաժակը մինչեւ վերջին կաթիլը: Իսկոյն նետուեցի վերցնելու այդ գաւաթը, որ Յիսուս ներկայացնում էր ինձ, բայց Նա ձեռքը ետ քաշելով հասկացրեց, որ համակամութիւնս բաւական էր Իրեն:

287. Մայր իմ, ինչպիսի՞ մտատանջութիւններից ենք ազատուում, կատարելով հնազանդութեան ուխտը: Որքան երջանիկ են պարզասիրտ վանականները: Նրանց միակ կողմնացոյցը մեծաւորների կամքն է, եւ միշտ վստահ են՝ թէ գտնուում են ճիշտ ուղու վրայ: Խաբուելու վախ չունեն, նոյնիսկ երբ նրանց թւում է՝ թէ մեծաւորները բացայայտօրէն սխալում են: Իսկ երբ հոգին դադարում է հետեւել անսխալ կողմնացոյցին, երբ հեռանում է նրա կողմից մատնանշուած ճանապարհից, եւ այս բոլորն անում է Աստծոյ կամքը կատարելու պատրուակով (կարծես թէ Նա լավ չի լուսաւորում նրանց, ովքեր Իր տեղապահներն են), այդ հոգին իսկոյն մոլորւում է ցամաք արահետներում, ուր շուտով սկսում է պակասել իրեն շնորհի ջուրը:

Մայր թանկագին, դուք էք այն կողմնացոյցը, որին Յիսուս տուել է ինձ, որպէսզի մեծ ապահովութեամբ առաջնորդէք ինձ դէպի յաւիտենական նաւահանգիստ: Քանիցս քաղցր է իմ համար ձեր վրայ սեւեռել հայեացքս եւ ապա կատարել Տիրոջ կամքը: Երբ Նա կամեցաւ, որ կրեմ հաւատքի դէմ ուղղուած փորձութիւնները, նոյն ինքն աւելացրեց սրտիս մէջ հաւատքի ոգին, եւ այս վերջինն օգնում է ինձ տեսնելու ձեր անձում ոչ միայն մի մայր, որ սիրում է ինձ եւ որին ես սիրում եմ փոխադարձաբար, այլ օգնում է ինձ տեսնելու Յիսուսին՝ կենդանի ձեր հոգում,

<sup>1</sup> Տե՛ս՝ հատ. 209 եւ 297:

Յիսուսին՝ որ հաղորդում է ինձ իր կամքը ձեր միջոցով: Լաւ գիտեմ, Մայր իմ, որ հետս վարւում էք ինչպէս մի տկար հոգու հետ, ինչպէս շփացած մանկան հետ. այս իսկ պատճառով ինձ դժուար չէ կրել հնազանդութեան բեռը: Բայց ինձ թւում է, հոգուս խորքում զգացածիս համաձայն, թէ վարուելակերպս չէր փոխուի եւ ձեր հանդէպ տածած որդիական սէրս չէր ենթարկուի նուազման, եթէ աւելի խստորէն վարուէիք հետս, որովհետեւ կը շարունակէի Յիսուսի կամքը տեսնել ձեր գործելաձեւում, ի շահ եւ ի մեծ օգուտ իմ հոգու:

288. Այս տարի, Մայր իմ, Աստուած պարգեւեց ինձ շնորհը ըմբռնելու՝ թէ ինչ է եղբայրսիրութիւնը: Առաջ նոյնպէս հասկանում էի, բայց ո՛չ կատարեալ կերպով, դեռ բաւական չէի խորհրդածել Յիսուսի այս խօսքերի շուրջ. «Երկրորդ պատուիրանը նման է առաջինին. սիրիր մերձակորիդ քո անձի պէս»<sup>1</sup>: Նուիրւում էի յատկապէս Աստուծոյ սիրոյն, եւ իրեն սիրելով հասկացայ, որ սէրը չպէտք է արտայայտուի խօսքերով միայն, որովհետեւ ասուած է. «Ոչ ամէն մարդ, որ ինձ "Տէ՛ր, Տէ՛ր" է ասում, կը մտնի Երկնքի Արքայութիւն, այլ նա՝ ով կատարում է կամքն իմ Հօր, որ Երկնքում է»<sup>2</sup>: Այդ կամքը Յիսուս ինձ յայտնեց բազում անգամներ, կ'ասէի՝ Աւետարանի իւրաքանչիւր էջում: Վերջին Ընթրիքի ժամանակ, երբ Նա գիտէր, որ Առաքեալների սիրտը այրւում էր աւելի իր հանդէպ սիրով, իր՝ որ նրանց նուիրուեց Հաղորդութեան անճառելի խորհրդով, այս բարեգութ Փրկիչը կամեցաւ տալ նրանց մի նոր պատուիրան: Ասաց աննկարագրելի խանդաղատանքով. «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց. ինչպէս ես սիրեցի ձեզ, դուք եւս այնպէս սիրեցէք միմեանց: Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով բոլորը կ'իմանան, որ դուք իմ աշակերտներն էք»<sup>3</sup>:

Բայց ինչպէ՞ս սիրեց Յիսուս իր աշակերտներին, եւ ինչո՞ւ սիրեց նրանց: Ա՛հ, նրանց բնական յատկութիւնները չէին, որ գրաւում էին Նրան. նրանց ու իր միջեւ բաժանարար ասեղի վիճ կար: Նա ինքնին Գիտութիւնն էր, յաւիտենական Իմաստութիւնը. իսկ նրանք՝ երկրային մտածումներով լի խեղճ սօգէտ ձկնորսներ: Եւ սակայն, Յիսուս կոչում է նրանց բարեկամներ, եղբայրներ<sup>4</sup>: Կամենում է տեսնել նրանց իր հետ թագաւորելիս իր Հօր Արքայութեան մէջ, եւ նրանց առջեւ այդ Արքայութեան դռները բացելու համար կամենում է մեռնել Խաչի վրայ, քանի որ ասել էր. «Ոչ ոք աւելի մեծ սէր չունի, քան նա՝ ով իր կեանքը զոհում է իր բարեկամների համար»<sup>5</sup>:

289. Մայր սիրելի, Յիսուսի այս խօսքերի շուրջ մտածելով հասկացայ՝ թէ միաբանակից քոյրերիս հանդէպ ունեցած սէրս որքա՛ն թերի էր. տեսայ, որ չէի սիրում նրանց այնպէս՝ ինչպէս սիրում է նրանց Աստուած: Այժմ հասկանում եմ, որ կատարեալ սէրը կայանում է ուրիշների թերութիւններին համբերելու մէջ, չզարմանալով նրանց տկարութիւնների դիմաց, բարի օրինակ առնելով այն բոլոր փոքրագոյն առաքիներութիւններից, որ նրանք գործադրում են: Բայց յատկապէս հասկացայ, որ սէրը չպէտք է փակուած մնայ սրտի խորքում. «Ոչ ոք, – ասում է Յիսուս, – կանթեղը չի վառում գրուանի տակ թաքցնելու համար, այլ դնում է աշտանակի վրայ, եւ նա լոյս է տալիս բոլոր նրանց՝ ովքեր տան մէջ են»<sup>6</sup>: Ինձ

<sup>1</sup> Մտթ 22, 39

<sup>2</sup> Մտթ 7, 21

<sup>3</sup> Յվհ 13, 34-35

<sup>4</sup> Հմմտ. Յվհ 15, 15

<sup>5</sup> Յվհ 15, 13

<sup>6</sup> Մտթ 5, 15

Թևում է՝ թէ այդ կանթեղը այլաբանական պատկերն է սիրոյ, որը պարտաւոր է լուսաւորել, զուարթացնել, ոչ միայն նրանց՝ ովքեր մտերիմ են մեզ, այլ բոլոր նրանց՝ ովքեր տան մէջ են, առանց որեւէ բացառութեան:

290. Երբ Աստուած Իր ժողովրդին պատուիրում էր սիրել իրենց մերձաւորներին իրենց անձերի նման<sup>1</sup>, դեռ չէր եկել երկիր: Եւ այսպէս, լաւ իմանալով՝ թէ մարդկանց համար որքա՛ն սիրելի է իրենց սեփական անձը, չէր կարող մերձաւորի հանդէպ աւելի մեծ սէր պահանջել Իր արարածներէից: Մինչդեռ երբ Յիսուս Առաքեալներին տալիս էր նոր պատուիրանը, Ի՛ր պատուիրանը, ինչպէս արտայայտուում է մի այլ տեղ<sup>2</sup>, չի պահանջում սիրել մերձաւորին ինչպէս ինքներս մեզ, այլ սիրել նրանց ինչպէս Ինքն է նրանց սիրում, ինչպէս սիրելու է նրանց յաւէտ:

Տէր իմ, գիտեմ, որ Դու չես պահանջում անհնարին բաներ, Դու ինձնից աւելի լաւ ես ճանաչում իմ տկարութիւնն ու անկատարութիւնը, Դու քաջ գիտես, որ չէի կարող սիրել մերձաւորներին այնպէս՝ ինչպէս Դու ես սիրում նրանց, եթէ Դու Ինքդ, Յիսուս իմ, չսիրէիր նրանց ինձնում: Եւ ինձ այս շնորհը պարգեւելու համար է, որ տուեցիր նոր պատուիրանը: Ա՛հ, որքան սիրելի է ինձ այն, Քո պատուիրանը, որովհետեւ ներշնչում է ինձ ապահովութիւն՝ թէ կամքդ սա է. սիրել ինձնում բոլոր նրանց՝ որոնց սիրել ես ինձ պատուիրում:

Այո՛, զգում եմ. երբ եղբայրասէր եմ, Յիսուս է միայն, որ գործում է ինձնում. որքան աւելի եմ միանում Նրան, այնքան աւելի եմ սիրում նաեւ բոլոր մերձաւորներին: Երբ կամենում եմ բազմապատկել ինձնում այս սէրը, յատկապէս երբ սատանան ջանում է աչքերիս առջեւ դնել ինձ նուազ համակրելի միաբանակից այս կամ այն քրոջ թերութիւնները, շտապում եմ փնտռել վերջինիս առաքինութիւնները, բարի փափաքները: Ասում եմ ինքս ինձ, որ եթէ տեսայ նրան մի անգամ ընկած, դա չի նշանակում՝ որ նա չունի տարած բազում յաղթանակներ, որոնք թաքցնում է յանուն խոնարհութեան, ինչպէս նաեւ՝ որ այն, ինչ թևում է ինձ սխալ, կարող է լինել, նպատակի համաձայն, գործ առաքինութեան:

291. Մեծ ճիգեր չեմ գործադրում սրանում համոզուելու համար, որովհետեւ մի օր մի փոքրիկ փորձառութիւն ունեցայ, որը ցոյց տուեց ինձ՝ թէ ինչպէս երբեք չպէտք է դատել: Զբօսանքի պահն էր, երբ դռնապան քոյրը զանգը հնչեցրեց երկու անգամ. հարկաւոր էր բացել բանուորների մեծ դուռը, ներս բերելու համար Մսուրի կառուցմանը սահմանուած գանազան նոր ծառեր: Զբօսանքը այնքան էլ զուարթ չէր, որովհետեւ դուք ներկայ չէիք, Մայր սիրելի, այս իսկ պատճառով մտածում էի, որ եթէ ինձ ուղարկէին որպէս «երրորդ»<sup>3</sup>, բաւական գոհ կը լինէի: Փոխմեծաւորուհին պատուիրեց գնալ կա՛մ ես, կա՛մ այն քոյրը, որ կանգնած էր իմ կողքին: Սկսեցի անմիջապէս քանդել զոգնոցս, բայց հանդա՛րտ հանդա՛րտ, որպէսզի միւս քոյրն ինձնից աւելի շուտ ազատուէր, որովհետեւ կարծում էի, որ հաճոյք կը պատճառէի նրան, իրեն թողնելով «երրորդ» լինելու հնարաւորութիւնը: Միանձնուհին, որ փոխարինում էր դռնապան քրոջը, մեզ էր նայում ժպտալով, եւ տեսնելով, որ ոտքի կանգնեցի վերջինը, ասաց. «Արդէն իսկ գիտէի, որ չէիր կատարի այս գոհողութիւնը եւ մի մարգարիտ աւելի չէիր շահի առաքինութիւնների թագիդ համար: Շատ դանդաղ ես շարժուում»:

<sup>1</sup> Հմմտ. Ղեւտ 19, 18

<sup>2</sup> Հմմտ. Յվհ 15, 12

<sup>3</sup> Կարմեղոսում «երրորդ» է կոչւում այն միանձնուհին, որն ընկերակցում է դռնապան քրոջը, երբ աշխատաւորները մտնում են փակարանից ներս:

Անկասկած, միաբանակից բոլոր քոյրերը կարծեցին՝ թէ գործեցի ըստ բնութեան, եւ չեմ կարող խօսքերով արտայայտել՝ թէ որքան բարի ազդեցութիւն ունեցաւ հոգուս վրայ այդ աննշան միջադէպը, դարձնելով ինձ ուրիշների տկարութիւնների հանդէպ աւելի ներողամիտ: Եւ սա արգելում է ինձ նաեւ սնափառութեան զգացումներ ունենալ, երբ դատավճիռ է արձակուում յօգուտ իմ, որովհետեւ ասում եմ ինքս ինձ. «Քանի որ թերութիւն են համարում իմ փոքրիկ առաքիներութիւնները, կարող են նմանապէս սխալուել առաքիներութիւն համարելով այն՝ ինչ սոսկ թերութիւն է»: Այդպիսի դէպքերում կրկնում եմ Պօղոս Առաքեալի խօսքերը. «Բնաւ չեմ վշտանում մարդկային դատաստանների պատճառով: Ես ինքս էլ ինձ չեմ դատում. Նա, որ դատում է ինձ, Տէրն է»<sup>1</sup>: Ուստի, այս տէրունեան դատաստանը իմ նկատմամբ նպաստաւոր դարձնելու համար, կամ աւելի ճիշտը՝ ընդհանրապէս չդատուելու համար, կամենում եմ, որ խորհրդածութիւններս միշտ եղբայրասէր լինեն, որովհետեւ Յիսուս ասում է. «Մի՛ դատէք եւ չէք դատուի»<sup>2</sup>:

292. Մայր իմ, կարդալով այն՝ ինչ գրեցի քիչ առաջ, կարող էք կարծել՝ թէ եղբայրսիրութեան գործադրումը այնքան էլ դժուար չի եղել իմ համար: Ճիշտ է, արդէն մի քանի ամիս է՝ ինչ պայքարելու կարիքը չեմ գտնում, այս գեղեցիկ առաքիներութեան գործադրման հարցում. սրանով սակայն չեմ կամենում ասել՝ թէ երբեք չեմ սխալուում: Ա՛հ, չափազանց անկատար եմ սրա համար: Բայց եթէ երբեմն ընկնում եմ, շատ դժուարութիւն չեմ գտնում իսկոյն ոտքի կանգնելու համար, որովհետեւ պայքարներից մէկի ժամանակ յաղթական դուրս եկայ: Երկնային զօրքն այժմ օգնութեան է հասնում ինձ, չկարողանալով հաշտուել ինձ պարտուած տեսնելու մտքի հետ, այժմ՝ փառահեղ ճակատամարտում յաղթանակ տօնելուցս յետոյ, որը հիմա կը փորձեմ նկարագրել:

Վանքում մի միանձնուհի կայ, որն ունի ամէն ինչում ինձ տհաճութիւն պատճառելու տաղանդը. նրա շարժումները, խօսքերն ու բնաւորութիւնը թւում են ինձ շատ անախորժ: Եւ սակայն, սրբակեաց մայրապետ է եւ պէտք է շատ հաճելի լինի Տիրոջը: Այս իսկ պատճառով ես, չկամենալով տեղի տալ բնական հակակրանքին, որ գտնում էի, ասում էի ինքս ինձ՝ թէ սէրը չպէտք է կայանայ զգացումների մէջ, այլ՝ գործերի: Այնժամ նուիրուեցի անելու այդ քրոջ համար այն՝ ինչ կ'անէի ամենասիրելի անձի համար միայն: Ամէն անգամ իրեն հանդիպելիս աղօթում էի Աստծուն իր համար, նուիրելով իր բոլոր առաքիներութիւններն ու արժանիքները: Զգում էի, որ արարքս հաճոյք էր պատճառում Յիսուսին, քանի որ չկայ մի արուեստագէտ, որին հաճելի չլինի իր գործերի համար գովասանք ընդունելը. եւ Յիսուս՝ հոգիների Արուեստագործը նոյնպէս երջանիկ է, երբ կանգ չենք առնում արտաքին երեւոյթների առաջ, այլ ներթափանցելով մինչեւ ներքին սրբարանը, որ Նա ընտրել է որպէս իր բնակավայր, հիանում ենք այդ ճոխ գեղեցկութեամբ: Բայց չէի գոհանում այդ քրոջ համար շատ աղօթելով – քոյր, որ զանազան ներքին պայքարներ էր ինձնում առաջացնում – այլ աշխատում էի նրան մատուցել հնարաւոր բոլոր ծառայութիւնները, իսկ երբ փորձութիւնն էի ունենում կոպտութեամբ պատասխանելու, գոհանում էի ամենագեղեցիկ ժպիտներիցս մէկը նրան նուիրելով, ինչպէս նաեւ ջանում էի փոխել խօսակցութեան նիւթը, որովհետեւ Նմանութեան գրքում ասում է. «Նախընտրելի է թողնել իւրաքանչիւրին իր տեսակէտում, քան ունայն վէճեր յարուցանել»<sup>3</sup>:

<sup>1</sup> Հմմտ. 1Կր 4, 3-4

<sup>2</sup> Ղկս 6, 37

<sup>3</sup> Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, ԽԳ 1

Յաճախ, երբ զբօսանքի մէջ չէի (ուզում եմ ասել՝ երբ աշխատանքի ժամին էի), այդ քրոջ հետ համատեղ գործ ունենալիս, երբ ներքին պայքարներս սաստկանում էին, թողնում փախչում էի ինչպէս դասալիք: Քանի որ բացարձակ կերպով անգիտանում էր իր հանդէպ տածած զգացումներս, երբեք էլ տարակոյս չունեցաւ վարուելակերպիս պատճառների վերաբերեալ, եւ մնում է համոզուած՝ թէ իր բնաւորութիւնը հաճելի է ինձ: Մի օր, զբօսանքի պահին ասաց մօտաւորապէս այս խօսքերը, ամբողջովին գոհ. «Կարո՞ղ ես ասել, քոյր Թերեզա Յիսուս Մանկան, թէ ինչն է քեզ ձգում դէպի ինձ, որովհետեւ ամէն անգամ, որ նայում ես ինձ, ժպտում ես»: Ա՛հ, այն՝ որ ձգում էր ինձ, Յիսուս ինքն էր՝ որ թաքնուած էր նրա հոգու խորքում ... Յիսուս, որ քաղցրացնում է նաեւ ամենամեծ դառնութիւնները<sup>1</sup>: Բայց իրեն պատասխանեցի, թէ ժպտում էի՝ որովհետեւ ուրախ էի իրեն տեսնելու համար (անշուշտ չաւելացրի, որ դա՝ հոգեւոր տեսանկիւնից դիտուած):

293. Մայր իմ, արդէն ասացի ձեզ. պայքարներում չյաղթուելու լաւագոյն միջոցս փախուստն է: Այն գործադրում եմ նորընծայութիւնիցս սկսած եւ միշտ էլ կատարեալ յաջողութեան եմ հասել: Ուզում եմ յիշատակել այստեղ մի օրինակ, որը ձեզ, Մայր իմ, ժպիտ կը պատճառի: Ձեր թոքաբորբներից մէկի ընթացքում, մի առաւօտ կամացո՛ւկ կամացո՛ւկ եկայ բերելու Հաղորդութեան վանդակապատի բանալիները, որովհետեւ այդ շրջանում ես էի աւանդապահուհին: Սրտիս խորքում հակառակ չէի ձեզ տեսնելու այս առիթն ունենալուս, ընդհակառակն՝ շատ գոհ էի, բայց մեծ հոգատարութեամբ ջանացի ծածկել գոհունակութիւնս, որպէսզի չարտայայտուէր դիմագծերիս մէջ: Միաբանակից քոյրերից մէկը, սակայն, ներշնչուած սուրբ նախանձախնդրութեամբ (եւ որն իրօք սիրում էր ինձ հարազատ քրոջ նման), տեսնելով իմ ներս մտնելը, Մայր իմ, կարծեց՝ թէ կամենում էի արթնացնել ձեզ: Այս իսկ պատճառով ցանկանում էր վերցնել ինձնից բանալիները, բայց ես այնքան էլ տրամադիր չէի դրանք իրեն տալու եւ իրաւունքներս զիջելու: Ամենայն քաղաքավարութեամբ պատասխանեցի, որ ես նոյնպէս չէի կամենում արթնացնել ձեզ, որ իմն էր բանալիները վերադարձնելու պարտականութիւնը: Այժմ հասկանում եմ, որ աւելի կատարեալ կը լինէր՝ եթէ տեղի տայի այդ քրոջը, որը երիտասարդ էր, այո՛, բայց ինձնից աւելի մեծ: Այնժամ չէի հասկանում եւ կամենում էի անպայման ներս մտնել, թէեւ նա հրում էր դուռը եւ խոչընդոտում ճանապարհը: Շուտով պատահեց այն՝ ինչից վախենում էինք. աղմուկը արթնացրեց ձեզ: Եւ ահա, Մայր իմ, ամէն ինչ բարդուեց իմ վրայ. քոյրը, որին դիմադրել էի, սկսեց մի ամբողջական պատմուածք հիւսել, որի առանցքային իմաստը սա էր. «Յիսուս Մանկան քոյր Թերեզան է, որ աղմուկ հանեց: Աստուած իմ, որքան անախորժ մէկն է նա»: Ես, որ ճիշտ հակառակն էի զգում, կամենում էի պաշտպանուել: Բարեբախտաբար, մի լուսաւոր գաղափար ծագեց մտքումս. ինքս ինձ ասացի, որ եթէ սկսէի ինքնարդարացումս, անկասկած կը կորցնէի հոգուս խաղաղութիւնը, բայց նաեւ զգում էի, որ առաքինութեանս չափը բաւարար չէր ոչ մի խօսք չասելու համար: Հետեւաբար, փրկութեանս վերջին լաստանաւը փախուստն էր: Մտածելս ու գործադրելս մէկ եղաւ. հեռացայ առանց թմբուկի ու շեփորի, մինչ միաբանակից քոյրս շարունակում էր իր բողոքարկումը, որը նման էր Քամիլլոսի կողմից Հռոմի դէմ արձակած չարախօսութիւններին: Միրտս այնքան արագ էր բաբախում, որ չկարողացայ շատ հեռու գնալ, այլ նստեցի աստիճանների վրայ, խաղաղութեան մէջ վայելելու համար յաղթանակիս արդիւնքը: Մեծարժէք քաջութիւն չէր, ճիշտ չէ՞, Մայր սիրելի. սակայն կարծում եմ՝ թէ նախընտրելի է ինքներս մեզ կռուելու վտանգի չենթարկել, երբ պարտութիւնն ապահով է:

<sup>1</sup> Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, Ե 3

294. Աւա՛ղ, երբ մտովին վերադառնում եմ նորընծայութեանս շրջան, տեսնում եմ՝ թէ որքա՛ն անկատար էի: Վշտանում էի այնքան չնչին բաների համար, որոնք այժմ ինձ ծիծաղ են միայն պատճառում: Ա՛հ, որքան բարի է Աստուած, որ հասունութիւն շնորհեց հոգուս եւ սուեց նրան թեւեր: Որսորդների վարմերն ու որոգայթները չեն կարող այլեւս սարսափեցնել ինձ, որովհետեւ «ի գուր է թեւաւորների դէմ ցանցեր նետելը»<sup>1</sup>: Աւելի ուշ, անկասկած, ներկայ վիճակս կը թուայ ինձ թերութիւններով լի, բայց այլեւս չեմ գարմանում ոչնչի համար, չեմ վշտանում տեսելով, որ ինքնին մարմնաւորուած տկարութիւնն եմ: Ընդհակառակն, անուժութիւնս է պարծանքս<sup>2</sup>, եւ ես սպասում եմ ինձնում օրէցօր նորանոր անկատարութիւններ բացայայտելուն:

295. Յիշելով, որ «սէրը ծածկում է մեղքերի բազմութիւնը»<sup>3</sup>, դիմում եմ այս բարեբեր հանքին, որ Յիսուս բացել է իմ առաջ: Աւետարանում մեր Տէրը բացատրում է՝ թէ ինչում է կայանում Իր «նոր պատուիրանը»: Ասում է. «Լսել էք արդարեւ, թէ ինչ ասուեց նախնիներին. *”Պիտի սիրես ընկերոջդ եւ պիտի ատես քո թշնամուն:*” Իսկ ես ասում եմ ձեզ. սիրեցէք ձեր թշնամիներին եւ աղօթեցէք նրանց համար՝ ովքեր չարչարում են ձեզ ու հալածում»<sup>4</sup>: Կարմեղոսում թշնամիներ անշուշտ չունենք, բայց զգացում է համակրանքների ներկայութիւնը: Մեզ աւելի մղուած ենք զգում դէպի այս անձը, փոխանակ միւսի, որին հանդիպելուց խուսափելու համար փոխում ենք մեր ճանապարհը: Այսպիսով, ակամայ, անգիտակից կերպով, վերջինս դառնում է հալածանքի առարկայ: Մինչդեռ Յիսուս ինձ ասում է՝ թէ պէտք է սիրեմ այդ միաբանակցին, աղօթեմ իր համար, նոյնիսկ երբ իր վարուելակերպից ինձ թուում է՝ թէ նա ինձ չի գնահատում: «Եթէ ձեզ սիրողներին միայն սիրէք, ո՞րն է ձեր արած շնորհը, որովհետեւ մեղաւորներն էլ են սիրում իրենց սիրողներին»<sup>5</sup>:

296. Բայց բաւական չէ լուր սիրելը, հարկաւոր է փաստել, գործի վերածել սէրը: Բնականաբար, մեր համար մեծ ուրախութիւն է մեր մտերիմներին նուէրներ տալը, յատկապէս հաճելի է անակնկալներ մատուցելը. սա, սակայն, բուն սէրը չէ, որովհետեւ այս նոյն սովորութիւնը ունեն նաեւ մեղաւորները: Ահա թէ ինչ է դեռ ուսուցանում ինձ Յիսուս. «Ամէն մարդու, որ քեզնից խնդրում է, տուր, եւ ինչ էլ մէկը քեզնից վերցնի, ետ մի՛ պահանջիր»<sup>6</sup>: Բոլոր խնդրողներին գոհացնելը նուազ քաղցր է՝ քան սրտի ազդակներից մղուած ինքնաբերաբար նուիրելը: Նաեւ երբ խնդրում են մեծ քաղաքավարութեամբ, դժուար չէ տալը, բայց եթէ դժբախտաբար չեն օգտագործում փափկանկատ խօսքեր, հոգիդ իսկոյն ապստամբում է, եթէ հիմնուած չէ սիրոյ վրայ: Գտնում է հազարումի պատճառներ՝ մերժելու համար, եւ խնդրողի անփափկանկատութիւնը նրա երեսին խփելուց յետոյ է միայն, որ որպէս ողորմութիւն տալիս է այն՝ ինչ խնդրում էր: Եւ կամ մի թեթեւ ծառայութիւն է մատուցում, որը գոհացնելու համար քսան անգամ նուազ ժամանակ էր պահանջւում՝ քան իր երեւակայական իրաւունքների պաշտպանման համար: Բայց եթէ դժուար է տալ ամէն մարդու, որ խնդրում է, առաւել եւս դժուար է թողնելը, որ վերցնեն մեզ պատկանող իրերը, առանց պարտադրելու, որ դրանք ետ վերադարձուեն մեզ: Մայր

<sup>1</sup> Առկ 1, 17

<sup>2</sup> Հմմտ. 2Կր 12, 5

<sup>3</sup> Առկ 10, 12

<sup>4</sup> Մտթ 5, 43-44

<sup>5</sup> Ղկս 6, 32

<sup>6</sup> Ղկս 6, 30

իմ, ասում եմ՝ թէ դժուար է, բայց պէտք է ասէի՝ թէ թւում է դժուար, որովհետեւ Տիրոջ բեռը քաղցր է ու թեթեւ<sup>1</sup>: Երբ այն յանձն ենք առնում սիրով, իսկոյն զգում ենք նրա քաղցրութիւնը եւ բացականչում ենք Սաղմոսերգուի հետ. «Միրոս ընդարձակելուցդ յետոյ սրընթաց արշաւում եմ պատուիրաններիդ ճանապարհով»<sup>2</sup>: Միայն սէրն է կարողանում ընդարձակել իմ սիրտը: Ա՛հ, Յիսուս, այն օրից ի վեր՝ ինչ այս քաղցրիկ բոցը սպառում է ինձ, մեծ ուրախութեամբ եմ ընթանում նոր պատուիրանիդ ճանապարհով: Ուզում եմ ընթանալ նրանում մինչեւ այն երջանիկ օրը, որում արքայական շքախմբիդ միանալով՝ կը կարողանամ հետեւել Քեզ անսահմանափակ տարածքներում, երգելով Քո նոր երգը<sup>3</sup>, այն է՝ երգը Միրոյ:

297. Ասում էի՝ Յիսուս չի կամենում, որ պահանջեմ այն՝ ինչ պատկանում է ինձ: Սա պէտք է հեշտ ու բնական թուայ, քանի որ անձամբ ես ոչինչ չունեմ: Աշխարհի բարիքներից հրաժարուեցի աղքատութեան ուխտով, հետեւաբար՝ իրաւունք չունեմ դժգոհելու, երբ զրկւում եմ այն իրերից, որոնք տրամադրուած են ինձ առ ի գործածութիւն. աւելին՝ պէտք է ուրախանամ, երբ զգում եմ աղքատութիւնը: Մի ժամանակ թւում էր ինձ՝ թէ կապուած չէի ոչնչի, բայց երբ հասկացայ Յիսուսի խօսքերը, տեսայ՝ թէ գործնականում որքան թերի էի: Օրինակ, նկարչական գործիքներից ոչ մէկն իմը չէ, դա լաւ գիտեմ. բայց եթէ յանկարծ գործի անցնելիս գտնում եմ վրձիններն ու գունաներկերը ամբողջովին տակնուվրայ արուած, եթէ անկիւնագիծներից կամ փոքր դանակներից մէկն անհետացած է լինում, համբերութիւնս քիչ է մնում լքի ինձ, եւ ստիպուած եմ լինում բոլոր ուժերովս զսպել ինձ, որոշ դառնութեամբ ետ չպահանջելու համար ինձ անհրաժեշտ իրերը: Երբեմն, այո՛, պէտք է խնդրել մեզ հարկաւոր իրերը, բայց դա խոնարհութեամբ անելով՝ չենք թերանում Յիսուսի պատուիրանի գործադրման մէջ, աւելին՝ վարւում ենք ինչպէս իրական աղքատներ, որոնք մեկնում են իրենց ձեռքի ափը՝ ստանալու համար այն՝ ինչ իրենց հարկաւոր է. իսկ եթէ մերժում են, չեն գարմանում, որովհետեւ ոչ ոք իրենց ոչինչ պարտաւոր չէ: Ա՛հ, ինչպիսի խաղաղութեամբ է ողողւում հոգին, երբ բարձրանում է գերիվեր՝ քան բնական զգացումները: Չկայ ուրախութիւն, որը հնարաւոր լինի համեմատել այն խնդութեան հետ, որ ճաշակում է հոգով իրական աղքատը: Եթէ անջատուած հոգու ազատութեամբ խնդրում է որեւիցէ մի բան, եւ ոչ միայն խնդրանքն են իրեն մերժում, այլ նաեւ փորձում են տիրել ունեցածին, նա հետեւում է Յիսուսի խորհրդին. «Եթէ մէկը կամենայ քեզ բռնադատել ու քո շապիկն առնել, նրան բաճկոնդ էլ թող»<sup>4</sup>:

298. Ինձ այնպէս է թւում՝ թէ բաճկոնը թողնելը մեր վերջին իրաւունքներից հրաժարուելն է, համարուելով բոլորի ծառան: Երբ մի կողմ է նետում բաճկոնը, աւելի հեշտ է դառնում քայլքը, ընթացքը: Այս իսկ պատճառով Յիսուս աւելացնում է. «Եւ եթէ մէկը հարկադրի քեզ իր հետ մի մղոն ճանապարհ անցնել, դու երկու մղոն գնայ»<sup>5</sup>: Այսպէս, բաւական չէ խնդրողներին որեւիցէ առարկայ տալը, կարելոր է խնդրանքներին, կարիքներին ընդառաջ ելնելը, ծառայութիւն մատուցելու, օգտակար լինելու համար ուրախ եւ գոհունակ հոգեվիճակը, եւ եթէ վերցնում են ինձ պիտանի իրերը, չպէտք է ողբամ կամ արտասուեմ, այլ ընդհակառակն՝ ցոյց տամ դրանցից

<sup>1</sup> Մտթ 11, 30

<sup>2</sup> Սղմ 118, 32

<sup>3</sup> Հմմտ. Յյտ 14, 3

<sup>4</sup> Մտթ 5, 40

<sup>5</sup> Մտթ 5, 41

ձերբազատուելու երջանկութիւնս: Մայր սիրելի, բաւական հեռու եմ գործադրելուց այն՝ ինչ ըմբռնում եմ, եւ սակայն սիրոյ այդ աստիճանին հասնելու լոկ փափաքն անգամ անձս խաղաղութեամբ է լիացնում:

299. Զգում եմ աւելի՝ քան ուրիշ անգամներ, որ շատ վատ եմ բացատրում մտքերս: Մի տեսակ ճառ խօսեցի սիրոյ վերաբերեալ եւ ընթերցելիս այն թերեւս յոգնեցրեց ձեզ: Ներող եղէք, Մայր իմ, եւ մտածէք, որ հիւանդապահուհիներն այս պահին գործադրում են իմ հանդէպ այն՝ ինչ գրում եմ. չեն վարանում երկու հազար քայլ կատարել այնտեղ՝ ուր բաւական են նաեւ քսանը: Հնարաւորութիւնն ունեցայ, հետեւաբար, ականատես լինելու գործով փաստուած սիրոյն: Անկասկած, հոգիս զգում է իրեն դրանով օժուած, բայց ինչ վերաբերում է բանականութեանս, խոստովանում եմ, որ այն մի քիչ անդամալուծուած է նմանօրինակ անձնանուիրմանն ի տես, եւ գրիչս նոյնպէս կորցրել է իր թեթեւութիւնը: Որպէսզի կարողանամ շարադրել մտքերս, հարկ է՝ որ լինեմ միայնակ ճնճղուկի նման<sup>1</sup>, իսկ սա պատահում է ինձ շատ հազուադէպ: Հազիւ եմ գրիչը ձեռքս վերցնում, ահա յայտնուում է մի բարի քոյր, որը եռաժանին ուսին անցնում է մօտակայքովս: Կարծում է հանգստացնել ինձ մտքերիցս, մի քանի փոքրիկ շատախօսութիւն կազմակերպելով. հաւաքելիք յարդը, բաղերը, հաւերը, բժշկի այցելութիւնը. ամէն բան սեղանի վրայ է նետուում: Ծիչտն ասած շատ երկար չի տեւում, բայց բարի տրամադրուած քոյրերը վանքում մէկից աւելի են եւ ահա մի ակնթարթ անց՝ խոտի հաւաքումը ստանձնած քոյրերից մէկը ծնկներին է դնում ծաղիկների մի փունջ, այդպիսով համարելով, թերեւս, ներշնչել ինձ բանաստեղծական մտքեր: Ես, որ այս պահին դրանց կարիքը չունեմ, կը նախընտրէի, որ այդ ծաղիկները շարունակէին օրօրուել իրենց ցօղունների վրայ: Վերջիվերջոյ, այս հուշակաւոր տետրը բացել փակելուց յոգնած, բացում եմ մի գիրք (որը նոյնպէս չի կամենում երկար ժամանակ բաց մնալ) եւ վճռականօրէն ասում, որ տողեր եմ արտագրում Մաղմոսներից ու Աւետարանից, մեր Մօր տօնի համար<sup>2</sup>: Սա կատարեալ ճշմարտութիւն է, որովհետեւ մէջբերումների խնայողութիւն չեմ անում:

300. Մայր իմ, բաւական զուարճացրի ձեզ, կարծում եմ, պատմելով Կարմեղոսի պուրակում պատահած բոլոր արկածներս. չգիտեմ՝ թէ կարողացա՞յ արդեօք տասը տող գրել առանց խանգարուելու: Այս հանգամանքը չպէտք է ժպիտ պատճառէր ինձ, եւ ոչ էլ զուարճացնէր, բայց ի սէր Աստուծոյ եւ իմ քոյրերի (որոնք այսքան սիրալի են իմ հանդէպ), աշխատում եմ գոհունակ դիմագծեր ունենալ եւ յատկապէս՝ լինել այդպիսին: Ահա հեռանում է ինձնից յարդի հաւաքմամբ զբաղուող քոյրերից մէկը, ցաւակցող ձայներանգով այս խօսքերն ասելուց յետոյ. «Նեղձ փոքրիկ քոյրիկ, բաւական յոգնում ես ամբողջ օրը գրելով»: «Հանգիստ եղիր, – պատասխանեցի, – թւում է՝ թէ շատ եմ գրում, մինչ իրականում չեմ գրում գրեթէ ոչինչ»: «Աւելի լաւ, – շարունակեց ինքնավստահ շեշտով, – բայց ոչինչ, ես գոհ եմ, որ խոտ չորացնելով ենք զբաղուած եւ այստեղ ենք. կարող եմ մի քիչ ցրում պարգեւել քեզ»: Եւ իրօք, սա իմ համար մի այնքան մեծ ցրուածութիւն է (չհաշուած հիւանդապահուհի քոյրերի այցելութիւնները), որ չեմ ստում ասելով՝ «չեմ գրում գրեթէ ոչինչ»:

Բարեբախտաբար, հեշտօրէն չեմ վհատուում. սա ձեզ ցոյց տալու համար, Մայր իմ, կը վերջացնեմ բացատրելով ձեզ այն՝ ինչ Յիսուս հասկացրեց ինձ սիրոյ վերաբերեալ: Մինչ այժմ խօսեցի միայն արտաքին տեսանկիւնից դիտուած. այժմ

<sup>1</sup> Հմմտ. Սղմ 102, 7

<sup>2</sup> Մայր Մարիամ Գոնձակայի անուան տօնը միաբանակիցները նշում էին Յունիսի 21-ին, Սուրբ Ալոգիոս Գոնձակայի տօնի օրը:

կ'ուզէի յայտնել ձեզ՝ թէ ինչպէս եմ ես հասկանում զուտ հոգեւոր սէրը: Վստահ եմ, որ չեմ ուշանայ մէկը միւսին խառնելու գործում, բայց, Մայր իմ, քանի որ գրում եմ ձեզ, ապահով եմ, որ ձեր համար դժուար չի լինի ըմբռնել միտքս ու քանդել ձեր դստեր ստեղծած կծիկը:

301. Միշտ չէ, որ Կարմեղոսում հնարաւոր է գործադրել Աւետարանը տառացի կերպով: Երբեմն, պարտականութիւնների բերումով, ստիպուած ենք լինում մերժել մի խնդրանք կամ ծառայութիւն: Բայց երբ սէրը խոր արմատներ է նետում հոգու մէջ, տեսանելի է դառնում նաեւ դրսից: Կայ մերժելու մի այնքան ազնիւ կերպ, որ մերժումը նոյնքան հաճելի է ստացւում, որքան մատուցուելիք ծառայութիւնը: Այո՛, ճիշտ է, աւելի մեծ համարձակութեամբ ենք օգնութիւն խնդրում այն միաբանակիցներից, որոնք միշտ տրամադիր են կատարելու, եւ սակայն Յիսուս ասում է. «Ով կամենում է քեզնից փոխ առնել, երես մի՛ դարձրու նրանից»<sup>1</sup>: Այսպիսով, ստիպուած մերժելու պատճառաբանութեամբ չպէտք է հեռանանք այն միաբանակիցներից, որոնք ծառայութիւններ խնդրելու տեւական սովորութիւնն ունեն: Բայց նաեւ չպէտք է ծառայական լինել առաքիլի երեւալու համար, կամ յուսալով՝ թէ մի ուրիշ անգամ այն անձը, որի հանդէպ ազնիւ գտնուեցինք, կը փոխհատուցի մեզ, որովհետեւ մեր Տէրն ասում է. «Եթէ փոխ էք տալիս միայն նրանց, որոնցից ետ առնելու ակնկալութիւնն ունէք, ո՞րն է ձեր արած շնորհը, քանի որ մեղաւորներն էլ են փոխ տալիս մեղաւորներին, որպէսզի նոյն չափով ետ առնեն: Բայց ինչ վերաբերւում է ձեզ, բարեգործեցէք, փոխ տուէք նրանց, որոնցից ետ առնելու ակնկալութիւնը չունէք: Եւ ձեր վարձը մեծ կը լինի»<sup>2</sup>: Այո՛, վարձը մեծ է նաեւ երկրի վրայ: Այս ճանապարհում միայն առաջին քայլերն են ծանր նստում մեր ուսերին: Առանց փոխհատուցում յուսալու փոխ տալը բաւական կոշտ է թւում բնութեանը, կը նախընտրէինք նուիրել, որովհետեւ նուիրուած առարկան մեզ այլեւս չի պատկանում: Երբ գալիս են համոզուած արտայայտութեամբ ձեզ ասելու. «Մի քանի ժամով օգնութեանդ կարիքն ունեմ, բայց մի՛ մտահոգուիր, թոյլտուութիւն եմ ստացել մեր Մօրից եւ կը վերադարձնեմ քեզ այն ժամանակը, որ տրամադրում ես ինձ, որովհետեւ գիտեմ՝ թէ որքան զբաղուած ես», իրօք, երբ շատ լաւ գիտենք, որ փոխ տրուած այդ ժամանակը երբեք չի վերադարձուելու մեզ, կը նախընտրէինք ասել. «Այն քեզ նուիրում եմ»: Սա գոհացում կը պատճառէր մեր անձնասիրութեանը, որովհետեւ նուիրելն աւելի վեհ արարք է՝ քան փոխ տալը: Ինչպէս նաեւ՝ այդպիսով զգացրած կը լինէինք ինքրարկուին, որ մեր համար այնքան էլ արժէքաւոր չեն իր փոխադարձ ծառայութիւնները: Ա՛հ, Յիսուսի ուսուցումները որքա՛ն հակընթաց են բնական զգացումներին: Առանց իր շնորհի օգնութեան ո՛չ միայն անհնարին կը լինէր դրանց գործադրումը, այլ նաեւ ըմբռնումն իսկ:

<sup>1</sup> Մտթ 5, 42

<sup>2</sup> Հմմտ. Ղկա 6, 34-35

## 2. ՅԻՍՈՒՄԻ ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ (1897)

Սիրելի՛ ինչպէս Յիսուս մեզ սիրեց – Չդատել – Յաղթական գործադրումներ – Աւետարանական սիրոյ պահանջները – Հոգով իրական աղքատի բերկրանքը – Անգոգոյշ խնամքներ – Ծառաներ բոլորի եւ առանց իրաւունքների – Յիսուսի «փոքրիկ» վրձինը գործի մէջ – Աղօթքի ուժը – Նուաստացման կենսատու հացը – Քոյր Սան Պիետրոն – Երկու քահանայ եւ առաքեալ «եղբայրներ»ը – «Զգիր ինձ, ընթանանք ... » – Վերջին երեկոյի աղօթքը – Աստծոյ հանդէպ անսահմանօրէն մեծ սէրն ու վստահութիւնը

302. Մայր իմ, Յիսուս շնորհեց ինձ ներթափանցել սիրոյ խորին խորհուրդներից ներս: Եթէ կարողանայի արտայայտել այն՝ ինչ հասկանում եմ, դուք մի երկնային մեղեդի կ'ունկնդրէիք, բայց աւա՛ղ, ձեր լսողութեանը պարզեւելու մանկական թոթովանքներ միայն ունեմ ... : Եթէ նոյն ինքն Յիսուսի խօսքերը թիկունք չկանգնէին ինձ, ստիպուած կը լինէի խնդրել մի կողմ թողնել գրիչը: Բայց ոչ, հարկ է՝ որ յանուն հնազանդութեան շարունակեմ այն՝ ինչ յանուն հնազանդութեան սկսել եմ:

Մայր սիրելի, երէկ գրում էի՝ թէ աշխարհի բարիքներն ինձ չեն պատկանում, հետեւաբար՝ իմ համար դժուար չպէտք է լինի դրանցից զրկուելը: Երկնքի բարիքները նոյնպէս ինձ չեն պատկանում, այլ մեծ մասամբ փոխ են տրուած ինձ Տիրոջից եւ Նա իրաւասու է դրանք ինձնից կրկին ետ վերցնելու: Տրանջալու իրաւունք չունեմ: Եւ սակայն բարիքները, որ ուղղակի Աստծուց են գալիս, բանականութեան ու սրտի մղումները, իմաստալի խորհրդածումները, այս բոլորը յաճախ վերածւում են հարստութեան, որին կապւում ենք իբրեւ մեր սեփականութիւնը եւ որին, մեր կարծիքով, ոչ ոք հպուելու իրաւունք չունի: Օրինակ, եթէ զբօսանքի պահին մեր միաբանակցին հաղորդում ենք աղօթքի պահին ըմբռնած մի քանի հասկացողութիւն, եւ որոշ ժամանակ անց այս վերջինս խօսելով մի ուրիշի հետ՝ նրան է փոխանցում իրեն վստահուած գաղափարները, կարծես թէ ինքը խորհած լինէր դրանց շուրջ, թւում է՝ թէ նա սեփականացնում է այն՝ ինչ իրենը չէ: Եւ կամ հանգստի պահին ինչ որ մէկին ցածրաձայն ասում ենք ճիշտ տեղին ասուած եւ հոգեւոր իմաստներով լի մի խօսք, եթէ նա արտայայտուած միտքը կրկնում է բարձրաձայն, առանց յայտնելու բխման ակունքը, արարքը թւում է ուրիշի սեփականութեան հանդէպ կատարուած ոտնձգութիւն: Այդ ուրիշը տուեալ պահին չի բողբոջում, բայց կ'ուզէր բողբոջել, եւ նպաստաւոր առաջին առիթն իսկ չի փախցնի մեծագոյն նրբութեամբ հասկացնելու՝ թէ ինչ որ մէկը տիրացել է իր մտքերին:

303. Մայր իմ, չէի կարողանայ մարդկային բնութեան այս տխուր զգացումներն այսքան լաւ բացատրել, եթէ դրանց փորձառութիւնը չունենայի սրտիս մէջ. ինչպէս նաեւ, իմ համար շատ հաճելի կը լինէր օրօրել ինձ այն քաղցր պատրանքում՝ թէ դրանց այցելութեանը իմ սիրտն է միայն ենթարկուել, եթէ հրամայած չլինէիք ինձ ունկնդրել ձեր փոքրիկ թանկագին նորընծայուհիների փորձութիւնները: Ծատ բաներ սովորեցի ինձ յանձնուած այս առաքելութեան գործադրման ժամանակ, յատկապէս հարկադրուեցի գործի վերածելու այն՝ ինչ ուսուցանում էի ուրիշներին: Այս իսկ պատճառով այժմ կարող եմ ասել, որ Յիսուս շնորհեց ինձ չչղթայուել հոգու եւ սրտի բարիքներին աւելի՛ քան աշխարհի նիւթական բարիքներին: Եթէ պատահում է, որ խորհեմ եւ արտայայտեմ քոյրերիս հաճելի մի միտք, բնական եմ համարում, որ տիրանան դրան ինչպէս իրենց սեփականութեանը: Այդ միտքը պատկանում է Սուրբ

Հոգուն, եւ ո՛չ թէ ինձ, քանի որ Պօղոս Առաքեալը նոյնպէս ասում է, որ չենք կարող, առանց այս Սիրոյ Հոգու, «Հայր» կոչել մեր Հօրը, որ Երկնքում է<sup>1</sup>: Հետեւաբար, Նա լիովին ազատ է օգտագործելու ինձ, հոգիներին բարի մտքեր հաղորդելու համար: Եթէ յանկարծ ենթադրեմ իսկ, թէ այդ գաղափարն իմն է, կը նմանուեմ «այն ավանակին, որի վրայ դրած փոխադրում էին Սրբերի մասունքներ», եւ որին թւում էր՝ թէ Սրբերին մատուցուած խոնարհումներն իրեն էին ուղղուած<sup>2</sup>:

304. Չեմ արհամարհում խորիմաստ խորհրդածուումները, որոնք սնում են հոգին եւ միացնում Աստծուն: Բայց երկար ժամանակից ի վեր հասկացել եմ, որ չպէտք է հիմնուենք նրանց վրայ կամ կարծենք՝ թէ կատարելութիւնը կայանում է մտային բազմաթիւ լոյսեր ստանալու մէջ: Ամենալիցիւս խորհրդածուումներն անգամ ոչինչ են առանց գործերի: Ճիշտ է, որ շատերը կարող են մեծապէս օգտուել դրանցից, եթէ խոնարհուեն եւ մատուցեն Աստծուն իրենց երախտագիտութիւնը, որովհետեւ թոյլատրում է իրենց մասնակցել մի հոգու ուրախութեանը, որին ճոխացնում է Իր շնորհներով: Բայց եթէ այս վերջինս ինքնահաստատութեան է տրուում իր այդ գեղեցիկ մտքերի պատճառով, եթէ սկսում է մրմնջալ փարիսեցու աղօթքը<sup>3</sup>, նմանում է մէկին, որն ախորժալի խորտիկներով ծանրաբեռնուած սեղանի առաջ մահանում է քաղցից, մինչ իր բոլոր հիւրերը առատ սնունդ են հայթայթում եւ երբեմն երբեմն նոյնիսկ նախանձալի ակնարկներ նետում դէպի այդքա՛ն բարիքների տէրը: Ա՛հ, միայն Աստուած Ինքն է ճանաչում սրտերը: Իսկ մարդիկ ... որքա՛ն սահմանափակ մտածելակերպ ունեն մարդիկ: Երբ տեսնում են միւսներից ակելի լուսաւորուած մի հոգի, իսկոյն եզրակացնում են՝ թէ իրենք այդ հոգուց նուազ սիրելի են Յիսուսին եւ թէ իրենք կանչուած չեն կարող լինել միեւնոյն կատարելութեանը: Այդ երբուանից Տէրն այլեւս իրաւունք չունի օգտագործելու Իր արարածներից մէկին՝ իրեն սիրելի հոգիներին անհրաժեշտ սնունդը մատակարարելու համար: Եզիպտական փարաւոնների ժամանակ Աստուած դեռ ունէր այդ իրաւունքը, որովհետեւ Սուրբ Գրքում ասում է այդ թագաւորներից մէկին. «Քեզ գահ բարձրացրի յատուկ նպատակով. որպէսզի քեզնով յայտնեմ զօրութիւնս, եւ Անունս հռչակուի ամբողջ երկրով մէկ»<sup>4</sup>: Դարերը յաջորդեցին դարերին այն օրից ի վեր՝ ինչ Բարձրեալը ծանուցեց այս ճշմարտութիւնը, բայց Իր վարուելակերպը չփոխուեց: Միշտ էլ օգտագործել է Իր արարածներին որպէս գործիքներ, հոգիներում ի կատար ածելու համար Իր ծրագրերը:

305. Եթէ արուեստագործի նկարներից մէկը հնարաւորութիւնը ստանար մտածելու եւ խօսելու, վստահ եմ, որ չէր դժգոհի վրձնի կողմից իր հպուած ու վերահպուած լինելու համար, եւ ոչ էլ կը նախանձէր այդ գործիքի ճակատագրին, որովհետեւ քաջ կը գիտակցէր, որ ո՛չ թէ վրձնին, այլ այն իր ձեռքում բռնող նկարչին է պարտական իր գեղեցկութիւնը: Եւ վրձինը նոյնպէս իր հերթին չի կարող պարծենալ ստացուած գլուխգործոցի համար, որովհետեւ գիտէ, որ արուեստագէտները անելանելի վիճակների չեն ենթարկուում, որ ժպտում են դժուարութիւնների դիմաց, եւ երբեմն էլ սիրում են ընտրել տկար ու ոչ այնքան կատարեալ գործիքներ:

Մայր իմ, Յիսուսից ընտրուած մի վրձին եմ, ձեր կողմից ինձ վստահուած հոգիներում Իր իսկ պատկերը նկարելու համար: Բայց արուեստագէտը չի գործածում

<sup>1</sup> Հմմտ. Հոմ 8, 15

<sup>2</sup> LA FONTAINE, *Fables*, 1. 5, 14.

<sup>3</sup> Տէ՛ս՝ Ղկս 18, 9-14

<sup>4</sup> Ել 9, 16

միայն մի վրձին, նրան անհրաժեշտ են առնուազն երկուսը: Առաջինն ամենաօգտակարն է, նրանով է կտաւը ծածկում ընդհանուր գոյներով, կարողանալով գործը կարճ ժամանակամիջոցում վերջացնել: Երկրորդը, փոքրիկը, ծառայում է մանրամասնութիւնները ճշտելու համար<sup>1</sup>:

Մայր իմ, դուք էք այն թանկարժէք վրձինը, որ Յիսուս օգտագործում է մեծ սիրով, երբ կամենում է ինչ որ մի մեծ գործ կատարել իր դուստրերի հոգիներում: Իսկ ես այն փոքրագոյնն եմ, որին բարեհաճում է գործի դնել վերջում, գրեթէ աննկատելի զարդերանգները վրձնագրելու համար:

306. Առաջին անգամ, որ Յիսուս գործի դրեց իր փոքրիկ վրձինը, 1892ի Դեկտ. 8ին մօտ մի օր էր: Միշտ յիշելու եմ այդ շնորհալի օրերը, եւ արդ կ'աշխատեմ յայտնել ձեզ, Մայր իմ սիրելի, այդ քաղցր յիշատակները:

Տասնհինգ տարեկան հասակում, երբ երջանկութիւնն ունեցայ կարմեղոս մտնելու, գտայ նորընծայակից մի ընկերուհի<sup>2</sup>, որը վանք էր մտել ինձնից մի քանի ամիս առաջ: Ինձնից ութ տարով մեծ էր, բայց իր մանկական բնաւորութիւնը մոռանալ էր տալիս տարիքի տարբերութիւնը: Այս իսկ պատճառով, Մայր սիրելի, դուք շուտով ուրախութիւնն ունեցաք տեսնելու՝ թէ ինչպէս էին ձեր փոքրիկ հայցուորուհիները հասկանում միմեանց հրաշալի կերպով եւ դառնում անբաժանելի: Նպաստելու համար այս նորածին մտերմութեանը, որը ձեզ թւում էր առատ պողաբերման ընդունակ, թոյլատրեցիք մեզ երբեմն երբեմն հոգեւոր խօսակցութիւններ ունենալ: Ընկերուհիս հմայում էր ինձ իր անմեղութեամբ, միամտութեամբ, իր հաղորդական նկարագրով, բայց միւս կողմից էլ ապշում էի, տեսնելով թէ ինչպէս էր իր իմ հանդէպ տաժած մտերմութեան զգացումը բաւական տարբերում իմ իր հանդէպ սնած զգացումներից: Կ'ուզէի նաեւ, որ սրբագրէր նորընծայակից քոյրերի հետ իր վարուելաձեւի որոշ գծեր: Այդ շրջանում էր, որ Աստուած հասկացրեց ինձ՝ թէ ինչպէս իր ողորմութիւնը չի յոգնում որոշ հոգիների սպասելուց, որոնց տալիս է իր լոյսը միայն աստիճան առ աստիճան: Այս իսկ պատճառով, խուսափում էի ընկերուհուս համար սահմանուած ժամը կանխելուց, եւ սպասում էի մեծ համբերութեամբ, որ Յիսուս ինքը հասունացնէր այդ պահը:

307. Մի օր, խորհրդածելով այն թոյլտուութեան շուրջ, որ շնորհել էիք մեզ, ինչպէս գրուած է մեր սրբած սահմանադրութեան մէջ. «Աստուծոյ սիրոյ մէջ միմեանց աւելի ու աւելի բոցավառելու համար», տխրութեամբ մտածեցի, որ մեր գրոյցները չէին հասնում սպասուած նպատակին: Այնժամ զգացի, որ Տիրոջ կողմից սահմանուած պահը հասել էր, եւ որ այլեւս չպէտք է խուսափէի խօսելուց, այլապէս՝ պարտաւոր էի դադարեցնել այդ խօսակցութիւնները. դրանք նմանում էին, իրօք, աշխարհաբնակ ընկերուհիների գրոյցներին: Այդ օրը շաբաթ էր: Յաջորդ առաւօտեան, յետպատարագեայ գոհութեան աղօթքիս ժամանակ, Տիրոջն աղաչեցի ներչնչել ինձ քաղցր ու համոզիչ խօսքեր, կամ աւելի շուտ՝ որ իմ միջոցով հէնց ինքը խօսէր: Յիսուս լսեց աղօթքս եւ կամեցաւ, որ արդիւնքը լիովին գոհացնի յոյսերս, որովհետեւ «նրանք՝ ովքեր դէպի Տէրն են յառում իրենց հայեացքը, լուսաւորուում են»<sup>3</sup> եւ «խաւարում լոյս է ծագում նրանց համար, որոնց սրտերը ուղիղ են»<sup>4</sup>:

<sup>1</sup> Յիշենք, որ նորընծայուհիների վերակացուն նոյն ինքն մայր Մարիամ Գոնձական էր, մինչ թերեզան վարում էր փոխմեծաւորուհու պաշտօնը:

<sup>2</sup> Քոյր Մարթա Յիսուսի:

<sup>3</sup> Հմմտ. Սղմ 33, 6

<sup>4</sup> Հմմտ. Սղմ 111, 4

Առաջին խօսքն ուղղուած է ինձ, իսկ երկրորդն՝ ընկերուհուս, որի սիրտն իրօք մաքուր էր եւ ինքն՝ ուղղամիտ:

Երբ հասաւ մեր գրոյցների սովորական ժամը, խեղճ ընկերուհիս աչքերը վրաս յառելով իսկոյն նկատեց, որ այլեւս նոյնը չէի: Նստեց իմ մօտ, կարմրած դէմքով, իսկ ես, կրծքիս յենելով իր գլուխը, արտասուալի ձայնով ասացի այն ամէնը՝ ինչ մտածում էի իր մասին, բայց այնքան քնքշալի արտայայտութեամբ, այնքան գորովով, որ շուտով իր արցունքները նոյնպէս խառնուեցին իմօնց: Ընդունեց մեծ խոնարհութեամբ՝ թէ այն, ինչ ասում էի, ճշմարիտ էր: Ապա խոստացաւ նոր կեանք սկսել, ինչպէս նաեւ որպէս շնորհ խնդրեց միշտ տեղեակ պահել իրեն իր թերութիւններին: Վերջապէս, բաժանման պահին մեր մտերմութիւնը դարձել էր ամբողջովին հոգեւոր, մարդկային այլեւս ոչինչ չկար նրանում: Եւ մեզնում նոյնպէս իրականացաւ Սուրբ Գրքի հետեւեալ խօսքը. «Միմեանց օգնութեան հասնող եղբայրները նման են պարսպապատ հզօր քաղաքների»<sup>1</sup>:

308. Այն՝ ինչ Յիսուս կատարեց իր փոքրիկ վրձնի միջոցով, շատ շուտով ի չիք կը դառնար, եթէ Նա չգործէր նաեւ ձեր միջոցով, Մայր իմ, իրականութեան վերածելով իր նպատակներն այն հոգու մէջ, որին կամենում էր տեսնել ամբողջովին իրենը: Կրած վիշտը չափազանց դառն թուաց խեղճ ընկերուհուս, բայց այն հաստատակամութիւնը, որով դուք, Մայր իմ, օգնութեան հասաք նրան, յաղթանակեց: Յայնժամ ես, ջանալով մխիթարել նրան, որին ինձ որպէս քոյր էիք տուել բոլորի միջից, կարողացայ նրան բացատրել՝ թէ ինչու է կայանում իրական սէրը: Յոյց տուի իրեն, որ սիրում էր իր իսկ անձը եւ ոչ թէ ձեզ, Մայր իմ, յայտնեցի իրեն՝ թէ ինչպէս էի ես սիրում ձեզ եւ թէ ինչպիսի գոհողութիւններ էի ստիպուած կատարում վանական կեանքիս սկզբում, ձեզ նիւթապէս չկապնուելու համար, նման այն շանը, որ կապնում է իր տիրոջը: Սէրը սնուում է գոհողութիւններով. որքան աւելի է հոգին ինքն իրեն զրկում բնական գոհունակութիւններից, այնքան աւելի է իր քնքշանքը դառնում հզօր ու անշահախնդիր:

309. Յիշում եմ, որ երբ հայցուորուհի էի, երբեմն ուրախութեան մի քանի կաթիլ գտնելու այնպիսի բուռն փորձութիւններ էի ունենում, ինքս ինձ գոհացում տալու համար ձեր մօտ մտնելու, որ ձեր աշխատասենեակի առջեւով անցնելիս, Մայր իմ, ստիպուած էի լինում արագացնել քայլերս, գրեթէ վազելով փախչել եւ պինդ բռնել աստիճանների բազրիքից: Մտքումս պտտում էր խնդրուելիք թոյլտուութիւնների մի ահռելի բազմութիւն. մի խօսքով, Մայր իմ, գտնում էի հազար ու մի պատճառ, գոհացնելու համար բնութիւնս: Որքա՛ն գոհ եմ այժմ, վանական կեանքիս սկզբից ի վեր ինքս ինձ դրանցից զրկած լինելուս համար: Արդէն իսկ վայելում եմ այն վարձը, որ խոստացուած է քաջութեամբ պայքարողներին: Այլեւս անհրաժեշտ չեմ համարում զրկելն ինձ սրտի բոլոր մխիթարութիւններից, որովհետեւ հոգիս նորանոր ուժեր է ստանում Նրանից, ում էի միմիայն կամենում սիրել: Տեսնում եմ մեծ ուրախութեամբ, որ իրեն սիրելով սիրտն ընդարձակում է եւ կարողանում է անհամեմատելիօրէն աւելի շատ քնքշանք բաշխել իր սիրելիներին, քան եթէ ամփոփուէր եսակենտրոն ու անպտուղ սիրոյ մէջ:

310. Մայր թանկագին, յիշեցրի ձեզ այն առաջին գործը, որ Յիսուս եւ դուք ի կատար ածեցիք իմ միջոցով: Սա միայն նախերգանքն էր այն յաջորդների, որ յանձնարարուելու էին ինձ: Երբ հրամայեցիք ինձ մուտք գործել հոգիների

<sup>1</sup> Առկ 18, 19

սրբարանից ներս<sup>1</sup>, իսկոյն տեսայ՝ որ գործը գերազանցում էր իմ կարողութիւններին: Այնժամ նետուեցի Տիրոջ բազուկների մէջ, ինչպէս մի մանուկ, եւ դէմքս իր ուսին յենելով, ասացի. «Տէր իմ, չափազանց տկար եմ դուստրերիդ սնել կարողանալու համար: Եթէ կամենում ես իմ միջոցով բաշխել այն՝ ինչ անհրաժեշտ է իւրաքանչիւրին, լցրու եւ լիացրու փոքրիկ ձեռքերս, եւ ես, առանց գրկիցդ հեռանալու, առանց նոյնիսկ գլուխս շրջելու, կը տամ գանձերդ այն հոգուն, որը կը խնդրի ինձնից իր սնունդը: Եթէ այն համապատասխան գտնի իր պահանջներին, ես երբեք չեմ մոռանայ, որ այն պարտական չէ ինձ, այլ՝ Քեզ: Եւ ընդհակառակն, եթէ գանգատի ու դառն համարի այն՝ ինչ կը ներկայացնեմ իրեն, հոգուս խաղաղութիւնը չի խռովուի, այլ կ'աշխատեմ համոզել իրեն, որ այդ կերակրատեսակը գալիս է Քեզնից, եւ կը խուսափեմ իր համար մի այլ սնունդ հայթայթելուց»:

311. Մայր իմ, երբ համոզուեցի, որ անհնարին էր ինձ մի որեւէ բարի գործ կատարել իմ սեփական ուժերով, ձեր կողմից ինձ պարտադրուած գործը դադարեց այդուհետեւ դժուար թուալուց: Զգացի, որ միակ անհրաժեշտ բանը միշտ աւելի ու աւելի միանալն է Տիրոջը, իսկ «մնացածը կը տրուի ինձ աւելիով»<sup>1</sup>: Եւ իրօք, յոյսերս երբեք ամօթով չթողեցին ինձ, մարդասէրն Աստուած միշտ լիացրեց այս փոքրիկ ձեռքերս, ամէն անգամ, որ անհրաժեշտ եղաւ հոգեւոր սնունդ մատակարարել քոյրերիս: Խոստովանում եմ, Մայր իմ, որ եթէ նոյնիսկ մի քիչ կռթնէի իմ ուժերին, շուտով գէնքերս վար կը դնէի: Հեռուից այնքա՛ն հեշտ է թուում հոգիներին բարեգործելը, մղելը նրանց դէպի Աստծոյ սէրը, որպէսզի Նրան միշտ աւելի սիրեն եւ աւելի լաւ, մի խօսքով՝ նրանց կաղապարելը ըստ մեր աշխարհայեացքի եւ մեր անձնական գաղափարների: Մօտիկից, սակայն, ամբողջովին հակառակն է, վարդագոյնն անհետանում է, շատ լաւ է զգացում, որ բարեգործելն առանց Տիրոջ օգնութեան նոյնքան անհնարին է, որքան գիշերուայ մէջ արեւին փայլել տալը: Զգացում է, որ հարկաւոր է բացարձակ կերպով մոռանալ անձնական ճաշակները, անձնական գաղափարները, եւ առաջնորդել հոգիներին այն ճանապարհով, որ Յիսուս ինքն է գծել տուեալ հոգիների համար. որ չպէտք է փորձել առաջնորդել նրանց այն ուղիով, որով քայլում ենք մենք ինքներս:

312. Բայց դեռ սա չէ ամենադժուարը. այն՝ որ ամէն ինչից աւելի ծանր է կշռում ուսերիս, ամենաչնչին սխալներն ու անկատարութիւնները նկատել տալն է, եւ դրանց դէմ կենաց-մահու պատերազմ մղելը: Ուզում էի գրել՝ ի դժբախտութիւն իմ, բայց ո՛չ, վատասրտութիւն կը լինէր. ասում եմ, ուրեմն, բարեբախտաբար՝ քոյրերիս համար, այն պահից ի վեր՝ ինչ որպէս մանուկ բնակութիւն եմ հաստատել Յիսուսի գրկում, նմանում եմ դիտորդներին, որոնք հսկում են թշնամուն՝ ամբողջ պահակային ամենաբարձր աշտարակների վրայից: Ոչինչ չի խուսափում իմ հայեացքից: Յաճախ եմ նաեւ ես ինքս ապշում այս յստակատեսութեանս դիմաց, ինչպէս նաեւ գտնում, որ արդարացման մեծ հնարաւորութիւններ ունի Յովնան Մարգարէն, որ նախընտրեց փախչել՝ քան դնալ գուժելու Նինուէի կործանումը: Գերադասում եմ հազար անգամ յանդիմանուել՝ քան ուրիշին յանդիմանել, բայց նաեւ զգում եմ՝ թէ որքան կարեւոր է, որ ես տառապեմ դրանց պատճառով: Որովհետեւ երբ գործում ենք ըստ բնութեան, անհնարին է՝ որ հոգին, որին կամենում ենք յայտնել իր յանցանքները, հասկանայ իր սխալները: Նա կը տեսնի միայն մի բան. «Քոյրը, որ պարտականութիւնն ունի ուղղելու ինձ, զայրացած է իմ դէմ եւ ամէն յանցանք իմ վրայ է բարդում, իմ՝ որ լի եմ բարի նպատակներով»:

<sup>1</sup> Թերեզյան նորընծայուհիներով զբաղուեց 1893ի Փետրուարից մինչեւ իր մահը:

313. Շատ լաւ գիտեմ, որ ձեր փոքրիկ գառնուկները գտնում են ինձ խիստ: Եթէ հնարաւորութիւնն ունենային կարգալու այս տողերը, կ'ասէին՝ թէ իմ համար այնքան էլ դժուար չէ իրենց հետեւելը, իրենց հետ խիստ շեշտով խօսելը, ցոյց տալով իրենց գեղեցիկ՝ բայց մրոտուած բուրդը, կամ ճանապարհից հաւաքելն ու իրենց վերադարձնելը այդ բոլոր փշերի վրայ մնացած փաթիլները: Փոքրիկ գառնուկները կարող են ասել այն ամէնն՝ ինչ ուզում են. խորքում զգում են, որ իրենց սիրում եմ իրական սիրով, եւ որ երբեք չեմ նմանուի «վարձկանին, որը երբ տեսնում է՝ թէ գայլը գալիս է, թողնում է ոչխարներին ու փախչում»<sup>2</sup>: Պատրաստ եմ կեանքս տալու նրանց համար, բայց իմ սէրն այնքան մաքուր է, որ չեմ կամենում, որ տեղեակ լինեն դրան: Երբեք, Յիսուսի շնորհով, չփորձեցի դէպի ինձ ձգել նրանց սրտերը: Հասկացայ, որ իմ առաքելութիւնը նրանց դէպի Աստուած առաջնորդելն է, ինչպէս նաեւ հասկացնելն այս իրողութիւնը. այստեղ ներքեւում դուք էք, Մայր սիրելի, իրենց տեսանելի Յիսուսը, որին պարտաւոր են սիրել ու յարգել<sup>3</sup>:

314. Արդէն ասացի, Մայր սիրելի, որ ուրիշներին ուսուցանելով շատ սովորեցի նաեւ ես ինքս: Տեսայ, առաջին հերթին, որ բոլոր հոգիներն էլ քիչ թէ շատ նոյն պայքարներն է, որ մղում են, բայց նաեւ, միւս կողմից, որ այդ հոգիներն այնքա՛ն տարբեր են մէկը միւսից: Հասկացայ այն՝ ինչ ասում էր հայր Փիշոնը. «Աւելի տարբեր են հոգիները՝ քան դէմքերը»: Այս իսկ պատճառով, անհնարին է բոլորի հետ միեւնոյն կերպ վարուելը: Որոշ հոգիների հետ զգում եմ, որ պարտաւոր եմ լինել փոքրիկ, չվախենալ խոնարհուելուց, խոստովանելով ներքին պայքարներս, պարտութիւններս: Տեսնելով, որ ես նոյնպէս ունեմ իրենց նոյն թերութիւնները, թանկագին քոյրիկներս իրենց հերթին յայտնում են այն բոլոր սխալները, որոնց համար իրենք իրենց ամբաստանում են. բայց յատկապէս մխիթարում են այն փաստով, որ ես դրանց փորձառութեամբ եմ ծանօթ: Իսկ ուրիշների հետ զգացի, որ նրանց բարեգործելու համար հարկաւոր է լինել բաւական հաստատակամ, երբեք չվերադառնալով արդէն մի անգամ ասուած խօսքին: Յաճրանալն այսպիսի դէպքերում խոնարհութիւնն չէ, այլ աւելի՝ թուլութիւն: Տիրոջից ստացայ պատերազմներից չսարսափելու շնորհը. պարտաւոր եմ ի կատար ածել պարտքս, ինչ գնով էլ դա լինի: Մէկից աւելի անգամներ են ինձ ասել. «Եթէ կամենում էք ինձնից որեւէ բան ստանալ, պէտք է հետս քաղցրութեամբ վարուէք: Ոչինչ չէք ստանայ ուժով»: Ես, սակայն, լաւ գիտեմ, որ ոչ ոք արդար դատաւոր չէ իրեն վերաբերուող հարցերում, եւ որ մի մանուկ, որին բժշկը ցաւալի վիրահատութեան է ենթարկում, ճշում է ամբողջ կոկորդով ու աղաղակում, թէ դարմանը հիւանդութիւնից վատթար է: Սակայն երբ առողջանում է, մի քանի օր յետոյ, բաւական ուրախ է լինում վազել ու խաղալ կարողանալու համար: Նոյնն է պատահում նաեւ հոգիներին. շուտով ընդունում են, որ մի քիչ անախորժ թուրմերը նախընտրելի են՝ քան շաքարը, եւ չեն խուսափում սա խոստովանելուց:

315. Երբեմն չեմ կարողանում զսպել ինձ ու ներքուստ ժպտում եմ, տեսնելով թէ ինչպիսի փոփոխութիւն է տեղի ունեցել մի օրուայ ընթացքում. ապշեցուցիչ է, անհաւատալի: Ասում են. «Երէկ խիստ էիք, այո՛, բայց իրաւացի: Սկզբում շատ գայրացայ, բայց յետոյ ամէն բան վերջիչելով հասկացայ՝ թէ որքան արդարացի էիք: Երբ երէկ հեռացայ ձեր սենեակից, մտածում էի. "Վե՛րջ այլեւս, գնում եմ Մայր

<sup>1</sup> Հմմտ. Մտթ 6, 33

<sup>2</sup> Հմմտ. Յվհ 10, 12

<sup>3</sup> Տուեալ դէպքում Թերեզան ի նկատի չունի մայր Մարիամ Գոնձակայի անձը, այլ՝ վանքի Մեծաւորուհին:

Մարիամին ասելու, որ այսպէս չեմ կարող շարունակել Յիսուս Մանկան քոյր Թերեզայի հետ»: Բայց յետոյ զգացի, որ սատանան էր ներշնչում ինձ այդ մտքերը, ու նաեւ թուաց ինձ, որ աղօթում էիք իմ համար: Խաղաղուեցի եւ լոյսը սկսեց փայլել: Այժմ խնդրում եմ, որ շարունակէք ամբողջովին լուսաւորել ինձ. այս նպատակով եմ եկել»: Ձրոյցն իսկոյն ծաւալուում է եւ ես ինձ գերերջանկազոյն եմ զգում, սրտի գառիվայրով անցնելու համար, այս անգամ նուազ դառն կերակուրներ հրամայնելով: Այո՛, բայց ... շուտով անդրադառնում եմ, որ չպէտք է չափից դուրս վազենք. մի խօսքն անգամ կարող է ակերակների վերածել արցունքների գնով կառուցուած գեղեցիկ շէնքը: Եթէ դժբախտութիւնն եմ ունենում արտասանելու մի որեւիցէ վանկ, որը թւում է՝ թէ նրբացնում ու մեղմում է այն՝ ինչ ասել էի նախորդ օրը, զգում եմ, որ փոքրիկ քոյրիկս սկսում է վերադառնալ իր նախկին տրամադրութիւններին: Այդպիսի դէպքում, հոգուս խորքում իսկոյն մի փոքրիկ աղօթք եմ անում, եւ ճշմարտութիւնը միշտ յաղթում է:

Ա՛հ, աղօթքն ու զոհողութիւնն են կազմում իմ ամբողջ ուժը. իմ անխորտակելի զէնքերն են, որ շնորհել է ինձ Յիսուս, եւ որոնք հոգիներին աւելի են գրաւում՝ քան խօսքերը: Սրան փորձառութեամբ եմ համոզուել, եւ յաճախ: Այդ փորձառութիւններիցս մէկը քաղցր ու խոր տպաւորութիւն է թողել ինձնում:

316. Մեծ Պահքի շրջանն էր. այնժամ զբաղւում էի միայն մի նորընծայով<sup>1</sup>, որը գտնւում էր այստեղ եւ որի «հրեշտակն»<sup>2</sup> էի: Մի առաւօտ սենեակս եկաւ, ամբողջովին ուրախութիւն էր ճառագայթում. «Ա՛հ, եթէ իմանայիք, – ասաց, – թէ այս գիշեր ինչ երազ տեսայ: Քրոջս մօտ էի եւ աշխատում էի անջատել նրան բոլոր ունայնութիւններից, որոնք նրան շատ հաճելի են, եւ այդ նպատակով բացատրում էի նրան ձեր «Ապրել սիրելով»<sup>3</sup> բանաստեղծութեան այս տողը. ”Սիրել Քեզ, Յիսուս, ի՛նչ կորուստ չահաւէտ: Իմ բոլոր արժէքները Քոնն են, ընդմիշտ”: Ձգում էի, որ խօսքերս թափանցում էին նրա հոգու խորքերը, եւ ես ուրախութիւնիցս յափշտակուած էի: Այսօր առաւօտեան արթնանալով իսկոյն մտածեցի, որ Տէրը թերեւս կամենում է, որ իրեն նուիրեմ այդ հոգին: Ի՞նչ էք կարծում, գրե՞մ նրան Մեծ Պահքից յետոյ, պատմեմ նրան երազս ու ասեմ, որ Յիսուս կամենում է ամբողջովին իր մօտ ունենալ իրեն»:

Ես, առանց երկար մտածելու պատասխանեցի՝ թէ կարող էր փորձել, բայց նախ պէտք է թոյլտուութիւն խնդրէիք մեր Մօրից: Քանի որ Մեծ Պահքը դեռ բաւական հեռու էր վերջանալուց, դուք, Մայր իմ, անակնկալի եկաք մեր տարածամ խնդրանքին ի լուր, եւ, անկասկած Տիրոջից ներշնչուած, պատասխանեցիք, որ կարմեղականները հոգիներին փրկում են ոչ թէ նամակներով, այլ՝ աղօթքներով:

Ձեր որոշումը լսելով իսկոյն հասկացայ, որ Յիսուս ինքն էր խօսողը, եւ ասացի քոյր Մարիային. «Հարկ է, որ գործի անցնենք, շատ աղօթենք: Ի՛նչ ուրախութիւն կը լինի մեր համար, եթէ Աստուած ընդունի մեր աղօթքները»: Ա՛հ, որքա՛ն անսահման է Տիրոջ ողորմութիւնը. նրան հաճելի եղաւ ի կատար ածել իր դուստրերի խնդրանքը: Մեծ Պահքի վերջաւորութեանը մի հոգի եւս ընծայւում էր Տիրոջը:

<sup>1</sup> Խօսքը վերաբերւում է նորընծայուհի քոյր Մարիային (քոյր Մարիա Ամենասուրբ Երրորդութեան), որը Լիզիոյի կարմեղոս մտաւ 1894ի Յունիսի 16ին: Այդ շրջանում ճիշտ է կային չորս ա՛յլ նորընծայուհիներ եւս, բայց քոյր Մարիան իւրայատուկ կերպով յանձնուեց քոյր Թերեզայի խնամքին: Տուեալ դէպքը, որի մասին խօսուում է, ամենայն հաւանականութեամբ տեղի է ունեցել 1895ի Մեծ Պահքի շրջանում:

<sup>2</sup> Այսպէս էր անուանւում այն միանձնուհին, որն օգնում էր նորեկ հայցւորուհիներին ծանօթանալու ու յարմարելու տուեալ վանքի աւօրեային ու կենսաձեւին:

<sup>3</sup> Այս բանաստեղծութիւնը Սրբուհին գրել է 1895ի Փետր. 26ին: Տե՛ս՝ Յաւելուած Բ.:

Շնորհի իրական հրաշքներից մէկն էր, խոնարհ նորընծայուհու ջերմեռանդ աղօթքների միջոցով ստացուած:

317. Քանիցս մեծ է, ուրեմն, աղօթքի ուժը: Այն կարելի է համեմատել թագուհու հետ, որն ամէն վայրկեան ազատ մոտք ունի թագաւորի մօտ, եւ որ կարող է ստանալ այն ամէնն՝ ինչ խնդրում է: Եւ որպէսզի Աստուած ընդունի մեր աղօթքը, անհրաժեշտութիւն չէ տուեալ իրավիճակի համար շարադրուած գեղեցիկ աղօթք-բանաձեւերի ընթերցումը աղօթագրքերից մէկում: Եթէ այդպէս լինէր, աւա՛ղ, ինչպիսի թշուառ ու ողորմելի վիճակում կը յայտնուէի ես:

Ժամերգութիւններից բացի, որոնք կատարում եմ անարժան լինելով հանդերձ, քաջութիւնը չունեմ ստիպելու ինձ փնտռել գրքերում գեղեցիկ աղօթքներ: Սա ինձ գլխացաւ է պատճառում, որովհետեւ շարադրուած աղօթքներն այնքա՛ն շատ են, ինչպէս նաեւ բոլորն էլ գեղեցիկ, մէկը միւսից աւելի:

Չեմ կարող ընթերցել դրանք բոլորը եւ, չիմանալով թէ որն ընտրեմ, վարում եմ ինչպէս մանուկները, որոնք կարգաւ չգիտեն: Ասում եմ մարդասէրն Աստծուն այն՝ ինչ կամենում եմ ասել, առանց գեղեցիկ նախադասութիւնների, եւ միշտ էլ հասկանում է ինձ: Իմ համար՝ աղօթքը սրտի սլացք է, դէպի Երկինք ուղղուած մի պարզ հայեացք, երախտագիտութեան եւ սիրոյ աղաղակ է՝ թէ՛ փորձութիւնների մէջ եւ թէ՛ ուրախութիւնների, մի խօսքով՝ ինչ որ մի մեծ բան է, գերբնական, որ ընդարձակում է հոգիս եւ Յիսուսին միացնում:

318. Չեմ կամենում, սակայն, Մայր սիրելի, այն տպաւորութիւնը թողնել՝ թէ առանց որեւէ ջերմեռանդութեան եմ կատարում հասարակաց աղօթքներս, լինեն դրանք եկեղեցում կատարուած կամ խցում միայնակ: Ընդհակառակն, շատ եմ սիրում հասարակաց աղօթքները, որովհետեւ Յիսուս խոստացել է «լինել նրանց հետ, ովքեր համախմբում են յանուն Իր»<sup>1</sup>: Դրանց կատարման ժամանակ զգում եմ, որ միաբանակիցներիս եռանդը լրացնում է իմ ջերմեռանդութեան պակասը: Բայց (ամօթով եմ խոստովանում) երբ ասում եմ Վարդարանը մենակ, այն աւելի ծանր է նստում ուսերիս՝ քան եթէ ապաշխարութեան գործիքներ կրէի մարմնիս վրայ: Չգում եմ, որ այն այնքա՛ն վատ եմ աղօթում: Ի գուր եմ ջանում մտածել Վարդարանի խորհուրդների շուրջ. չեմ կարողանում կենտրոնացնել միտքս: Երկար ժամանակ տխրում էի ջերմեռանդութեանս այս պակասի համար, որը զարմացնում էր ինձ, որովհետեւ այնքա՛ն շատ եմ սիրում Սուրբ Կոյսին, այնքան՝ որ իմ համար պէտք է բաւական հեշտ լինէր իրեն ի պատիւ աղօթքների կատարումը, որոնք իրեն հաճելի են: Բայց այժմ աւելի քիչ եմ տխրում. մտածում եմ, որ Երկինքի Թագուհին իմ Մայրն է, անշուշտ տեսնում է բարի կամքս ու գոհանում:

Երբեմն, մինչ հոգիս այնպիսի ցամաքութեան մէջ է ընկնում, որ իմ համար անհնարին է դառնում Աստծոյ հետ միանալուս նպաստող մի որեւէ խորհրդածման կատարումը, դանդա՛ղ դանդա՛ղ, առանց շտապելու ասում եմ մի «Հայր մեր», եւ ապա նաեւ հրեշտակային ողջոյնը: Այդ դէպքում, այս աղօթքները յափշտակում են ինձ, սնում հոգիս աւելի՝ քան եթէ ասէի դրանք հարիւրաւոր անգամներ արագ արագ:

Սուրբ Կոյսն ինձ յայտնում է, որ ինձնից չի նեղանում. երբեք չի զրանում պաշտպանել ինձ, անմիջապէս, հագիւ թէ կանչում եմ իրեն: Եթէ յանկարծ վրաս է յարձակում մի մտահոգութիւն, մի դժուարութիւն, իսկոյն դէպի ինքն եմ ուղղում, եւ միշտ, որպէս բոլոր մայրերի մէջ ամենաքնքշալին, նա պաշտպանում է իմ շահերը:

<sup>1</sup> Մտթ 18, 20

Քանի՛ քանի՛ անգամներ եմ նրան օգնութեան կանչել նորընծայուհիների հետ խօսելիս եւ զգացել նրա մայրական խնամքների բարերար զեղումը:

319. Յաճախ եմ նորընծայուհիներն ասում. «Բայց դուք ամէն ինչի պատասխանը պատրաստ ունէք, այս անգամ կարծում էի վարանումի մատնել ձեզ: Որտեղի՞ց էք գտնում այն բոլոր խօսքերը, որ ասում էք մեզ»: Նրանցից մէկն այնքան միամիտ է, որ կարծում է՝ թէ ես կարդում եմ իրենց հոգիների մէջ, քանի որ պատահում է՝ որ կանխում եմ իրենց, իրենց ասելով այն՝ ինչ իրենք մտածում են: Մի օր, ընկերուհիներիցս մէկը<sup>1</sup> որոշել էր ինձնից թաքցնել իր վշտակրութիւնը, որի պատճառով բաւական տառապում էր: Հանդիպեցի իրեն վաղ առաւօտեան, ընդառաջ ելաւ ինձ եւ սկսեց խօսել ժպտուն դէմքով: Մինչդեռ ես, առանց պատասխանելու իր խօսքերին, բացականչեցի համոզուած շեշտով. «Դու տառապում ես»: Եթէ այդ պահին լուսինն անգամ իջեցնէի իր ոտքերի մօտ, կարծում եմ, որ չէր նայի ինձ աւելի մեծ ապշանքով: Նրա զարմանքն այնքան մեծ էր, որ փոխանցուեց նաեւ ինձ, մի պահ բռնուեցի ինչ որ մի գերբնական երկիւղով: Բացարձակապէս վստահ էի, որ հոգիներն ընթերցելու շնորհը չունէի, եւ ես նոյնպէս անակնկալի էի մատնուել այսքան ճշգրիտ որակաւորելու համար: Զգում էի, որ Տէրն այնքան մօտ էր, որ առանց իմ անդրադառնալու, ինչպէս մի մանուկ, արտասանել էի խօսքեր, որոնք չէին բխում ինձնից, այլ՝ իրենից:

320. Մայր իմ, հասկանում էք, որ ամէն ինչ թոյլատրուած է նորընծաներին. հարկ է, որ լիակատար ազատութեամբ կարողանան ասել այն՝ ինչ մտածում են, առանց որեւէ կաշկանդուածութեան, ինչպէս բարին՝ այնպէս էլ չարը: Մա հեշտութեամբ եմ կատարում իմ հետ, որովհետեւ ինձ պարտաւոր չեն ընծայել այն մեծարանքը, որ պատշաճ է ընծայել մեծաւորուհուն: Սրանով, սակայն, չեմ կամենում ասել՝ թէ Յիսուս ինձ առաջնորդում է արտաքին նուաստացումների ճանապարհով. ո՛չ, Նա բաւարարում է ինձ հոգուս խորքում խոնարհեցնելով, իսկ արարածների աչքին ամէն ինչում վայելում եմ յաջողութիւն, քայլում եմ պատիւների արահետով, այնքան՝ որքան հնարաւոր է վանական կեանքում: Ըմբռնում եմ, որ ոչ թէ իմ, այլ ուրիշների համար է, որ պարտաւոր եմ ընթանալ այս այնքա՛ն վտանգաւոր ուղիով: Եւ իրօք, եթէ հասարակութեան աչքին յայտնուէի իբրեւ թերութիւններով լի, անընդունակ, անտրամաբան, առանց խելքի ու դատողութեան միանձնուհի, անհնարին կը լինէր ձեզ, Մայր իմ, օգնութիւն ընդունել ինձնից: Ահա այս պատճառով, Աստուած քօղ նետեց ներքին ու արտաքին բոլոր թերութիւններիս վրայ: Այդ քօղը, երբեմն, իմ համար գովասանքներ է ընդունում նորընծայուհիներից եւ ես զգում եմ, որ դրանք չեն ասում շողոքորթութեամբ, այլ՝ արտայայտում են իրենց միամիտ զգացումները: Մա, ճշմարիտն ասեմ, ինձ չի կարող ունայն սնափառութիւն ներշնչել, որովհետեւ մտքումս միշտ ներկայ է ինչ լինելուս յիշատակը:

321. Եւ սակայն, երբեմն շատ մեծ փափաք եմ ունենում լսելու ինչ որ մի բան, որ գովասանք չէ: Գիտէք, Մայր իմ, որ գերադասում եմ աւելի քացախը՝ քան շաքարը: Հոգիս էլ ձանձրանում է չափազանց քաղցր սննդից, եւ Յիսուս այնժամ թոյլատրում է, որ հիւրասիրեն ինձ մի լաւ փոքրիկ աղցան՝ բաւական թթու, բաւական կծու, որում ոչինչ չի պակասում ձէթից բացի ... : Այս բաղադրութեամբ՝ այն աւելի համեղ է դառնում: Այս սքանչելի փոքրիկ աղցանը առջեւս եմ դնում

<sup>1</sup> Քոյր Մարթա Յիսուսին, որը հետագայում անձամբ վկայեց Սրբուհու կողմից յիշատակուող դէպքին:

իրենք նորընծաները, երբ ակելի քիչ եմ դա սպասում: Տիրոջ աջը բարձրացնում է այն շղարչը, որ ծածկում էր թերութիւններս, եւ իմ սիրելի փոքրիկ քոյրիկներս տեսնելով՝ թէ ինչպիսին եմ, իրենց ճաշակներին համապատասխան չեն գտնում ինձ: Անկեղծ պարզութեամբ, որ գմայլում է ինձ, յայտնում են այն բոլոր ներքին պայքարները, որոնց պատճառը հանդիսանում եմ ես ինքս, ինչպէս նաեւ այն ամէնը՝ որ ինձնում տհաճ է իրենց: Մի խօսքով, չեն քաշում ակելի՝ քան եթէ այդ յանդիմանութիւնները վերաբերուէին ինչ որ մի երրորդ անձի, որովհետեւ գիտեն, որ այդպէս վարուելով՝ մեծագոյն հաճոյք են պատճառում ինձ: Ա՛հ իրօք, սա ակելի է՝ քան մի պարզ հաճոյք. արքայական խնջոյք է, որ զուարթութեամբ է լցնում հոգիս: Չեմ կարողանում բացատրել անգամ թէ ինչպէս մի բան, որ այսքան տհաճ է մարդկային բնութեանը, կարող է դառնալ առիթ այսքան մեծ երջանկութեան: Եթէ փորձառութիւնը չունենայի, չէի հաւատայ: Մի օր, խոնարհուելու իւրայատուկ փափաք ունէի եւ նորընծայուհիներիցս մէկն ի կատար ածեց ինձ գոհացնելու առաջադրանքն այնքան լաւ, որ իսկոյն յիշեցի Սէմէին, երբ նգովում էր Դաւիթ թագաւորին<sup>1</sup>, եւ խորհեցի. «Այո՛, Տէրն Ինքն է պատուիրում նրան ասել ինձ այս խօսքերը»: Եւ հոգիս ճաշակում էր այն դառն սնունդը, որ մատուցում էր իրեն այնքա՛ն առատօրէն:

Ահա այսպէս է Աստուած խնամում ինձ: Միշտ չէ, որ տալիս է արտաքին նուաստացման զօրացուցիչ հասցը, այլ միայն երբեմն երբեմն թոյլատրում է ինձ «սնուել այն փշրանքներով, որ ընկնում են որդիների սեղանից»<sup>2</sup>: Որքա՛ն մեծ է Նրա ողորմութիւնը, միայն Երկնքում այն կը կարողանամ արժանապէս գովերգել:

322. Մայր սիրելի, քանի որ ձեր հետ աշխատում եմ այն գովերգել սկսել արդէն երկրի վրայ, այդ անսահման Ողորմութիւնը, պարտաւոր եմ դեռեւս խօսել հոգեւոր մի մեծ օգուտի մասին, որ քաղեցի ձեզնից ինձ յանձնուած առաքելութեան դաշտում: Ժամանակին, երբ տեսնում էի, որ միաբանակից քոյրերիցս մէկն իրեն թոյլ էր տալիս մի արարք, որ ինձ տհաճ էր, որ ինձ թւում էր կանոնազանց, ինքս ինձ ասում էի. «Եթէ կարողանայի յայտնել նրան այն՝ ինչ մտածում եմ, եթէ հնարաւորութիւնն ունենայի իր ուշադրութիւնը հրաւիրելու իր սխալների վրայ, որքա՛ն բարի ներգործութիւն կ'ունենար սա իմ վրայ»: Բայց երբ սկսեցի զբաղուել նորընծաներով, վստահեցնում եմ ձեզ, Մայր իմ, որ արհեստը սովորելով՝ լիովին փոխեցի զգացումներս: Երբ ականատես եմ լինում միաբանակից քոյրերիցս մէկի արարքին, որ թւում է ինձ անկատար, սփոփանքի հառաչանք եմ արձակում ու ասում. «Ի՛նչ երջանկութիւն, նորընծայուհի չէ, հարկադրուած չեմ յանդիմանելու»: Եւ ապա անմիջապէս սկսում եմ արդարացնել նրան եւ փնտռել որոշ բարի դրդապատճառներ, որոնցից մղուած է նա – վստահ եմ – այդպէս վարում: Այն օրից ի վեր՝ ինչ հիւանդ եմ, Մայր իմ, խնամքները՝ որ շուայլում էք ինձ, շատ ու շատ բաներ են սովորեցնում ինձ եղբայրսիրութեան վերաբերեալ: Դեղերից ոչ մէկը չի թւում ձեզ չափազանց թանկ, եւ եթէ մէկի ազդեցութիւնը չի պսակում յաջողութեամբ, դուք, առանց յոգնելու, փորձում էք մի ուրիշը: Երբ զբօսանքի էի դուրս գալիս, որքա՛ն ուշադրութիւն էիք դարձնում իմ վրայ, որպէսզի նստէի օդի հոսանքներից պաշտպանուած յարմարաւէտ տեղում: Ինչ որ է: Եթէ կամենայի գրի առնել բոլորը, երբեք չէի վերջացնի:

Մտածելով այդ բոլորի մասին, ինքս ինձ ասացի, որ պարտաւոր եմ նոյնքան կարեկցանք ունենալ միաբանակիցներիս հոգեւոր տկարութիւնների նկատմամբ, որքան դուք ունէք իմ նկատմամբ, Մայր սիրելի, խնամելով ինձ այնքա՛ն մեծ սիրով:

<sup>1</sup> Հմմտ. 2Թգ 16, 5-10

<sup>2</sup> Մրկ 7, 28

323. Նկատել եմ (սա լիովին բնական է), որ աւելի սուրբ միաբանակիցները միշտ աւելի շատ սիրուածներն են. փնտռում ենք զրոյցներ նրանց հետ, չինդրուած ծառայութիւններ ենք մատուցում նրանց: Մի խօսքով, այս հոգիները, որ կարող են կրել իրենց հանդէպ յարգանքի ու փափկանկատութեան պակասը, նրանց տեսնում ենք բոլորի կողմից համակրանքով շրջապատուած: Կարելի է նրանց վերագրել մեր Սուրբ Հայր Յովհաննէս Խաչի խօսքերից հետեւեալը. «Բոլոր բարիքները տրուեցին ինձ, երբ այլեւս եսասիրութիւնից մղուած չփնտռեցի դրանք»<sup>1</sup>:

Անկատար հոգիներն, ընդհակառակն, փնտռուած անձեր չեն: Նրանց հանդէպ անշուշտ վարուում ենք վանական բարեկրթութեան կանոնների համաձայն, բայց, թերեւս նուազ սիրալիւր խօսքերով պատասխանելու վախից դրդուած, խուսափում ենք նրանց ընկերութիւնից: Ասելով անկատար, չեմ հասկանում միայն հոգեւոր թերութիւնները, որովհետեւ ամենասուրբ հոգիներն անգամ միայն Երկնքում կը լինեն կատարեալ: Ուզում եմ ակնարկել դատողութեան ու դաստիարակութեան պակասին, այն դիւրագգացութեանը, որ յատուկ է որոշ բնաւորութիւնների տէր անձանց. բոլորն էլ բաներ՝ որ շատ հաճելի չեն դարձնում կեանքը: Լաւ գիտեմ, որ բնաւորութեան այս հիւանդութիւնները պարբերական են, դարմանումի որեւէ յոյս չկայ, բայց նաեւ գիտեմ, որ դուք, Մայր իմ, կը շարունակէք խնամել ու փորձել սփոփել ինձ, նոյնիսկ եթէ հիւանդ մնամ ամբողջ կեանքիս ընթացքում: Եւ ահա եզրակացութիւնս, որին յանգում եմ. պարտաւոր եմ զբօսանքների պահերին, «ազատութեան» ժամերին փնտռել ընկերութիւնը այն միաբանակիցների, որոնք նուազ հաճելի են ինձ, այս վիրաւոր հոգիների մօտ կատարելով բարի Մամարացու դերը<sup>2</sup>: Մի խօսք, մի սիրալի ժպիտ յաճախ բաւական են, հոգու տխրութիւնը սփոփելու համար:

324. Բայց բացարձակօրէն այս նպատակին հասնելու համար չէ, որ կամենում եմ գործադրել եղբայրսիրութիւնը: Որովհետեւ գիտեմ, որ շուտով կը յուսալքուեմ: Լաւագոյն դիտաւորութեամբ ասուած խօսքն էլ կարող է ամբողջովին հակառակ մտքով մեկնաբանուել: Այսպիսով, ժամանակ չկորցնելու համար, կամենում եմ սիրալի լինել բոլորի հանդէպ (յատկապէս սակաւ սիրելի միաբանակիցների), Յիսուսին ուրախութիւն պատճառելու եւ տուեալ հարցի շուրջ իր տուած խորհրդին համապատասխանելու համար. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ բարեկամներիդ, ո՛չ ազգականներիդ, որպէսզի նրանք էլ փոխարէնը քեզ չհրաւիրեն եւ քեզ հատուցում լինի: Այլ կանչիր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին, եւ երանելի կը լինես, քանի որ փոխարէնը քեզ հատուցելու ոչինչ չունեն»<sup>3</sup>, որովհետեւ քո Հայրը, որ տեսնում է ծածկապէս, կը հատուցի քեզ<sup>4</sup>:

Իր քոյրերի համար ի՞նչ խնջոյք կարող է պատրաստել կարմեղական միանձնուհին, եթէ ոչ միայն՝ ուրախ ու գլխաւատ սիրոյ հոգեւոր խնջոյքը: Ես ուրիշ խնջոյք չեմ ճանաչում, եւ կամենում եմ նմանուել Պօղոս Առաքեալին, որն ուրախանում էր ուրախացողների հետ եւ վշտակցում էր արտասուողներին<sup>5</sup>: Ճիշտ է, արցունքները երբեմն պէտք է երեւան այն տօնախմբութեան ժամանակ, որ կամենում եմ հրամցնել, բայց միշտ պէտք է ջանամ վերջում բերկրանքի փոխել այդ

<sup>1</sup> Հմմտ. SAN GIOVANNI DELLA CROCE, *Grafico del Monte Carmelo*.

<sup>2</sup> Տե՛ս՝ Ղկս 10, 25-37

<sup>3</sup> Հմմտ. Ղկս 14, 12-14

<sup>4</sup> Մտթ 6, 4

<sup>5</sup> Հմմտ. Հռմ 12, 15

արցունքները<sup>1</sup>, որովհետեւ Տէրը սիրով է ընդունում նրանց՝ ովքեր ուրախութեամբ են նուիրում իրեն<sup>2</sup>:

325. Յիշողութեանս մէջ պտտում է սիրոյ մի գործ, որ բարին Աստուածներչնչեց ինձ, երբ դեռ նորընծայ էի: Մի չնչին գործ էր, եւ սակայն մեր Հայրը, որ տեսնում է ծածկապէս եւ ուշադրութիւն է դարձնում ակելի դիտաւորութեանը՝ քան գործի մեծութեանը, արդէն իսկ վարձատրեց ինձ, առանց սպասելու գալիք կեանքին: Այդ այն ժամանակ էր, երբ քոյր Սան Պիետրոն դեռեւս մասնակցում էր ժամերգութիւններին եւ գալիս սեղանատուն: Երեկոյեան աղօթքի ժամանակ կանգնում էի ճիշտ իր դիմաց: Ժամը 5<sup>50</sup>ին հարկաւոր էր նրան սեղանատուն առաջնորդել, բայց պէտք էր մէկը՝ որ նրան առաջնորդէր, որովհետեւ այդ շրջանում հիւանդապահուհի քոյրերը չափազանց զբաղուած էին եւ չէին կարողանում գալ ու նրան ընկերանալ: Իմ համար բաւական դժուար էր այդ փոքրիկ ծառայութեանը նուիրուելը, որովհետեւ գիտէի՝ որ այնքան էլ հեշտ չէր խեղճ քոյր Սան Պիետրոյին գոհացնելը, որն այնքան էր տառապում, որ տահաճութեամբ էր ընդունում ուղեկցողի փոփոխութեան հանգամանքը: Եւ սակայն չէի կամենում կորցնել սիրոյ գործադրման այսքան գեղեցիկ առիթներից մէկը, յիշելով Յիսուսի խօսքերը. «Այն՝ ինչ կ'անէք իմ այս փոքրիկ եղբայրներից մէկի համար, արած կը լինէք իմ համար»<sup>3</sup>: Շատ խոնարհաբար նուիրուեցի, հետեւաբար, նրան ընկերանալու գործին, բայց մեծագոյն ջանքերի գնով միայն կարողացայ համոզել նրան ընդունել իմ փոքրիկ ծառայութիւնները: Վերջապէս գործի անցայ, եւ այնքան բարի կամքով, որ կատարեալ յաջողութեան հասայ:

Ամէն երեկոյ, երբ տեսնում էի, որ քոյր Սան Պիետրոն ցնցում է իր աւագի ժամացոյցը, գիտէի, որ այդ շարժումը նշանակում էր. «Գնանք»: Անհաւատալի է՝ թէ ուսերիս վրայ որքան ծանր էր նստում խանգարուելը, յատկապէս սկզբում, բայց դա կատարում էի անմիջապէս, եւ ապա սկսում էր արարողութիւնների մի ամբողջ շարան: Հարկաւոր էր նախ վերցնել եւ կանխաւ սահմանուած շարժումներով հեռացնել աթոռը, եւ որ ամենակարեւորն է՝ առանց շտապելու: Ապա ճանապարհ էինք ընկնում: Հարցը վերաբերում էր խեղճ հիւանդին գօտկատեղից բռնելով հետեւելուն: Այդ անում էի հնարաւոր ամենամեծ նրբութեամբ, բայց եթէ նա յանկարծ սխալ քայլ էր կատարում, իսկոյն կարծում էր՝ թէ լաւ չէի բռնել իրեն եւ թէ ուր որ է ընկնելու է: «Ա՛հ, Աստուած իմ. չափազանց աշխոյժ ես քայլում, աղջիկս, քիչ է մնում ընկնեմ»: Իսկ երբ փորձում էի ակելի դանդաղ քայլել. «Շարժուիր, հետեւիր ինձ, ձեռքդ չեմ զգում, թողեցիր ինձ, ընկնում եմ: Ա՛հ, արդէն ասել էի չէ՞, որ չափազանց երիտասարդ ես ինձ առաջնորդելու համար»: Վերջիվերջոյ, առանց դժբախտ պատահարների, հասնում էինք սեղանատուն: Այնտեղ առաջանում էին նոր դժուարութիւններ. հարցը վերաբերում էր քոյր Սան Պիետրոյին իր տեղում բազմեցնելուն: Սա նոյնպէս հարկաւոր էր անել մեծ վարպետութեամբ, խեղճ տարեց հիւանդին չվիրաւորելու համար: Վերջում հարկաւոր էր վեր բարձրացնել նրա գգեստի թեզանիքները (սահմանուած յատուկ շարժուձեւով), եւ ապա ազատ էի, կարող էի գնալ: Իր խեղճուած մատներով մանրում էր հացը ապուրի ամանի մէջ, ինչպէս կարողանում էր: Իսկոյն անդրադարձայ, եւ ամէն երեկոյ, հեռանալուց առաջ, մատուցում էի նրան նաեւ այս փոքրիկ ծառայութիւնը: Քանի որ նա ինքը չէր խնդրել այս վերջինը, բաւական յուզուեց հոգատարութեանս ի տես, եւ այսպիսով շահեցի նրա ամբողջ բարեհաճութիւնը (որ չէի փնտռել), եւ սա – ինչպէս

<sup>1</sup> Հմմտ. Յվհ 16, 20  
<sup>2</sup> Հմմտ. 2Կր 9, 7  
<sup>3</sup> Հմմտ. Մտթ 25, 40

յետոյ իմացայ – յատկապէս այն բանի համար, որ հացը մանրելուց յետոյ նրան էի նուիրում իմ ամենագեղեցիկ ժպիտներից մէկը:

326. Մայր իմ, թերեւս կը զարմանաք, որ յիշատակում եմ սիրոյ այս փոքրիկ գործը, որ կատարուել է տարիներ առաջ: Այն պատմեցի, որովհետեւ զգում եմ, որ պարտաւոր եմ երգել, նրա առթիւ, Տիրոջ մեծ ողորմութիւնը: Կամեցաւ այդ յուշը հոգեգմայլ բուրմունքով օծուն թողնել հոգուս խորքում, յուշ՝ որ շարունակ մղում է ինձ գործադրելու եղբայրսիրութիւնը: Երբեմն յիշում եմ որոշ մանրամասներ, որոնք իմ համար զարնանային զով հովեր են: Ահա նրանցից մէկը, որ հէնց նոր ներկայացաւ մտքիս: Զմեռնային երեկոներից մէկն էր, ինչպէս միշտ՝ կատարում էի իմ փոքրիկ առաջադրանքը: Յուրտ էր, մթնշաղ ... : Յանկարծ, հեռո՛ւ հեռուից ականջիս հասաւ երաժշտական գործիքների ներդաշնակ ղողանջը եւ իսկոյն աչքերիս առջեւ շողշողուն լոյսերով զարդարուած ոսկեգօծ մի դահլիճ գծագրուեց, տեսայ վայելչագեղ օրիորդներ, որ զրուցում էին եւ միմեանց գովաբանում ու աշխարհիկ քաղաքավարական ձեւակերպութիւններ մատուցում: ... Ապա հայեացքս ուղղուեց խեղճ հիւանդի վրայ, որին օգնում էի քայլել, երաժշտութեան փոխարէն պահ առ պահ լսում էի նրա հեծեծանքները, ոսկու փոխարէն՝ մեր խստակրօն վանքի աղիւսաչէն պատերն էի միայն տեսնում, որ հազիւ էին լուսաւորում մի տփոյն լոյսով: Չեմ կարող խօսքերով արտայայտել այն՝ ինչ տեղի ունեցաւ հոգուս խորքում. Աստուած լուսաւորեց ինձ ճշմարտութեան ճառագայթներով, որոնք այնպէս գերազանցեցին երկրի տօնակատարութիւնների ստուերածածկ շողարձակմանը, որ չէի կարողանում հաւատալ երանութեանս: Ա՛հ, աշխարհային հանդէսների հազար տարի վայելելու համար չէի տայ իմ տասը ընկերները, որ նուիրուած էին եղբայրսիրութեան խոնարհ գործիս կատարմանը:

Եթէ տառապանքներով շրջապատուած, ընդմէջ պայքարների, հնարաւոր է գէթ մի պահ ապրել այն երանութիւնը, որ գերազանցում է աշխարհի բոլոր հաճոյքներին, մտածելով, որ մարդասէրն Աստուած դուրս է հանել մեզ աշխարհից, ի՞նչ է լինելու, ուրեմն, Երկնքում, երբ յաւիտենական հոգեզուարթութեան ու հանգստի մէջ տեսնելու ենք այն անհամեմատելի շնորհը, որ Աստուած հաղորդել է մեզ, ընտրելով մեզ «բնակուելու իր տանը»<sup>1</sup>, որը Երկնքի իրական նախասրահն է:

327. Բայց միշտ ուրախութեան այս զգացումներով չէ, որ գործադրել եմ եղբայրսիրութիւնը, այլ վանական կեանքիս սկզբում Յիսուս կամեցաւ զգացնել ինձ՝ թէ որքան քաղցր է միաբանակիցներիս հոգիներում իրեն տեսնելը: Այնպէս, որ երբ առաջնորդում էի քոյր Սան Պիետրոյին, դա անում էի այնքան սիրով, որ աւելին անհնարին էր, նոյնիսկ եթէ իրեն Յիսուսին ուղեկցէի: Սիրոյ գործադրումը միշտ չէ, որ քաղցր եղաւ իմ համար, ասում էի հէնց նոր, Մայր իմ. օրինակ տալու համար կը պատմեմ այժմ երկու փոքրիկ պայքար, որոնք ձեզ անկասկած ժպիտ կը պատճառեն: Բաւական երկար ժամանակ երեկոյեան աղօթքին տեղս գտնուում էր մի միաբանակից քրոջ դիմաց, որը տարօրինակ սովորութիւններ ունէր եւ, կարծում եմ, հոգեմտաւոր բաւական լոյսեր, որովհետեւ հազուադէպ էի տեսնում նրան մի որեւէ գիրք ընթերցելիս: Ահա թէ ինչում էր կայանում այդ տարօրինակութիւններից մէկը. հազիւ էր նա տեղ հասնում, սկսում էր մի արտասովոր փոքրիկ աղմուկ հանել, որ նմանում էր իրար շփուող երկու խեցիների ձայնին: Այդ ձայնը միայն ես էի լսում, որովհետեւ շատ սուր լսողութիւն ունեմ (երբեմն նաեւ մի քիչ չափազանց): Անհնարին է ասել, Մայր իմ, թէ ինչ աստիճանի էր յոգնեցնում ինձ այդ ժխորիկը, շատ մեծ փափաք

<sup>1</sup> Սղմ 22, 6

ունէի գլուխս ետ շրջելու եւ մեղապարտին հայեացքով հասկացնելու, որն անկասկած չէր անդրադառնում իր հանած աղմուկին. նրան դէպի իրականութիւն վերակոչելու միակ միջոցն էր: Բայց սրտիս խորքում զգում էի, որ աւելի լաւ էր համբերել՝ ի սէր Աստծոյ եւ միաբանակցին տհաճութիւն չպատճառելու համար: Զսպում էի ինձ, հետեւաբար, եւ մնում էի խելօ՛ք խելօք, աշխատում էի միանալ մարդասէրն Աստծուն, մոռանալով ժխորիկը ... : ... Ապարդիւն ... : Քրտինքով ծածկուելս էի զգում եւ աղօթքս տառապանքի էր վերածուում, բայց տառապանքի հետ մէկտեղ՝ փնտուում էի այն գէթ հոգուս խորքում առանց ջղայնութեան, խաղաղութեամբ ու գուարթութեամբ կատարելու միջոցը: Աշխատում էի սիրել այդ այնքա՛ն տհաճ ժխորիկը. փոխանակ այն այլեւս չլսել փորձելու (անհնարին բան), ուշադրութիւն էի դարձնում այն լաւ ունկնդրելու, կարծես թէ հմայիչ նուագահանդէս լինէր: Եւ իմ ամբողջ աղօթքը (որ այնքան էլ անդորր յափշտակութեան աղօթք չէր), կայանում էր այդ նուագահանդէսիկը Յիսուսին նուիրելու մէջ:

328. Մի ուրիշ անգամ լուացքատանն էի, մի միաբանակից քրոջ դիմաց, որը կեղտոտ ջրի շիթերով էր ծածկում դէմքս ամէն անգամ, երբ ջրից դուրս էր հանում ու լուացարանի վրայ դնում թաշկինակները: Առաջին շարժումս եղաւ մի քայլ դէպի ետ ցատկէն ու երեսս չորացնելը, ցոյց տալու համար միաբանակից քրոջը՝ թէ լաւ ծառայութիւն մատուցած կը լինէր ինձ, եթէ մի քիչ աւելի խելօք լինէր: Բայց իսկոյն մտածեցի, թէ որքան անմիտ էի՝ մերժելով այդ գանձերը, որ ինձ մատուցում էին այսքան վեհանձն կերպով, եւ զգուշացայ ներքին պայքարս արտաքուստ յայտնելուց: Գործադրեցի բոլոր ճիգերս, կեղտոտ աւելի ջուր ստանալ ցանկանալու համար, այնպէս՝ որ վերջաւորութեան իսկապէս հաճոյք էի ստանում ցողման այդ նոր տեսակից, եւ ինքս ինձ խոստացայ կրկին վերադառնալ գրաւելու իմ այդ երջանիկ տեղը, ուր հնարաւորութիւնն ունէի ընդունելու այնքա՛ն գանձեր:

Մայր թանկագին, տեսնում էք, որ շատ փոքր հոգի եմ, որ չի կարող նուիրել մարդասէրն Աստծուն ուրիշ ոչինչ, եթէ ոչ միայն՝ շատ փոքր գործեր: Յաճախ է պատահում ինձ կորցնել այդ աննշան զոհողութիւնների պատեհ առիթներից մի քանիսը, զոհողութիւններ՝ որ այնքա՛ն խաղաղութիւն են պարգեւում հոգուն. չեմ վհատուում, սակայն, բաւարարում եմ իմ մի քիչ սակաւ խաղաղութեամբ եւ աշխատում եմ աւելի աչալուրջ լինել յաջորդ անգամ:

329. Աստուած այնքան գթաւատ է իմ հանդէպ, որ իմ համար անհնարին է նրանից վախենալը. միշտ էլ տուել է ինձ այն՝ ինչ փափաքել եմ, կամ աւելի ճիշտ՝ ներշնչել է ինձ փափաքել այն՝ ինչ կամեցել է պարգեւել ինձ: Այսպիսով, հաւատքիս դէմ ուղղուած փորձութիւնների սկզբից քիչ ժամանակ առաջ ասում էի ինքս ինձ. «Իրօք, արտաքին մեծ փորձեր չունեմ, իսկ որպէսզի մղեմ ներքին մեծ պայքարներ, անհրաժեշտ է, որ բարին Աստուած փոխի ճանապարհս: Չեմ կարծում՝ թէ այդպէս կը վարուի, բայց նաեւ չեմ կարող ցմիշտ այսպէս հանգիստ ապրել: Ի՞նչ միջոց կը գտնի, ուրեմն, Յիսուս, ինձ փորձի ենթարկելու համար»: Պատասխանը սպասել չտուեց, եւ յայտնեց, որ Նա, ում սիրում եմ, միջոցների հարցում սահմանափակումներ չի ճանաչում: Առանց ճանապարհս փոխելու, ուղարկեց ինձ մի տառապանք, որ պէտք է կենսատու դառնութիւն խառնէր իմ բոլոր ուրախութիւններին: Բայց միայն փորձութիւնների համար չէ, որ Յիսուս տալիս է ինձ նախազգացումն ու փնտուութիւնը: Վաղուց ի վեր, քահանայ եղբայր ունենալու փափաքն ունէի, բայց դա ինձ բացարձակապէս անիրագործելի էր թւում: Յաճախ էի մտածում, որ եթէ իմ փոքրիկ եղբայրները ճախրած չլինէին դէպի Երկինք, երջանկութիւնը կ'ունենայի տեսնելու նրանց խորան բարձրանալը: Բայց քանի որ

մարդասէրն Աստուած նրանց ընտրեց փոքրիկ հրեշտակներ դարձնելու համար, այլևս չէի համարձակուում երազանքս իրականութեան վերածուած տեսնել յուսալ: Եւ ահա Յիսուս շնորհեց ինձ ոչ միայն այն՝ ինչ կամենում էի, այլ աւելին: Հոգու կապերով միաւորեց ինձ իր երկու առաքեալների հետ, որոնք դարձան իմ եղբայրները:

Կ'ուզէի, Մայր իմ, պատմել ձեզ մանրամասն կերպով, թէ ինչպէս Յիսուս գոհացրեց փափաքս եւ նաեւ գերազանցեց այն, որովհետեւ ես միայն մի քահանայ եղբայր էի ուզում ունենալ, որն ամէն օր իմ համար աղօթէր խորանի վրայ:

330. Մեր Սրբուհի Մայր Թերեզան էր, որ ուղարկեց առաջին եղբայրս<sup>1</sup>, 1895ի իր օրհնեալ տօնին որպէս ծաղկեփունջ: Լուացքատանն էի, աշխատանքով ծանրաբեռնուած, երբ մայր Ագնէսը, մի կողմ կանչելով ինձ, կարդաց այդ օրը ստացած նամակներից մէկը: Մի երիտասարդ ժառանգաւոր, ներշնչուած (ասում էր նա) Սրբուհի Թերեզայից, խնդրում էր մի քոյր, որը իւրայատուկ կերպով կը նուիրուէր իր հոգու փրկութեանը եւ կ'օգնէր իրեն աղօթքներով ու գոհողութիւններով, երբ ինքը կը մեկնէր առաքելութեան, որպէսզի կարողանար բազում հոգիների փրկութեան գործիք հանդիսանալ: Խոստանում էր մնայուն յիշատակ խորանի վրայ, երբ այլևս կը կարողանար ընծայել Պատարագի Սուրբ Զոհը, նրա համար՝ ով կը դառնար իր քոյրը: Մայր Ագնէսն ինձ ասաց՝ թէ կամենում էր, որ ես լինէի այդ ապագայ առաքեալի քոյրը:

Մայր իմ, երջանկութեանս նկարագրումն անհնարին է: Չսպասուած եղանակով իրագործուած երազանքս ծնեց ինձնում մի ուրախութիւն, որը կամենում եմ կոչել «մանկական», որովհետեւ ստիպուած եմ վերադառնալ մանկութեանս օրերին, գտնելու համար յիշատակն այն այնքա՛ն սրտաբուխ ուրախութիւնների, որոնք իր մէջ պարունակելու համար մարդկային հոգին չափազանց փոքր է թւում: Տարիներից ի վեր չէի ճաշակել այդպիսի երջանկութիւն: Զգում էի, որ այդ տեսակէտով հոգիս դեռ նոր էր, ինչպէս երբ առաջին անգամ լինելով հպուած եմ մինչ այդ մոռացուած երաժշտական գործիքի լարերին:

331. Գիտակցում էի ստանձնածս պարտականութիւնները, ուստի իսկոյն գործի անցայ, ջանալով կրկնապատկել եռանդս: Հարկաւոր է սակայն խոստովանել, որ սկզբում բաւարար միսիթարութիւններ չունեցայ, եռանդս բոցավառելու համար: Մայր Ագնէսին շնորհակալութիւն յայտնելու համար սրտագին ու վեհ գաղափարներով օծուն մի գեղեցիկ նամակ գրելուց յետոյ, իմ երիտասարդ եղբայրը կեանքի ոչ մի նշան այլևս չտուեց մինչեւ յաջորդ տարուայ Յուլիս ամիսը: Նոյեմբերին միայն ուղարկեց իր այցետոմսը, տեղեկացնելու համար, որ զօրագրուած էր բանակ: Աստուած ձեզ էր վերապահել, Մայր իմ, սկսուած գործն իր աւարտին հասցնելու պաշտօնը: Անկասկած, աղօթքով ու գոհողութեամբ է, որ կարող ենք օգնել առաքեալներին, բայց երբեմն, երբ Յիսուս կամենում է իր փառքի համար միացնել երկու հոգի, թոյլատրում է նաեւ, որ ժամանակ առ ժամանակ գաղափարների փոխանակութիւն կատարուի նրանց միջեւ, Աստծոյ սիրոյ մէջ միմեանց առաւել եւս բոցավառելու նպատակով: Բայց սրա համար անհրաժեշտ է հեղինակութիւնների բացայայտ կամքը, որովհետեւ կարծում եմ՝ թէ հակառակ դէպքում նմանօրինակ

<sup>1</sup> Խօսքը վերաբերում է Մորիս Բարթէլլըմէ Բէլիէրին, որն այնժամ Բէյէոյի թեմի նորընծաներից մէկն էր եւ առաքելութեան մեծ ծարաւ ունէր: 1897ի Սեպտ. 29ին, Թերեզայի մահուան նախորդ օրը, ոտք դրեց Ալժիր, ուր պատրաստուած էր ընդունուել Սպիտակ Հայրերի Միաբանութիւն: Աֆրիկայում առաքելութեան մի քանի տարիներից յետոյ, ծանր հիւանդանալով վերադարձաւ Ֆրանսա եւ մահացաւ 1907ի Յուլ. 14ին, երեսուներեք տարեկան հասակում: Թերեզայի նրան ուղղած նամակներից մի քանիսը տե՛ս՝ Յաւելուած Գ.:

նամակագրութիւնը աւելի չարիք կը գործի՝ քան բարիք ... եթէ ոչ առաքեալին, ապա առնուազն կարմեղականին, որի կեանքի կերպը շարունակ յորդորում է իրեն զբաղուել ի՛ր իսկ վարքի բարելամամբ: Հետեւանքում, Տիրոջ հետ աւելի սերտօրէն միանալուն նպաստելու փոխարէն, այդ նամակագրութիւնը, նոյնիսկ հեռուոր, որ նա կը ցանկանայ ունենալ, կը զբաղեցնի իր վանական հոգին: լեռներ ու հրաշալիքներ երեւակայելով, սուրբ եռանդի պատրուակով՝ անօգուտ ցրուածութիւն կը հայթայթի իր համար: Ինչ վերաբերում է ինձ, ինչպէս այս՝ այնպէս էլ միւս բոլոր գործերիս մէջ զգում եմ որպէս անհրաժեշտ պայման. որպէսզի նամակներս բարիք գործեն, պէտք է գրուեն յանուն հնազանդութեան, եւ ես նոյնպէս՝ գրելիս աւելի տհաճութիւն պէտք է զգամ՝ քան սիւստիան: Այս նոյն վարուելակերպի համաձայն առաջնորդուելով, երբ խօսում եմ նորընծայուհիներից որեւէ մէկի հետ, աշխատում եմ անել դա սանձելով իմ անձը, խուսափում եմ նրան այնպիսի հարցեր ուղղելուց, որոնք պարզապէս կը ծառայէին իմ հետաքրքրասիրութեան բաւարարմանը: Եթէ գրուցակիցս սկսում է խօսել մի նիւթի մասին, որն ախորժելի է ինձ, ապա անցնում է մի այլ նիւթի, որն ինձ ձանձրացնում է, առանց աւարտին հասցնելու առաջինը, մեծ ուշադրութեամբ հսկում եմ լեզուիս վրայ, որպէսզի չյիշեցնեմ նրան կիսատ մնացած խօսակցութիւնը, որովհետեւ կարծում եմ, որ ոչ մի բարիք չենք կարող իրականացնել, երբ փնտռում ենք մեր իսկ սեփական անձը:

332. Մայր իմ, տեսնում եմ, որ երբեք չեմ կարողանալու ուղղուել. ահա եւս մի անգամ շեղուեցի յուշերիս շարադրումից ու կրկին սկսեցի ճառախօսել: Ներէք ինձ, աղաչում եմ ձեզ, եւ թոյլատրէք վերսկսել շուտով, որովհետեւ այլ կերպ չեմ կարող: Դուք վարում էք իմ հետ ինչպէս Տէրը, որ չի ձանձրանում ինձ ունկնդրելուց, երբ իրեն ամենայն պարզութեամբ պատմում եմ բոլոր նեղութիւններս ու ուրախութիւններս, կարծես թէ Ինքը արդէն չգիտէ դրանք: Դուք նոյնպէս, Մայր իմ, վաղուց արդէն չէք անգիտանում մտքերս եւ կեանքիս քիչ թէ շատ յիշարժան իրադարձութիւնները. չեմ կարող, հետեւաբար, նորութիւններ հաղորդել ձեզ: Չեմ կարողանում զսպել ժպիտս, երբ մտածում եմ, որ մանրակրկիտ պատմում եմ շատ բաներ, որոնց տեղեակ էք նոյնքան լաւ՝ որքան ես ինքս: Վերջիվերջոյ, Մայր իմ, ես պարզապէս հնազանդում եմ, եւ եթէ այժմ հետաքրքրութիւն չէք գտնում այս էջերի ընթերցման մէջ, թերեւս կը սփոփեն սրանք ձեզ ձեր երկրային կեանքի մայրամուտին, եւ կը ծառայեն ձեր կրակը բորբոքելուն. այսպիսով կորցրած չեմ լինի ժամանակս ... : Բայց զուարճանում եմ մանուկի նման խօսելով. մի՛ կարծէք, Մայր իմ, թէ իմ առջեւ հարց եմ դնում՝ թէ ինչ օգուտ կարող է ունենալ իմ այս խեղճ աշխատանքը: Քանի որ այն կատարում եմ յանուն հնազանդութեան, բաւական է ինձ ինքնըստինքեան, եւ ոչ մի ցաւ չեմ զգայ, եթէ այն դեռ չընթերցած՝ այրէիք աչքերիս առաջ:

333. Ժամանակն է, որ վերսկսեմ հոգեւոր եղբայրներիս պատմութիւնը, որոնք այժմ մեծ տեղ են գրաւում իմ կեանքում: Անցեալ տարուայ Մայիսի վերջերին էր<sup>1</sup>, յիշում եմ, որ մի օր ձեր աշխատասենեակ կանչեցիք ինձ ճաշից առաջ: Սիրտս ուժգին բաբախում էր, երբ ներս մտայ. հարցնում էի ինքս ինձ՝ թէ արդեօք ի՞նչ կարող էր պատահած լինել, որովհետեւ առաջին անգամն էր, որ կանչում էիք ինձ այդպէս: Նստել պատուիրելուց յետոյ, ահա թէ ինչ առաջարկեցիք. «Կ'ուզէի՞ր հոգեւոր հարցերում օգնել մի առաքեալի, որը պատրաստում է ձեռնադրուել եւ

<sup>1</sup> 1896ի Մայիսի 30ին, շաբաթ:

չուտով առաքելութեան մեկնել»<sup>1</sup>: Իսկ յետոյ, Մայր իմ, կարգացիք այդ երիտասարդ վարդապետի նամակը, որպէսզի ես ճշգրիտ իմանայի այն՝ ինչ նա խնդրում էր: Առաջին զգացումս ուրախութիւնը եղաւ, բայց որին իսկոյն յաջորդեց երկիւղը: Փորձեցի բացատրել ձեզ, որ բոլոր արժանիքներս արդէն իսկ նուիրած լինելով մի ուրիշ ապագայ առաքեալի համար, չէի կարող նոյնը կրկնել ուրիշի դիտաւորութեամբ, եւ յետոյ՝ կային ինձնից շատ աւելի սրբակեաց միանձնուհիներ, որոնք կարող էին ընդառաջել իր փափաքին: Բոլոր առարկութիւններս, սակայն, ապարդիւն անցան. պատասխանեցիք՝ թէ կարող էի շատ եղբայրներ ունենալ: Այնժամ հարցրեցի ձեզ՝ թէ արդեօք հնազանդութիւնը չէ՞ր կարող կրկնապատկել իմ արժանիքները: Դրական պատասխանեցիք ու զանազան փաստեր տուեցիք, որոնք ակնյայտ դարձրին, որ առանց խղճահարութեան պէտք է նաեւ այդ առաքեալի հոգեւոր քոյրը լինէի: Հոգուս խորքում, Մայր իմ, համակարծիք էի ձեր հետ, քանի որ «կարմեղականի եռանդը պէտք է ընդգրկի ամբողջ աշխարհը»<sup>2</sup>. յուսով եմ՝ թէ մարդասէրն Աստուծոյ շնորհով օգտակար կը լինեմ երկուսից էլ աւելի առաքեալների, եւ չէի մոռանայ աղօթել բոլորի համար, առանց անտեսելու նաեւ պարզ քահանաներին, որոնց առաքելութիւնը երբեմն նոյնքան դժուարին է՝ որքան անհաւատաներին քարոզող առաքեալներինը: Մի խօսքով, կամենում եմ Եկեղեցու դուստրը լինել, ինչպիսին էր մեր Մայր Սրբուհի Թերեզան<sup>3</sup>, եւ աղօթել Սրբազան Քահանայապետի դիտաւորութիւնների համար, որովհետեւ գիտեմ, որ իր դիտաւորութիւնները պարփակում են ամբողջ տիեզերքը: Ահա՛ կեանքիս ընդհանուր նպատակը, որը, սակայն, չէր արգելի ինձ իւրայատուկ կերպով աղօթել եւ միանալ իմ փոքրիկ թանկագին հրեշտակների<sup>4</sup> գործերին, եթէ քահանայ դարձած լինէին:

Լա՛ւ ուրեմն, ահա թէ ինչպէս եմ հոգեւոր միութեամբ կապուած այն առաքեալներին, որոնց Յիսուս տուեց ինձ որպէս եղբայր. այն ամէնը, որ պատկանում է ինձ, պատկանում է նրանցից իւրաքանչիւրին, զգում եմ, որ մարդասէրն Աստուած այնքան բարի է, որ մասերի չի բաժանում ժառանգութիւնը: Նա այնքան հարուստ է, որ տալիս է, առանց չափի զգացման, այն ամէնը, որ իրենից խնդրում եմ ... : Բայց մի՛ կարծէք, Մայր իմ, թէ խելացնոր մոլեգնութեամբ՝ անվերջանալի թուարկումների մէջ կորցնում եմ ինքս ինձ:

334. Այն օրից ի վեր՝ ինչ ունեմ երկու եղբայրներ եւ իմ փոքրիկ քոյրերը՝ նորընծայուհիները, եթէ կամենայի մանրամասն կերպով խնդրել նրանցից իւրաքանչիւրի համար այն՝ ինչի կարիքը նա ունի, օրերը շատ կարճ պիտի լինէին այդ գործի համար եւ վախենում եմ՝ թէ յանկարծ կը մոռանայի յիշատակել ինչ որ կարեւոր մի բան: Պարզ հոգիները կարիքը չունեն բարդ միջոցների: Եւ քանի որ ես նոյնպէս նրանց թուին եմ պատկանում, մի առաւօտ, գոհութեան աղօթքի պահին Յիսուս տուեց ինձ մի պարզ միջոց, ի կատար ածելու համար ստանձնածս առաքելութիւնը: Շնորհեց ինձ հասկանալ Երգ Երգոցի ահա այս խօսքերը. «Զգիր

<sup>1</sup> Հայր Ադոլֆ Ժան Լուի Ռուլանը Փարիզի Արտաքին Առաքելութիւնների Ընկերութեան նորընծաներից մէկն էր: Քահանայ օծուելով 1896ի Յունիսի 28ին, դէպի Չինաստան մեկնեց յաջորդ տարուայ Օգոստ. 2ին: 1909ին վերադարձաւ Ֆրանսա, ուր վարեց զանազան պաշտօններ: Մահացաւ 1934ի Յունիսի 12ին:

<sup>2</sup> Այս խօսքերը մէջբերուած են Կարմեղոսում շատ սիրուած մի գրքից. *Le Banquet sacré ou l'Idée d'une parfaite carmelite*. Retraite annuelle de dix jours, composée par la Rde Mère JEANNE-MARGUERITE DE LA MISERICORDE, carmelite (Albi, S. Rodière, 1844).

<sup>3</sup> Տե՛ս՝ *Զեռագիր Ա*, 2րդ գլխի թիւ 16 ծանօթագրութիւնը:

<sup>4</sup> Թերեզան ի նկատի ունի իր վաղամեռ երկու եղբայրներին:

ինձ, ընթանանք դէպի անուշահոտ բուրոմը խնկեղէն օծանելիքներով»<sup>1</sup>: Ա՛հ, Յիսուս իմ, ուրեմն անհրաժեշտ չէ նոյնիսկ ասել. «Ձգելով ինձ, ձգիր այն բոլոր հոգիներին, որոնց սիրում եմ»: Այս պարզ բառը, «Ձգիր ինձ», բաւական է: Տէր իմ, հասկանում եմ, երբ ինչ որ մէկը գերւում է Քո հոգեգմայլ հոտաւէտութեան արբեցուցիչ բուրմամբ, չի կարողանում այլեւս միայնակ քայլել. այն բոլոր անձերը, որոնց նա սիրում է, տրամադրւում են հետեւելու իրեն: Եւ սա տեղի է ունենում առանց որեւէ ջանքի կամ ստիպման, այլ բնական հետեւանքն է Քո հանդէպ ունեցած իր գմայլանքի ու ապրուած սիրոյ: Ինչպէս հեղեղածին յորձանքն է անզուսպ մղմամբ թափւում օվկիանոսի մէջ ու իր հետ քշում տանում է այն ամէնն՝ ինչ գտնում է իր ճանապարհին, այնպէս էլ, Յիսուս իմ, այն հոգին, որ խորասուզւում է սիրոյդ անեզր օվկիանի մէջ, քաշում է իր հետ այն բոլոր գանձերը, որոնց տիրում է:

335. Տէր իմ, գիտես, չունեմ ա՛յլ գանձեր, եթէ ոչ միայն՝ այն հոգիները, որոնց կամեցար միաւորել ինձ. այս գանձերը Դու ինքդ վստահեցիր ինձ: Այս իսկ պատճառով, համարձակւում եմ իմը դարձնել այն խօսքերը, որոնք երկնաւոր Հօրն ուղղեցիր վերջին երեկոյեան, որում տեսաւ Քեզ դեռ երկրի վրայ, պանդուխտ եւ մահկանացու: Յիսո՛ւս, Սիրելի իմ, չգիտեմ՝ թէ երբ է վերջանալու աքսորս: Մէկից աւելի երեկոններ այս աքսորում դեռ կը գովերգեմ Քո ողորմութիւնը, բայց վերջիվերջոյ իմ համար նոյնպէս կը գայ վերջին երեկոն: Այդ օրը կ'ուզէի, Աստուած իմ, կարող լինել ասելու. «Ես Քեզ փառաւորեցի երկրի վրայ. կատարեցի այն գործը, որն ինձ տուիր՝ որ անեմ: Քո անունը յայտնեցի այն մարդկանց, որոնց ինձ տուեցիր աշխարհից. Քոնն էին, եւ ինձ տուեցիր նրանց: Հիմա իմացան, որ այն ամէնը՝ ինչ ինձ տուիր, Քեզնից է գալիս, որովհետեւ իրենց հաղորդեցի խօսքերը, որոնք Դու ինձ հաղորդեցիր: Եւ նրանք ընդունեցին եւ հաւատացին, որ Դո՛ւ ուղարկեցիր ինձ: Արդ, ես նրանց համար եմ աղաչում, որովհետեւ նրանք Քոնն են: Ես այլեւս աշխարհում չեմ, բայց նրանք դեռ աշխարհում են. եւ ես դէպի Քեզ եմ գալիս: Սուրբ Հայր, պահիր նրանց Քո Անուան համար, նրանց՝ որոնց տուեցիր ինձ: Բայց այժմ Քո մօտ եմ գալիս եւ այս բաները խօսում եմ աշխարհում, որպէսզի նրանք իրենց մէջ իմ լիակատար ուրախութիւնն ունենան: Չեմ խնդրում Քեզ հանել նրանց աշխարհից, այլ՝ պահել չարից: Նրանք այս աշխարհից չեն, ինչպէս ես նոյնպէս աշխարհից չեմ: Սակայն միայն նրանց համար չէ, որ խնդրում եմ, այլ նրանց խօսքով բոլոր ինձ հաւատացողների համար:

Հայր, ում ինձ տուիր, կամենում եմ, որ ուր ես եմ, նրանք նոյնպէս իմ հետ լինեն, որպէսզի աշխարհն իմանայ, որ սիրում ես նրանց այնպէս՝ ինչպէս սիրում ես ինձ»<sup>2</sup>:

336. Այո՛, Տէր իմ, կ'ուզէի կրկնել այս խօսքերը Քեզնից յետոյ, նախքան այստեղից մեկնելս: Թերեւս յանդգնութի՞ւնն է սա: Ա՛հ ո՛չ, որովհետեւ վաղուց ի վեր թոյլատրել ես ինձ համարձակ, վստահ լինել Քո հետ: Ինչպէս անառակի հայրն էր ասում իր անդրանիկ որդուն, Դու նոյնպէս ասացիր ինձ. «Այն ամէնը, որ իմն է՝ քոնն է»<sup>3</sup>: Քո խօսքերը, Յիսուս, ուրեմն իմն են, եւ ես կարող եմ օգտագործել դրանք, երկնաւոր Հօր շնորհները ինձ միացած հոգիների վրայ հրաւիրելու համար: Բայց, Տէր իմ, երբ ասում եմ, թէ ուր ես եմ լինելու, կամենում եմ, որ այնտեղ լինեն նաեւ նրանք, որոնց վստահեցիր ինձ, սրանով ասել չեմ ուզում, թէ նրանք չեն կարող

<sup>1</sup> Երգ 1, 3

<sup>2</sup> Յվհ 17, 4. 6-26

<sup>3</sup> Ղկա 15, 31

հասնել աւելի մեծ փառքի, քան այն՝ որ կը կամենաս տալ ինձ: Կամենում եմ պարզապէս խնդրել, որ մի օր վերագտնենք միմեանց Քո գեղեցիկ Երկնքում:

Դու գիտես, Աստուած իմ, որ երբեւէ չեմ կամեցել ա՛յլ բան, եթէ ոչ միայն՝ սիրել Քեզ: ուրիշ փառք չեմ տենչում: Սէրդ կանխեց ինձ մանկութեանս օրերից ի վեր, աճեց իմ հետ, եւ այժմ վի՛հ է, որի խորութիւնը չեմ կարողանում չափել: Սէրը ձգում է սիրոյն. այսպիսով, Յիսուս, սէրս դէպի Քեզ է խոյանում, ուզում է լցնել այն անդունդը, որ քաշում է իրեն, բայց աւա՛ղ, նա շատ աւելի չնչին է՝ քան օվկիանոսի անյատակութեան մէջ կորած ցօղի կաթիլը: Սիրելու համար Քեզ այնպէս՝ ինչպէս Դու ես ինձ սիրում, կարիքն ունեմ փոխ առնելու Քո իսկ սէրը. այս դէպքում եմ միայն գտնում հանգիստս: Ա՛հ, Յիսո՛ւս, գուցէ պատրա՞նք է, բայց ինձ թւում է՝ թէ չես կարող լցնել մի հոգի առաւելաչափ սիրով, քան որքան պարզեւել ես իմ հոգիին: Այս իսկ պատճառով համարձակում եմ խնդրել Քեզ «սիրել նրանց՝ որոնց Դու ինձ տուիր, այնպէս՝ ինչպէս սիրում ես ինձ»<sup>1</sup>: Մի օր, Երկնքում, եթէ հասկանամ, որ նրանց աւելի ես սիրում՝ քան ինձ, կը ցնծամ բերկրանքով, այժմ իսկ խոստովանելով, որ այդ հոգիներն ինձնից շատ աւելի արժանի են սիրոյդ: Բայց այստեղ՝ ներքեւում, չեմ կարողանում ըմբռնել սիրոյ աւելի մեծ անհունութիւն, քան այն՝ որ կամեցար շնորհել ինձ ձրի, առանց իմ որեւէ արժանաւորութեան:

337. Մայր իմ թանկագին, վերջապէս վերադառնում եմ ձեզ. ամբողջովին ապշած եմ գրածներիս համար, որովհետեւ դրանք թղթին յանձնելու մտադրութիւնը չունէի: Բայց քանի որ գրուեց, հարկ է՝ որ մնայ: Սակայն, եղբայրներիս պատմութիւնը վերսկսելուց առաջ, կ'ուզէի ասել ձեզ, Մայր իմ, որ ոչ թէ իրենց, այլ փոքրիկ քոյրերիս եմ վերագրում Աւետարանից վերցուած առաջին խօսքերը. «Հաղորդեցի նրանց այն՝ ինչ Դու ինձ հաղորդեցիր»<sup>2</sup>, որովհետեւ ինձ չեմ կարծում առաքեալներ կրթելու ընդունակ. բարեբախտաբար, դեռ բաւական հպարտ չեմ սրա համար: Նմանապէս, ի վիճակի չէի լինի խորհուրդներ տալու քոյրերիս, եթէ դուք, Մայր իմ, որ իմ համար Տիրոջ ներկայացուցիչն էք, չօգնէիք ինձ:

Ընդհակառակն, ձեր թանկագին հոգեգաւակների՝ իմ եղբայրների մասին մտածում էի, երբ գրում էի Յիսուսի այս եւ սրանց հետեւող խօսքերը. «Ձեմ խնդրում Քեզ հանել նրանց աշխարհից ... խնդրում եմ Քեզ նրանց խօսքով բոլոր ինձ հաւատացողների համար նաեւ»<sup>3</sup>: Եւ իրօք, ինչպէ՞ս կարող եմ չաղօթել այն հոգիների համար, որոնց նրանք կը փրկեն իրենց հեռաւոր առաքելավայրերում, տառապանքով ու քարոզչութեամբ:

338. Մայր իմ, կարծում եմ՝ թէ դեռ պէտք է որոշ բացատրութիւններ տամ Երգ Երգոցի «Ձգիր ինձ, ընթանանք» հատուածի շուրջ, որովհետեւ այն՝ ինչ գրել եմ, բաւական անըմբռնելի է թւում ինձ: «Ոչ ոք, – ասում է Յիսուս, – չի կարող հետեւել ինձ, եթէ նրան չձգի Հայրը, որ ուղարկեց ինձ»<sup>4</sup>: Ապա, վեհամաստ առակների շնորհիւ, բայց յաճախ նաեւ առանց օգտագործելու ժողովրդին ընտանի այդ միջոցը, նա յայտնում է մեզ, որ բաւական է բախել, որպէսզի մեր առաջ բացուի, փնտռել՝ գտնելու, եւ խոնարհաբար խնդրել՝ ստանալու համար<sup>5</sup>: Ինչպէս նաեւ ասում է՝ թէ ինչ խնդրենք Հօրից Իր անունով, կը տայ մեզ<sup>6</sup>: Այս պատճառով

<sup>1</sup> Յվհ 17, 23

<sup>2</sup> Յվհ 17, 7

<sup>3</sup> Յվհ 17, 15-20

<sup>4</sup> Յվհ 6, 44

<sup>5</sup> Հմմտ. Մտթ 7, 7-8

<sup>6</sup> Յվհ 16, 23

էր անկասկած, որ Սուրբ Հոգին, Յիսուսի ծննդից առաջ, նահապետին թելադրեց մարգարէական այս աղօթքը. «Զգիր ինձ, ընթանանք ... »:

Ի՞նչ է, սակայն, նշանակում ձգուածութիւն, եթէ ոչ՝ սերտօրէն միանալ նրան, ով առինքնում է մեր սիրտը: Եթէ կրակն ու երկաթը բանական լինէին, եւ այս վերջինն ասէր առաջինին. «Զգիր ինձ», չէ՞ր փաստի արդեօք՝ թէ կամենում է նոյնանալ կրակի հետ, այնպէս՝ որ նա ներթափանցի իր մէջ, պատի իրեն իր այրող էութեամբ եւ թուայ մէկ միասնութիւն իր հետ: Մայր իմ թանկագին, ասա իմ աղօթքը. ինդրում եմ Յիսուսին ձգել ինձ իր սիրոյ կրակների մէջ, միաւորել ինձ իրեն այնքան սերտօրէն, որ նոյն ինքը ապրի ու գործի իմ մէջ: Զգում եմ, որ սիրոյ կրակը որքան աւելի հրկիզի սիրտս, այնքան աւելի կը գոչեմ. «Զգիր ինձ», եւ այնքան աւելի հոգիները, որ կը մօտենան ինձ (որ մետաղի ողորմելի չնչին թափօն եմ միայն, եթէ հեռանամ աստուածային հնոցից), իրենք նոյնպէս ճեպընթաց կը սլանան Սիրեցեալի անուշահոտ բուրմունքների ետեւից, որովհետեւ սիրով բոցավառուած հոգին չի կարող անգործ մնալ: Անշուշտ, մնում է Յիսուսի ոտքերի առաջ, ինչպէս Սրբուհի Մագդաղենացին, ունկնդրում է Նրա քաղցրիկ ու հրաշունչ խօսքերը: Նոյնիսկ եթէ թւում է՝ թէ ոչինչ չի տալիս, իրականում, սակայն, տալիս է շատ ու շատ աւելի՝ քան Մարթան, որ մտահոգւում էր, զբաղւում զանազան գործերով, եւ նոյնիսկ պահանջում, որ քոյրը նոյնպէս իրեն նմանուի<sup>1</sup>: Յիսուս չի պիտարակում Մարթայի աշխատանքը. իր երանաշնորհ Մայրը իր ամբողջ կեանքի ընթացքում խոնարհաբար զբաղուեց այդ նոյն աշխատանքով, որովհետեւ պէտք է հոգար Սուրբ Ընտանիքի տնային գործերը: Կամեցաւ, սակայն, ուղղման ենթարկել իր խանդավառ հիւրընկալի չափազանց մտահոգութիւնը<sup>2</sup>: Բոլոր Սրբերը հասկացել են սա, եւ յատկապէս նրանք, թերեւս, որոնք շքեղօրէն զարդարեցին տիեզերքը Աւետարանի վարդապետութեան շողարձակմամբ: Մի՞թէ աղօթքի շնորհիւ չէ, որ այնպիսի Սրբեր, ինչպիսիք են Պօղոսը, Օգոստինոսը, Յովհաննէս Խաչը, Թովմաս Աքուինացին, Ֆրանչիսկոսը, Դոմենիկոսը եւ Աստուծոյ հուշակաւոր միւս բոլոր բարեկամները հաղորդակից դարձան աստուածային գիտութեանը, որ ներշնչարանն է ամենամեծ հանճարների: Գիտնականներից մէկն ասել է. «Տուէք ինձ մի լծակ, յենման մի կէտ, եւ ես վեր կը բարձրացնեմ երկրագունդը»: Այն՝ ինչ Արքիմեդը չկարողացաւ ի կատար ածել, որովհետեւ իր մտքերն ուղղուած չէին առ Աստուած, այլ արտայայտուած էին սոսկ նիւթական տեսանկիւնից դիտուած, լիուլի իրագործեցին Սրբերը: Ամենակարողը նրանց որպէս յենման կէտ տուեց իրեն եւ միայն իրեն, որպէս լծակ՝ աղօթքը, որ հրդեհում է սիրոյ կրակով, եւ այսպիսով նրանք վեր բարձրացրին աշխարհը. այսպիսով այդ աշխարհը շարունակում են վեր բարձրացնել Եկեղեցու ներկայ Սրբերը, եւ այն դեռ վեր կը բարձրացնեն Սրբերն ապագայ, մինչեւ աշխարհի վախճանը:

339. Թանկագին Մայր իմ, այժմ կ'ուզէի մի քանի տող աւելացնել, բացատրելու համար՝ թէ ինչ եմ հասկանում ասելով «Սիրեցեալի անուշահոտ բուրմունք»: Քանի որ Յիսուս համբարձաւ Երկինք, կարող եմ հետեւել իր հետքերին միայն. բայց դրանք հետքեր են այնքա՛ն լուսեղէն, այնքա՛ն օծուն ու բուրումնաւէտ: Հագիւ եմ հայեացքս ուղղում Սուրբ Աւետարանին, սկսում եմ զմայլուել ու վայելել բուրումը Յիսուսի կեանքի, եւ հասկանում եմ՝ թէ ճանապարհի որ կողմով քայլեմ: Զեմ շտապում գրաւելու առաջին տեղը, այլ ուղղում եմ դէպի վերջինը. փոխանակ առաջ

<sup>1</sup> ՂԿ 10, 38-42

<sup>2</sup> Այս տողից սկսած, Սրբուհին գրում է մատիտով, որովհետեւ այլեւս ի վիճակի չէ բռնելու գրիչը: Յուր. Տին նա վերջնականապէս թողել էր իր խոցը եւ փոխադրուել էր հիւանդների բաժին, ուր էլ, ի գին մեծ ջանքերի, գրեց ինքնակենսագրութեան վերջին տողերը:

նետուելու փարիսեցու հետ, կրկնում եմ, վստահութեամբ լի, մաքսաւորի խոնարհ աղօթքը<sup>1</sup>: Բայց բոլորից աւելի, հետեւում եմ Մագդաղենացու օրինակին: Նրա զարմանահրաշ, կամ աւելի ճիշտ՝ սիրով լի վստահութիւնը, որ հիացում է պարգեւում Յիսուսի Սրտին<sup>2</sup>, հմայում է ինձ: Այո՛, շատ լաւ եմ զգում, որ նոյնիսկ եթէ խղճիս վրայ ունենայի հնարաւոր բոլոր մեղքերը, կը գնայի՝ գղջումով տրորուած սրտով նետուելու Յիսուսի գիրկը, որովհետեւ գիտեմ՝ թէ՛ Նա որքան է սիրում անառակ որդուն, որ վերադառնում է իր մօտ: Իր նախախնամ ողորմութեամբ անձս մահացու մեղքից ազատելու համար չէ, որ դէպի Ինքն եմ ընթանում վստահութեամբ ու սիրով<sup>3</sup>:



---

<sup>1</sup> Ղկս 18, 9-14

<sup>2</sup> Ղկս 7, 36-50

<sup>3</sup> Այս խօսքերից յետոյ մատիտը նոյնպէս ընկնում է Սրբունհու ձեռքից: Սիրոյ հուրը լրման կէտին է հասցնում հիւանդութեան քայքայիչ գործունէութիւնը, եւ նա, 1897ի Սեպտ. 30ին, ժամը 19<sup>30</sup>ին, 24 տարեկան հասակում վերջացնում է իր մարտիրոսական ընթացքը, սիրոյ վսեմ յափշտակութեան մէջ (տե՛ս՝ Վերջին Խօսքը, 30 Սեպտ.):